

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ
YEREVAN STATE UNIVERSITY

ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА
ПРАВОВЕДЕНИЕ
BULLETIN OF YEREVAN UNIVERSITY
JURISPRUDENCE

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ
SOCIAL SCIENCES

№ 2 (26)

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ИЗДАТЕЛЬСТВО ЕРЕВАНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА
YEREVAN STATE UNIVERSITY PRESS

ԵՐԵՎԱՆ - 2018

«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ»
«БАНБЕР ЕРЕВАНИ АМАЛՏԱՐԱՆԻ. ՔՐԱՎՈՎԵԴԵՆԻԵ»
«BANBER YEREVANI HAMALSARANI. JURISPRUDENCE»

Գլխավոր խմբագիր՝ Միրզոյան Հ. Ղ.

Խմբագրական խորհուրդ.

Անտոնյան Յու. Մ. (*Մոսկվա*), Ավետիսյան Լ. Վ. (*գլխ. խմբագրի տեղակալ*),
Գաբրույան Ա. Հ. (*պատասխ. խմբագիր*), Գոնչար Ն. Ա. (*գլխ. խմբագրի տեղա-
կալ*), Գևորգյան Կ. Ա., Դյուրան Բեռնարդ (*Մոնպելյե*), Խաբրիևա Տ. Յա.
(*Մոսկվա*), Կուրի Հելմուտ (*Ֆրայբուրգ*), Հարությունյան Գ. Գ.,
Հովակիմյան Ա. Է. (*պատասխ. քարտուղար*), Ղազինյան Գ. Ս., Մեղրյան Ս. Գ.,
Յակովլև Վ. Ֆ. (*Մոսկվա*), Միմոնյան Ա. Հ.

Главный редактор: Мирзоян Г. К.

Редакционная коллегия:

Аветисян Л. В. (*зам. главного редактора*), Айкянц А. М., Антонян Ю. М. (*Москва*),
Арутюнян Г. Г., Габузян А. А. (*ответ. редактор*), Геворкян К. А., Гончар Н. А.
(*зам. главного редактора*), Дюран Бернард (*Монпелье*), Казинян Г. С., Кури Хель-
мут (*Фрайбург*), Мегрян С. Г., Овакимян А. Э. (*ответ. секретарь*), Симонян А. Г.,
Хабриева Т. Я. (*Москва*), Яковлев В. Ф. (*Москва*)

Editor-in-chief: Mirzoyan H. Gh.

Editorial Board:

Antonyan Yu. M. (*Moscow*), Avetisyan L. V. (*Deputy editor-in-chief*), Duran Bernard
(*Montpellier*), Gabuzyan A. H. (*Managing Editor*), Gevorgyan K. A., Ghazinyan G. S.,
Gonchar N. A. (*Deputy editor-in-chief*), Harutyunyan G. G., Haykyants A. M., Nova-
kimyan A. E. (*Executive Secretary*), Khabrieva T. Ya. (*Moscow*), Kury Helmut
(*Freiburg*), Meghryan S.G., Simonyan A. H., Yakovlev V. F. (*Moscow*)

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՍՄԲԱՏ ՍՊԱՐԱՊԵՏԻ ԵՎ ՄԽԻԹԱՐ ԳՈՇԻ ԴԱՏԱՍՏԱՆԱԳՐՔԵՐԻ ՆՄԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ԻՐԱՎԱԳԻՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ԱՐԹՈՒՐ ՎԱՂԱՐՇՅԱՆ

Կիլիկիայի թագավորությունն իր տնտեսական և քաղաքական բարձունքին հասավ XII դարի վերջին: Կենտրոնացված պետական իշխանության պայմաններում առաջանում էր միասնական օրենսդրության կարիքը: Մինչ այդ հասարակական կարգավորման նորմատիվ իրավական պահանջումները բավարարում էին գործող սովորույթները, Հայոց կանոնագիրքը, թագավորական դրվագային ակտերը, ինչպես նաև հարևան պետությունների իրավական ձևերի փոխառումը (իրավական ռեցեպցիան):

Գրավոր իրավունքի անհրաժեշտության խնդրի լուծման առաջին քայլը Ներսես Լամբրոնացու օտար օրենքների հայերեն թարգմանություններն էին¹: Սմբատ Սպարապետը ևս իր իրավաբանական գործունեությունն սկսեց խաչակիր թագավորությունների դատաստանագրքերի թարգմանությամբ²: Մակայն դրանով իրավական կարգավորման միասնականացման և արդարադատության խնդիրները չէին լուծվում:

Նորմատիվ ձևերի բազմազանությունն առաջացրել էր իրավական դրույթների կոլիզիաներ, որի անխուսափելի հետևանքն անհատական իրավական գործերով ընդունված որոշումների հակասականությունն ու տարբերություններն էին: Մյուս կողմից, փոխառված իրավական օտար ձևերը՝ օրենքները, անհարիր էին հայ սովորույթային և կանոնական իրավունքին, հետևաբար նաև հասարակական-քաղաքական պայմաններին: Այսպիսով, հասունացել էր արդեն առկա իրավական բազմաթիվ ձևերի համակարգման անհրաժեշտություն՝ կողիֆիկա-

¹ Կիլիկիան մինչև անկախանալը եղել էր Բյուզանդական կայսրության պրովինցիա, որի հետևանքով կիլիկյան իրավական մշակույթ էին ներթափանցել բյուզանդական իրավունքի աղբյուրները: Դա հաստատվում է «Էկոլոգիայի», «Զինվորական օրենքների», «Քաղաքային օրենքի», կայսրուհի Իրինայի վկաների և վկայությունների մասին նովելի, «Պրոխիրոն»-ի որոշ հատվածների հայերեն թարգմանությամբ: Ընդունված տեսակետի համաձայն՝ առաջին երեքի թարգմանությունը կատարել է Ներսես Լամբրոնացին XII դ. վերջերին:

² Բացի հունաբյուզանդական օրենքներից՝ Կիլիկիայում փոխառել են նաև խաչակիր կաթոլիկ իշխանությունների դատաստանագրքերը, մասնավորապես՝ Երուսաղեմի և Անտիոքի ասսիզները: Ենթադրվում է, որ «Անտիոքի ասսիզները» ընդունվել են Բռնեմունդ IV-ի օրոք (1201-1235): Սմբատ Սպարապետն այն հայերեն է թարգմանել ենթադրաբար մինչև 1265 թ., այսինքն՝ մինչև հայկական դատաստանագրքի կազմումը: «Անտիոքի ասսիզները» մեր օրեր են հասել միայն հայերեն թարգմանությամբ:

ցիայի միջոցով: Այդ խնդիրը լուծեց Սպարապետը, կազմելով իր դատաստանագիրքը: Ենթադրվում է, որ նա իր կողիֆիկացիան ավարտել է 1265 թ.:

Սմբատ Սպարապետի դատաստանագրքի ձեռագրերն ունեն կա՛մ «Յաղագս դատաստանաց թագաւորաց» (թագավորների օրենքներ), կա՛մ էլ «Եկեղեցականների և աշխարհիկների ընդհանուր օրենքները և կանոնները» վերնագրերը: Դատաստանագիրքը բաժանված է յոթ բաժինների, այնուհետև հոդվածների, որոնք ձեռագրերում համարակալված են հայկական տառերով (դրանց թիվը գանազան ձեռագրերում տարբեր է):

Դատաստանագիրքը կարգավորում էր թագավորի և նրա վասալների կարգավիճակը, հարաբերությունները ավատատերերի և գյուղացիների միջև, ժառանգական, քաղաքացիական, ընտանեկան, քրեական հարաբերությունները, ինչպես նաև պարունակում էր եկեղեցական (կանոնական) նորմեր: Իր բնույթով այն միջնադարյան, ավատատիրական, դասային, կրոնականացված դատաստանագիրք է:

Ս. Սպարապետի դատաստանագրքի հետազոտողները նկատել են, որ Մխիթար Գոշի դատաստանագրքից այն տարբերվում է նաև նրանով, որ «բացահայտ և աներկմիտ կերպով ազդարարվում են ֆեոդալների և մյուս սեփականատերերի դասակարգային և դասային արտոնություններն ու առավելությունները և միաժամանակ ընդգծվում է ճորտերի և մյուս շահագործվողների իրավազրկությունը»³: Նրանք այս տարբերությունը ներկայացնում էին մարքսիստական տնտեսական-դասակարգային տեսության դիրքերից՝ ընդգծելով Կիլիկիայի թագավորության առավել դասակարգային բնույթը: Մակայն դա հիմնականում կարելի է բացատրել Արևելյան Հայաստանի ու Կիլիկիայի աշխարհաքաղաքական և դրանով պայմանավորված՝ սոցիոնորմատիվ միջավայրերի տարբերություններով:

Արևելյան Հայաստանը գտնվում էր մահմեդական գերիշխանության տակ, որի իրավական կարգավորման նորմատիվ համակարգը, բացի կրոնականից, չգիտեր դասային բաժանում կամ այլ հիմքերով խտրականություն: Հետևաբար, Ս. Գոշն իր դատաստանագրքում չէր կարող հստակ ընդգծել հայկական ավատատիրության դասային սկզբունքները: Դրան հակառակ՝ Կիլիկիան անկախ պետություն էր, որի անմիջական հարևաններից շատերը եվրոպական ավատատիրական կարգերով կառուցված պետություններ էին, ուստի այստեղ չկային դասակարգային-դասային տարբերությունների իրավական շեշտադրման քաղաքական-գաղափարական խոչընդոտներ:

Սմբատ Սպարապետի կողիֆիկացիայի համար իրավական ուղղորդիչ աղբյուրներ են ծառայել հայոց սովորութային իրավունքը, թա-

³ Ա. Թ. Թովմասյան, Հին և միջնադարյան հայ իրավունք (Աղբյուրների տեսություն: Հանցագործություն: Պատիժ), Եր., 1962, էջ 155-156:

գավորական իրավունքը, Հայոց կանոնագիրքը և, ենթադրվում է, նաև Մխիթար Գոշի դատաստանագիրքը:

Հայագիտության մեջ վիճելի է Մ. Գոշի և Ս. Սպարապետի դատաստանագրքերի հարաբերակցության խնդիրը: Այդ առիթով հետազոտողների տեսակետները բաժանվում են չորս խմբի: **Առաջին խումբը**՝ Ղևոնդ Ալիշանը, Վահան Բաստամյանցը, Իոսիֆ Կարստը, հիմնավորում է, որ Սմբատի դատաստանագիրքն ինքնուրույն չէ, այլ ընդամենը Մխիթար Գոշի դատաստանագրքի թարգմանությունն է Կիլիկիայում գործածվող հայերենով: **Երկրորդ խումբը**՝ Մորգանը, Արսեն Ղլտճյանը, համարում է, որ Սմբատ Սպարապետի դատաստանագիրքը Մխիթար Գոշի դատաստանագրքի ոչ թե թարգմանությունն է, այլ համառոտ շարադրանքը: **Երրորդ խումբը**՝ Մանուկ Աբեղյանը, Խաչիկ Սամուելյանը, Գրիգոր Միքայելյանը, գտնում է, որ ճիշտ է, Մխիթար Գոշի դատաստանագիրքը համարվում է Սմբատ Սպարապետի դատաստանագրքի հիմնական աղբյուրը, սակայն Գունդստարլն իր դատաստանագրքում մտցրել է էական փոփոխություններ ու լրացումներ՝ հարմարեցնելով դրանք Կիլիկիայի հասարակական-քաղաքական պայմաններին: **Չորրորդ** տեսակետը հիմնավորում է Ա. Գալստյանը՝ գտնելով, որ, իրոք, դրանց «... շատ հոդվածներ նման են իրար, բայց երկու դատաստանագրքերի հոդվածների այդ նմանությունները ոչ թե Սմբատի գործի Գոշի դատաստանագրքի թարգմանություն լինելու վարկածով պետք է բացատրել, այլ այն բանով, որ ինչպես Սմբատը, այնպես էլ Գոշը, իրենց օգտագործած նյութերը վերցրել են միևնույն աղբյուրներից, և մեկը մյուսից անկախ՝ հղել, մշակել ու հարմարեցրել իրենց ժամանակի սոցիալ-քաղաքական և իրավական պայմաններին»⁴: Ա. Գալստյանի կարծիքով՝ Սմբատն անտեղյակ էր Մ. Գոշի դատաստանագրքի մասին: Պաշտպանելով «իրենց օգտագործած նյութերը միևնույն աղբյուրներից վերցնելու» տեսակետը՝ Ա. Գալստյանը, սակայն, չի խորացնում այս միտքը, հատուկ կանգ չի առնում այդ երկու դատաստանագրքերի համար միասնական աղբյուրների վերլուծության վրա:

Այսպիսով, հայ իրավունքի պատմության հետազոտողները նկատել են, որ երկու դատաստանագրքերի հոդվածների մեծ մասի միջև գոյություն ունի զարմանալի նմանություն, իսկ երբեմն նաև՝ բառացի նույնություն⁵: Այս փաստը, իհարկե, տարօրինակ է, որի՝ որպես գիտական խնդրի լուծումը հառնում է հայագիտության առջև: Փորձենք առաջ քաշել և հիմնավորել այդ խնդրի լուծման մեր վարկածը՝ օգտագործելով առավելապես իրավաբանական, քան պատմաբանասիրական դա-

⁴ **Սմբատ Սպարապետ**, Դատաստանագիրք, հավաքական տեքստը, ռուսերեն թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագր. Ա. Գալստյանի, Եր., 1958, էջ 159:

⁵ Տե՛ս **Էմ. Պիվազյան**, Մխիթար Գոշի և Սմբատ Սպարապետի դատաստանագրքերի առնչակցությունը, «Բանբեր Մատենադարանի», 1960, թիվ 5:

տողություններ ու հիմնավորումներ:

Ակնհայտ է, որ իրավաստեղծագործությունը և հատկապես կողի-ֆիկացիան ստեղծագործական աշխատանք է: Սակայն, ի տարբերություն գեղարվեստական ստեղծագործության, այն լրիվ ազատ չէ, այլ պայմանավորված է առաջին հերթին գործող իրավական ձևերի, այն է՝ օրենքների, իսկ այնուհետև և անպայմանորեն տվյալ պահին առկա օբյեկտիվ իրողության՝ հասարակական հարաբերությունների բովանդակությամբ: Անհնար է, որ երկու բանաստեղծ միևնույն երևույթը ստեղծագործաբար ներկայացնեն գրեթե լրիվ համընկնող բովանդակությամբ: Եթե կա տեքստի նույնություն կամ նմանություն, ուրեմն առաջանում է հեղինակներից մեկի՝ մյուսի մտքերից օգտվելու կասկածը: Սակայն իրավական ոլորտում երկու իրավաստեղծների համար իրավական ձևերի, հասարակական կյանքի օրինաչափությունների, ինչպես նաև իրավատեխնիկական կանոնների չափորոշիչային պայմանների նույնականությունը, ընդ որում՝ դրանց հետևելու պարտադիրությունը անխուսափելիորեն առաջացնելու է ստեղծվող օրենքների նմանություն, երբեմն նաև նույնականություն:

Երկու դատաստանագրքերի առաջին և հետագա հիմնական հետազոտողները եղել են բանասերներ ու պատմաբաններ: Այդ փաստը քննարկման առարկայի տեսանկյունից ունի դրական և բացասական կողմեր: Բացասականն այն է, որ բանասերները իրավաստեղծագործությունը նմանեցնում են գեղարվեստական ստեղծագործության, և բովանդակության նմանությունը նրանց վրա թողնում է օգտվելու (արտագրության) տպավորություն (Վ. Բաստամյանց): Այնինչ պետք է նկատի ունենալ, որ իրավաստեղծագործությունը ձևականացված, չափորոշված գործունեություն է, հետևաբար՝ բովանդակային չափորոշիչների դեպքում հնարավոր է արդյունքների նմանություն: Սակայն այդ նույն բանասերների քննությունները ցույց են տալիս, որ համընկնումները զարմանալիորեն շատ են, իսկ հաճախ էլ բառացիորեն նույնը: Այս հանգամանքը հուշում է առաջադրելու երկու վարկած՝ կա՛մ մեկի մյուսից կրած ազդեցության, կա՛մ էլ երկուսի կողմից մեկ հիմնական իրավական ձևի՝ արդեն եղած օրենքի (դատաստանագրքի) որպես աղբյուր օգտագործելու փաստը: Փորձենք վերլուծել այս երկու վարկածներից ամեն մեկի հավանականությունը:

Ս. Սպարապետը հայտնի է որպես բարոյական և հավատավոր անձ: Դատաստանագրքի ներածությունից բխում է, որ նման նկարագրի տեր անձը Ս. Գոշի դատաստանագրքից օգտվելու դեպքում անպայման կհիշատակեր դա: Սակայն այդպիսի խոստովանություն մենք չենք նկատում: Գոշը չէր կարող արտագրել Սմբատից, որովհետև ապրել և ստեղծագործել է ավել վաղ: Դա հիմք է տալիս առաջ քաշելու երկու ենթավարկած:

Առաջին՝ երկուսն էլ՝ ն՝ Մ. Գոշը, ն՝ Ս. Մպարապետը, օգտվել են միևնույն աղբյուրից, որի մասին Սմբատն ուղղակի նշում է՝ անվանելով դա «հին եւ ի դժարաբառ եւ յանհասկընալի դատաստանագիրք»։ Գոշն ուղղակի հղում այդ դատաստանագրքին չի տալիս, սակայն անուղղակիորեն նկատվում է այդ աղբյուրի ազդեցությունը⁶։ Դատաստանագրքի խմբագրություններից մեկում Գոշը իր օգտագործած իրավական աղբյուրներից առաջին տեղում դնում է «բնավորական օրենքը»՝ հստակ բացատրելով. «... հաւատարիմ համարիմք առնուլ եւ ի բնաւորական օրինացն, որովք վարեցան հեթանոսք, զի զգոդս, եւ զսպանոդս, եւ զամենայն չարագործս դատել ուսան»⁷։ Մ. Գոշի օգտագործած այս իրավական աղբյուրի վերաբերյալ կան տարբեր կարծիքներ, որոնցից ամենաճշգրիտը երևի թե Ա. Սուքիասյանի մոտեցումն է, ըստ որի՝ այստեղ Գոշը նկատի ունի բացառապէս սովորութային իրավունքը։ Անշուշտ, Գոշի կողիֆիկացիայի համար մեթոդական ուղեցույց էր նաև բանավոր սովորութային իրավունքը։ Բայց դատաստանագրքի այդ հոդվածի և մի շարք այլ հոդվածներում օգտագործված ձևակերպումները հիմք են տալիս պնդելու գրավոր օրենքից օգտվելու փաստը։ Օրինակ՝ Մ. Գոշի դատաստանագրքի «Նախաբան»-ի հենց 1-ին հոդվածի առաջին նախադասությունը՝ «Նախնիները դատաստան անելու համար գրություններ թողեցին ...»⁸։ Այդ գրությունները կարող էին լինել միայն հեթանոսական շրջանից եկած, ինչը հաստատում է նախադասության վերջում նրա այն միտքը, թե՛ տեսեք՝ նույնիսկ հեթանոսները անառակ զավակին պատժում էին ինչպես բոլոր ժամանակներում։ Եթե հանկարծ դա լիներ քրիստոնեական շրջանի ինչ-որ օրենք, համոզված եղեք, որ Գոշն այդ մասին կխոսեր ավելի մանրա-

⁶ Մ. Գոշն օգտագործել է մի ամբողջ շարք աղբյուրներ, որոնց մասին ինքն ուղղակի նշում է։ Դատաստանագրքի «Նախադրություն» բաժնի 10-րդ գլուխն սկսվում է այսպես. «Հանդերձեալ մեր գրով դրոշմել զիրս դատաստանի՝ պարտ է ցուցանել թէ յո՞րոց գրոց կամ յո՞րոց ազգաց հաւաքենք զսա, զի ճշմարտութիւնն յայտնեսցի եւ մի՞ ոք գայթակղեսցի թէ մեք մերովք մտացածին բանիւք գրենք զսա»։ Այնուհետև Գոշը թվարկում է իր օգտագործած աղբյուրներից հիմնականները, որոնք հինգն են. ա) «բնաւորական» օրենք, բ) մահմեդական օրենքներ, գ) զանազան քրիստոնյա ազգերի օրենքներ և իրավաբանական ավանդույթներ, դ) Աստվածաշունչը՝ Հին և Նոր Կտակարանները, և նամանավանդ մովսիսական Հնգամատյանը, ե) հայ կանոնական իրավունքը։

⁷ Հետազոտողների մի մասը այստեղ օգտագործված «բնավորական» եզրույթը հասկանում է որպես բնական իրավունք։ Այդ և նրա դատաստանագրքի տարբեր խմբագրություններում զանազան տեղերում օգտագործված «ի բնութիւն մարդոյն», «բնութեան օրինաց», «ի բնութենէ», «բնաւորական է ամենեցուն» ձևակերպումները նրանց հիմք են տալիս կարծելու, որ Գոշը խոսում է ոչ միայն սովորույթի, այլև մարդուն բնորոշ հատկության մասին, այսինքն՝ Գոշը նկատի ունի նաև բնական իրավունքը. մարդկային բանականությունից ու բնությունից կամ գերբնական ուժերից բխող, դրական իրավունքի համեմատ անչափ բանական, իդեալական և արդարացի իրավունք, որը տակավին չի գործում, բայց որն անհրաժեշտաբար պետք է գործի (տե՛ս օրինակ **Ա. Թ. Թովմասյան**, նշվ. աշխ., էջ 133)։

⁸ **Մխիթար Գոշ**, Դատաստանագիրք, Գ խմբագրություն, Փոխադրությունը և համակարգչային ձևավորումը Մաքսիմ Ոսկանյանի, Եր., 2001, գլուխ Ա, էջ 8։

մասն: Բայց նա օգտագործում է «նախնիների թողած դատաստան անելու գրություններ» ընդհանուր արտահայտությունը: Հնարավոր է նման կանխամտածված անտեսում: Դա ոչ թե հնարավոր էր, այլ պարտադիր կարգ՝ մինչքրիստոնեական մշակույթի մասին չհիշատակել: Այդ փաստը հաստատվում է հենց երկու դատաստանագրքերի մի քանի հոդվածներով, որոնք կռապաշտների համար սահմանում են տարբեր տեսակի արգելքներ, օրինակ՝ «Իսկ այն հոգևորականը, ով որ կրե-րի կռապաշտական գիրք, թող կարգալույծ արվի»:

Երկրորդ վարկածն այն է, որ Մ. Սպարապետն օգտվել է Մ. Գոշի դատաստանագրքից, սակայն այդ ձեռագիր օրինակում նշված չի եղել, որ այն կազմողը Մ. Գոշն է, ինչի պատճառով էլ Սմբատն այդ մասին չի նշել: Երկրորդ վարկածը հավանական է, եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ Հայոց կանոնագրքին հղումներ անելիս Սմբատը նույնիսկ մատնանշում է կանոնախմբի հեղինակին, եթե դա սուրբ հայրերից որևէ մեկին է պատկանում, օրինակ՝ ս. Սահակին: Հետևաբար, եթե նա իմանար հայալեզու դատաստանագրքի հեղինակին, ապա անպայման կհիշատակեր նաև նրան: Այստեղ, սակայն, պետք է նկատի ունենալ, որ Մ. Գոշի դատաստանագրքի շարադրանքն ավարտելուց հետո անցել էր ընդհամենը մոտ հիսուն տարի: Եթե նկատի ունենանք այն ժամանակների գրվածքների պատրաստման և տարածման եղանակը, ապա կարող ենք հիմնավորել, որ քիչ հավանական է, որ Մ. Գոշի դատաստանագիրքն արդեն ուներ այնքան ընդօրինակված և խմբագրված տարբերակներ, որոնցից մեկում նշված չէր հեղինակի անունը: Ավելի շատ հավանական է, որ Մ. Գոշի դատաստանագիրքը դեռ չէր հասել Կիլիկիա:

Արված վերլուծությունը հաստատում է, որ երկու դատաստանագրքերի բովանդակության նույնությունների ու նմանությունների պատճառն այն է, որ երկուսի հեղինակներն էլ օգտվել են միևնույն աղբյուրներից, որոնցից մեկը եղել է հին հայկական աշխարհիկ դատաստանագիրք: Ի՞նչ աղբյուր, օրենք, դատաստանագիրք կարող էր լինել դա. ամենայն հավանականությամբ՝ հեթանոսական շրջանի հայոց ինչ-որ դատաստանագիրք էր, որից երկուսն էլ օգտվել են, սակայն քրիստոնեական մոլեռանդության ավանդական մտածողության ազդեցությամբ համառորեն թաքցրել են այդ փաստը: Հայ իրականությունը լի է հեթանոսական շրջանի մշակույթի նկատմամբ այդպիսի վերաբերմունքի բազմաթիվ օրինակներով:

Որ բնօրինակ է ծառայել հին հայերենով ձեռագիր դատաստանագիրք, հաստատվում է հենց իր՝ Մ. Սպարապետի խոսքերով. «Առ որս ես Սմբատս անարժան եւ մեղաւոր ծառայս Աստուծոյ, Որդի Կոստանդեայ թագաւորահար եւ եղբայր բարեպաշտ թագաւորին Հայոց Հեթմոյ, բազում աշխատանաւք աշխատեցայ ի դատաստանագիրքս ծերա-

ցեալ մտաւք, վասն զի այլակերպած էր եւ հեռացած ի հին հայ բառէն ի նորոյս՝ հայնց որ իսկի չէին ի հասկնալ, եւ ոչ յօկտել գայր: Եւ ես բազում աշխատութեամբ փոխեցի զսա ի հին եւ ի դժարաբառ եւ յանհասկընալի գրոց ի մեր հեշտալուր եւ ի սովորական բառս ի թըւականութեանս Հայոց ՉԺԴ ամին՝ ի հայրապետութեան Տեառն Կոստանդէայ եւ ի թագաւորութեան բարեպաշտին Հեթմոյ եւ որդոյ սորա Լեւոնին»:

Սմբատն ուղղակի թարգմանել է այդ դատաստանագրքի աշխարհիկ կանոնները, իսկ եկեղեցական հարաբերությունների ոլորտի նորմերը «փոխադրելիս» մեծ աշխատանք է կատարել, որպէսզի գտնի դրանց համապատասխանող նորմերն արդէն գրավոր ձև ունեցող հայոց կանոնական իրավունքում: Այդ են վկայում Սմբատի կողմից բազում հոդվածներում օգտագործվող հետևյալ հղումները. «Այս օրենքը գրել է ս. Սահակը», «Ես՝ Ս. Սպարապետս, որոնել եմ այս կանոնը և գտել...», «Մենք կարճ շարադրում ենք ս. Սահակի վանական կանոնադրությունը», «Այս մասը, ինձ՝ Ս. Սպարապետիս՝ այս տողերի հեղինակիս դժվար էր գրել, քանի որ այդ մասին ավելի մանրամասն գրել է ս. Սահակը՝ ելնելով Հին և Նոր Կտակարաններից» և այլն: Այդպիսով, Սմբատը թվարկում է Հայոց կանոնագրքի տասնյակից ավելի կանոնախմբեր, որոնցից վերցրել է նորմատիվ իրավական լուծումները: Սակայն դրանց թվում չկա Մ. Գոշի դատաստանագիրքը: Մյուս կողմից՝ այդ հղումները զարմանալիորեն առկա են միայն եկեղեցական և կանոնական ոլորտի նորմեր ամրագրող հոդվածներում: Աշխարհիկ ոլորտի հարաբերությունները կարգավորող հոդվածներում չկան ինչ-որ աղբյուրների արված նման հղումներ:

Հայկական միջնադարյան երկու դատաստանագրքերի իրավագիտական վերլուծությունը հիմք է տալիս պնդելու, որ հայ ժողովրդի պատմության մինչքրիստոնեական շրջանում գոյություն է ունեցել հայկական դատաստանագիրք, որից ուղղակիորեն օգտվել են երկու կողմիֆիկացնողները՝ ն՝ Մ. Գոշը, և՝ Ս. Սպարապետը: Այս օրենսգետները կողմիֆիկացիան կատարելիս որպէս հիմնական աղբյուր օգտագործել են հայկական այդ դատաստանագիրքը, դրանում ներմուծելով հայկական կանոնական իրավունքը: Հենց դրանով է բացատրվում նրանց դատաստանագրքերի հոդվածների բովանդակային նմանությունը կամ նույնությունը: Այս հանգամանքը առաջ է բերում նոր հետազոտական խնդիր. հայ իրավունքի իրավահայտ և իրավական աղբյուրների ուսումնասիրության միջոցով հայտնաբերել ազգային այդ դատաստանագիրքը:

Բանալի բառեր – *դատաստանագիրք, Մխիթար Գոշ, Սմբատ Սպարապետ, իրավաստեղծագործություն, նմանություն, հեթանոսական դատաստանագիրք, կողմիֆիկացիա, հետազոտական խնդիր*

АРТУР ВАГАРШЯН – Юридический анализ сходства судебныхников Мхитара Гоша и Смбага Спарапета. – Сравнительный юридический анализ судебныхников Мхитара Гоша (1130–1213) и Смбага Спарапета (1208–1276) доказывает, что в дохристианскую эпоху существовал армянский судебник – основной источник для обоих кодификаторов. Этим и объясняется содержательное сходство, а подчас и совпадение статей двух судебныхников, что ставит перед исследователями задачу – обнаружить этот важнейший памятник.

Ключевые слова: судебник, Мхитар Гош, Смбат Гундстабл, правотворчество, схожесть, языческий судебник, кодификация, исследовательская задача

ARTUR VAGHARSHYAN – Legal-Scientific Research on the Similarities of M. Gosh's and S. Goundstable's Codexes. – The legal-scientific analyze of two Armenian Codexes from the Middle Ages makes possible to insist that there had been an Armenian codex in pre-Christian era, which was used by two codificators - M. Gosh and S. Goundstable. This feature explains the similarity or identical essence of articles in the codexes. This fact brings a new analytical issue: to discover that national codex through research of Armenian historical legal sources.

Key words: codex, Mkhitar Gosh, Smbat Goundstabl, lawmaking, identical essence, pagan codex, codification, analytical issue

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՉԵԶՈՔՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒՄԸ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՎԵՃԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ԱՆԱՀԻՏ ՄԱՆԱՍՅԱՆ

Սահմանադրական մարմինների միջև իրենց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերի լուծման իրավական կառուցակարգերն ու դրանց պատշաճ կենսագործումը բացառիկ կարևորություն ունեն սահմանադրական կայունությունն ու կայուն ժողովրդավարությունը երաշխավորելու տեսանկյունից: Մինչ 2015 թ. սահմանադրական փոփոխությունները Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանը չուներ սահմանադրական վեճերի լուծման ինքնուրույն լիազորություն: Մակայն իր այլ լիազորությունների իրականացման համատեքստում վերջինս առանձին դեպքերում փաստացի լուծել է լիազորությունների հարցով վեճեր:

2015թ. սահմանադրական բարեփոխումների արդյունքում ՀՀ Սահմանադրությամբ սահմանադրական մարմինների միջև սահմանադրական վեճերի լուծման լիազորություն ամրագրվեց նաև ՀՀ Սահմանադրական դատարանի համար: ՀՀ Սահմանադրության 168 հոդվածի համաձայն, մասնավորապես, Սահմանադրական դատարանը Սահմանադրական դատարանի մասին օրենքով սահմանված կարգով լուծում է սահմանադրական մարմինների միջև նրանց սահմանադրական լիազորությունների առնչությամբ առաջացող վեճերը: Իսկ Սահմանադրության 169 հոդվածին համապատասխան՝ նշված գործերով Սահմանադրական դատարան կարող են դիմել պատգամավորների ընդհանուր թվի առնվազն մեկ հինգերորդը, Հանրապետության նախագահը, Կառավարությունը, Բարձրագույն դատական խորհուրդը և տեղական ինքնակառավարման մարմինները: «Սահմանադրական դատարանի մասին» 17.01.2018 թ. ՀՀ սահմանադրական օրենքն իր հերթին սահմանեց Սահմանադրական դատարանի կողմից այդ լիազորության իրականացման կարգը:

Կարծում ենք, որ նշված լիազորության պատշաճ իրացման տեսանկյունից բացառիկ կարևորություն ունի Սահմանադրական դատարանի քաղաքական չեզոքության երաշխավորումը, ինչի հարկ ենք համարում անդրադառնալ հոդվածի շրջանակներում:

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օ-

րենքը, անդրադառնալով հիշյալ գործերով Սահմանադրական դատարանի կողմից ընդունվող որոշումների տարատեսակներին, ամրագրում է հետևյալ ձևակերպումը. «Սահմանադրական դատարանը, **մեկնաբանելով Սահմանադրության համապատասխան դրույթը** (ընդգծումը մերն է – Ա.Մ.), սահմանադրական մարմինների միջև նրանց լիազորությունների վերաբերյալ վեճերով ընդունում է հետևյալ որոշումներից որևէ մեկը...»: Կարծում ենք, որ հիշյալ իրավակարգավորումները հիմք են տալիս եզրակացնելու, որ քննարկվող գործերի քննության հիմնական էությունը սահմանադրական համապատասխան նորմերի մեկնաբանությունն է, ուստի սահմանադրական մարմինների միջև սահմանադրական լիազորությունների հարցով վեճը ևս պետք է պայմանավորված լինի սահմանադրական համապատասխան նորմի մեկնաբանության անհրաժեշտությամբ: Այդ առումով հիշատակման է արժանի այն հանգամանքը, որ մի շարք երկրներում, որտեղ Սահմանադրական դատարանն ունի համանման լիազորություն, հիշյալ գործերի քննության էությունը հենց սահմանադրական համապատասխան նորմերի մեկնաբանությունն է և դրանց սահմանադրաիրավական բովանդակության բացահայտումը: «Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 13 հոդվածի համաձայն, օրինակ, Սահմանադրական դատարանը լուծում է Հիմնական օրենքի մեկնաբանության հետ կապված հարցերը՝ համապատասխան մարմինների միջև իրավունքների և պարտականությունների ծավալի առնչությամբ վեճերի պարագայում: «Հունգարիայի Սահմանադրական դատարանի մասին» օրենքի 36 հոդվածի համաձայն ևս՝ պետական մարմինների կամ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միջև լիազորությունների հարցով վեճերի առկայության պարագայում Սահմանադրական դատարանը լուծում է նշված վեճերը **Հիմնական օրենքի մեկնաբանության հիման վրա**: Միջազգային պրակտիկայում հանդիպում է նաև այն իրավիճակը, երբ նույնիսկ համապատասխան սահմանադրաիրավական կարգավորումների բացակայության պայմաններում Սահմանադրական դատարանը սահմանադրական լիազորությունների հարցով վեճի առկայությունը պայմանավորում է նաև այն հանգամանքով, թե արդյոք կոնկրետ գործի շրջանակներում կա Սահմանադրությունը մեկնաբանելու կարիք: Օրինակ՝ Ռումինիայի Սահմանադրական դատարանն իր՝ 27 հունիսի 2012 թ. № 683 որոշմամբ արձանագրել էր համապատասխան սահմանադրական վեճի առկայություն՝ հիմք ընդունելով նաև այն, որ կոնկրետ իրավիճակում առկա է Սահմանադրության համապատասխան նորմերը մեկնաբանելու անհրաժեշտություն¹:

¹ See **Simion M.** Constitutional Legal Disputes between the President of Romania and Other Public Authorities in the Case-Law of the Constitutional Court of Romania // *Agora International Journal of Juridical Sciences*, № 2 (2017), Agora University Press, Oradea, Romania, էջ 93:

Քննարկվող հիմնախնդրի առումով կարծում ենք, որ սահմանադրական մարմինների միջև վեճը բովանդակային առումով կարող է բավականին լայն լինել և վերաբերել ոչ միայն իրավական, այլև քաղաքական հիմնախնդիրների՝ ենթադրելով ոչ միայն իրավական, այլ նաև քաղաքական լուծումներ: Մինևույն ժամանակ կարծում ենք, որ սահմանադրական լիազորությունների հարցով վեճերի պարագայում Սահմանադրական դատարանում քննության է ենթակա վեճի սուկ սահմանադրաիրավական բաղադրատարրը, հետևաբար, սահմանադրական արդարադատության շրջանակներում չի կարող քննության ենթարկվել և լուծում ստանալ քաղաքական հարթության տեսանկյունից պատասխան ենթադրող որևէ հարցադրում, իսկ Սահմանադրական դատարանի կողմից առաջարկվող լուծումները չեն կարող քաղաքական բնույթ ունենալ: Հետևաբար ակնհայտ է, որ Սահմանադրական դատարանի տեսանկյունից սահմանադրական լիազորությունների հարցով սահմանադրական մարմինների միջև վեճի պարագայում քննության ենթակա գործի էությունը պետք է լինի սահմանադրական համապատասխան նորմի մեկնաբանությունն ու դրա հիման վրա համապատասխան լիազորության իրացման կամ չիրացման սահմանադրականության գնահատումը: Այդ հանգամանքն իր հերթին հիմք է տալիս եզրակացնելու, որ Սահմանադրական դատարանում նշված գործերը կարող են քննության ենթակա լինել սուկ այն դեպքում, երբ սահմանադրական վեճի առկայությունը պայմանավորված է սահմանադրական համապատասխան նորմի մեկնաբանման անհրաժեշտությամբ²: Ավելին, հիշյալ համատեքստում անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 51 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ կողմերն իրավունք չունեն իրենց ելույթներն օգտագործելու քաղաքական հայտարարությունների համար: Իսկ Սահմանադրական դատարանի դատավորները ցանկացած գործունեություն իրականացնելիս և բոլոր հանգամանքներում պարտավոր են դրսևորել քաղաքական զսպվածություն և չեզոքություն³:

² Գրականության մեջ այս վեճերով սահմանադրական վերահսկողությունը դիտարկվում է որպես «քաղաքականությունը», «քաղաքական վեճերը» խաղաղեցնելու միջոց: Մինևույն ժամանակ հատուկ շեշտադրվում է, որ Սահմանադրական դատարանը դրանք լուծում է առավել ողջամիտ եղանակով՝ **սահմանադրական օրինականության շրջանակներում**: Ավելին, րնդգծվում է, որ թեև հիշյալ գործերով Սահմանադրական դատարանը հանդես է գալիս որպես Սահմանադրությունը խախտող կամայական իշխանությունը սահմանափակող, սակայն Դատարանն ինքը չպետք է վերածվի դեսպոտիզմի դրսևորման, ուստի, ինքն էլ պետք է սահմանափակի իր ակտիվությունը (տե՛ս CDL-JU(2015)021, «*Constitutional Review Design and Functions Implications For the Separation of Powers*» // Report of the European Commission For Democracy Through Law (Venice Commission), Strasbourg, 28 September 2015):

³ Տե՛ս «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 4 հոդվածի 5-րդ մաս, 14 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետ:

Քննարկվող բնագավառում առկա ամենամեծ խնդիրներից մեկը սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինների քաղաքականացման բացառումն է: Ակնհայտ է, որ սահմանադրական դատարանների քաղաքականացման վտանգն օբյեկտիվ է՝ հաշվի առնելով նշված դատարանների կողմից քննվող հարցերի առանձնահատկությունները: Բնական է, որ իրավասության հարցերով վեճերի քննության, Սահմանադրության մեկնաբանության, օրենսդիր մարմնի ընդունած ակտերն անվավեր ճանաչելու և այլ գործերի քննության արդյունքում Սահմանադրական դատարանն օբյեկտիվորեն անդրադառնում է հարցադրումների, որոնք առաջացել են քաղաքական հարթությունում: Արդեն նշեցինք, որ անկախ այդ հանգամանքից, վերջինիս կողմից քննության ենթակա հարցերն ու առաջարկվող լուծումները պետք է բացառապես սահմանադրաիրավական բնույթի լինեն: Միևնույն ժամանակ ակնհայտ է, որ նման գործերի քննության փաստն արդեն իսկ խոսում է հիշյալ մարմինների քաղաքականացման վտանգի առկայության մասին:

Սահմանադրական արդարադատության համաշխարհային փորձը վկայում է, որ գրեթե բոլոր սահմանադրական ժողովրդավարություններում սահմանադրական կամ համանման դատարանները քաղաքական տեսանկյունից ամենավիճելի հարցերի առնչությամբ չափազանց հաճախ սկսում են հարմարվել քաղաքական մեծամասնության տեսակետներին, իշխող մեծամասնությունն էլ, իր հերթին, փորձում է օգտագործել դատարաններին իր իշխանությունը մեծացնելու համար: Ընդ որում՝ գրականության մեջ այս հանգամանքը դիտարկվում է որպես բոլոր ժողովրդավարություններին բնորոշ երևույթ: Որպես օրինակ հիշատակվում են ԱՄՆ Գերագույն դատարանի մի շարք որոշումներ, այդ թվում՝ «Միավորված քաղաքացիներն ընդդեմ Դաշնային ընտրական հանձնաժողովի»՝ 558 Ս.Տ. 310(2010) որոշումը, կամ հունգարական փորձը և այլն, որոնք վկայում են այն մասին, որ սահմանադրական կամ համանման դատարանների մանդատը կարող է էականորեն նվազել գործող ամենաազդեցիկ քաղաքական ուժերի ցանկությունների դեպքում⁴:

Ինչ վերաբերում է սահմանադրական կայունության և քաղաքականության միջև կապին, կարծում ենք, որ սահմանադրական կայունությունը երաշխավորելու տեսանկյունից քաղաքականությունը կարևորագույն գործոն է, սակայն միևնույն ժամանակ հարկ է նկատի ունենալ, որ այդ ազդեցությունը միակողմանի չէ, և Սահմանադրությունն ինքնին կարևոր դերակատարություն է ունենում քաղաքական գործընթացներն ուղղորդելու և դրանք կարգավորելու տեսանկյունից:

Իհարկե, սահմանադրական արդարադատություն իրականացնող

⁴ Տե՛ս **Beširević V.** «Governing without Judges»: The Politics of the Constitutional Court in Serbia // *International Journal of Constitutional Law*, Volume 12, № 4, 1 October 2014, էջ 955:

մարմնի քաղաքականացումը բացառելու գաղափարը կարող է պարահոսքալ թվալ, քանզի առաջին հայացքից ձևական ու անիրական է թվում քաղաքական բնույթ ունեցող կամ քաղաքական հետևանքներ առաջացնող, անմիջականորեն ժողովրդի կողմից ընտրված իշխանության մարմինների մասնակցությամբ կամ նրանց վրա ազդեցություն ունեցող գործերի քննության ընթացքում իշխանության նույն մարմինների կողմից ձևավորվող սահմանադրական դատարանների անկախության երաշխավորումը: Կարծում ենք, սակայն, որ իշխանությունների բաժանման և հավասարակշռման, ժողովրդաիշխանության դոկտրինների վերաիմաստավորման պայմաններում վերը նշված գաղափարը կարող է առավել քան իրական և իրագործելի լինել:

Մասնավորապես, թեև ժողովրդավարության դասական դոկտրինի շրջանակներում, որի առանցքը ժողովրդի իշխանության աղբյուր և կրող հանդիսանալու գաղափարն է, պետական մարմինները, այդ թվում՝ Սահմանադրական դատարանը, դիտվում են որպես այդ իշխանության միջնորդավորված իրականացնողներ և հաճախ սահմանափակված են համարվում այդ հանգամանքով, սակայն, ինչպես արդեն նշեցինք, ժողովրդին որպես իշխանության աղբյուր ճանաչելու մոտեցումն ինքնանպատակ չէ, և ժողովրդավարության համար առանցքային հատկանիշն այն պետք է լինի, որ վերջինիս պարագայում իշխանության աղբյուրը ժողովուրդն է, իշխանությունն իրականացվում է ժողովրդի կողմից և ժողովրդի համար՝ ***հիմքում ունենալով մարդուն որպես բարձրագույն արժեք և նպատակ ունենալով անհատի համար երաշխավորել ինքնարտահայտման ու ինքնադրսեռման հնարավորություններն ու վերջինիս արժևորման պահանջի իրացումը***: Հիշյալ հանգամանքը որպես ժողովրդաիշխանության դոկտրինի առանցք ընկալելու պարագայում ակնհայտ է դառնում, որ նույնիսկ եթե իրավական ակտն ընդունում է ժողովուրդը կամ նրա կողմից անմիջականորեն ընտրված մարմինը, կամ վերջիններս հանդես են գալիս որպես սահմանադրական վեճի կողմ, ինչպես ակտը, այնպես էլ համապատասխան մարմինների գործողությունները պետք է բավարարեն վերը նշված հանգամանքներին և սահմանադրական պետությանը բնորոշ հատկանիշներին: Հետևաբար, վեճի կողմ հանդիսացող սուբյեկտի բնույթն ինքնին որևէ կերպ չի սահմանափակում սահմանադրական արդարադատությունն իրականացնող մարմինն քննարկվող չափանիշներին ակտի կամ գործողության/անգործության համապատասխանությունը գնահատելիս, և այդ հանգամանքը չի կարող վերջինիս անկախությունը սահմանափակող գործոն հանդիսանալ: Այդ է պատճառը, որ ՀՀ սահմանադրաիրավական կարգավորումներն ամրագրում են ինչպես խորհրդարանի, այնպես էլ հանրաքվեով ընդունված օրենքների սահմանադրականությունը վիճարկելու հնարավորություն, ինչպես նաև Սահմանադրության փոփոխությունների նախագծի և հանրաքվեի

դրվող իրավական ակտերի նախագծերի սահմանադրականությունը գնահատելու նախնական պարտադիր սահմանադրական վերահսկողություն: Ավելին, Ազգային ժողովը՝ որպես ժողովրդի կողմից անմիջականորեն ընտրված մարմին, նույնպես սահմանադրական լիազորությունների հարցով սահմանադրական մարմինների միջև վեճի կողմ է՝ ընդ որում հանդես գալով ինչպես դիմողի, այնպես էլ պատասխանողի կարգավիճակով:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Սահմանադրական դատարանն ինքնին որևէ կերպ չի կարող սահմանափակված համարվել սոսկ այն հանգամանքով, որ իրավական ակտն ընդունել է ժողովուրդը կամ նրա կողմից անմիջականորեն ընտրված մարմինը, կամ վերջիններս Դատարանում քննվող համապատասխան սահմանադրական վեճի կողմ են:

Կարծում ենք, որ ժամանակակից աշխարհում այս գործոնը ևս պետք է ընկած լինի ժողովրդավարության դոկտրինը վերաիմաստավորելու և այդ համատեքստում սահմանադրական կայունության ու քաղաքականության, Սահմանադրական դատարանի գործունեության ու քաղաքականության միջև պատշաճ հավասարակշռություն գտնելու առանցքում: Նշված հանգամանքը հատկապես կարևորվում է այն տեսանկյունից, որ սահմանադրական դատարանները շատ հաճախ բախվում են ոչ միայն ազդեցիկ քաղաքական ուժերի կողմից հիշյալ մարմինների նկատմամբ ազդեցություն գործելու փորձերին, այլ նաև հանրության կողմից վերջիններիս վրա ազդելու և սահմանադրական դատարանների անկախությունը «սահմանափակելու» երևույթին: Ընդ որում այդ հանգամանքը սովորաբար հիմնավորվում է նրանով, որ իշխանությունը պատկանում է ժողովրդին, հետևաբար հենց վերջինս պետք է առանցքային դերակատարություն ունենա հանրային կյանքի բոլոր բնագավառներին առնչվող հարցերի լուծման, այդ թվում՝ սահմանադրական արդարադատության իրականացման առումով: Նշված մոտեցումը հատկապես խորանում է հեղափոխությունների, կառավարող իշխանությունը կազմող քաղաքական ուժերի հանկարծակի և/կամ արմատական փոփոխության արդյունքում, երբ իշխանություն ձեռք բերած քաղաքական ուժը սկզբնական փուլում վայելում է հանրության անվերապահ վստահությունը: Վերջինս հանգեցնում է ինչպես ժողովրդի իշխանության բացարձակացման, այնպես էլ իշխող քաղաքական ուժի անսահմանափակ իշխանությանը հանրության անվերապահ, երբեմն նաև՝ «միամիտ» աջակցության: Սրա հետևանքով ակնհայտ են դառնում ոչ միայն քաղաքական իշխանության, այլև առաջին հերթին հենց ժողովրդի ազդեցության փորձերը արդարադատություն, այդ թվում՝ սահմանադրական արդարադատություն իրականացնող մարմինների վրա: Այդ առումով տեղին է հիշատակել գրականության մեջ ներկայացված այն տեսակետը, որ թեև բոլորն ասում են, որ ուզում

են ունենալ այնպիսի դատավորներ, որոնք միայն օրենքով են առաջնորդվում, բայց բոլորն էլ այս գաղափարը փաստացի ընկալում են այնպես, որ իրենք ուզում են ունենալ *դատավորներ, ովքեր կայացնում են իրենց համար հաճո որոշումներ*⁵:

Կարծում ենք, որ նման իրավիճակները պետք է բացառվեն, քանզի խաթարում են սահմանադրական կայունությունն ու կայուն ժողովրդավարությունը և հակասում են ժողովրդաիշխանության դոկտրինի՝ ներկայացված առանցքային առանձնահատկություններին: Ժողովրդի իշխանության սահմանների հստակեցման, պրոֆեսիոնալ կառավարման անհրաժեշտության վերաբերյալ գաղափարները հիմք են տալիս եզրակացնելու, որ հենց դրանք պետք է ընկած լինեն ժողովրդաիշխանության դոկտրինի ընկալման, այդ թվում՝ վերջինիս հասարակական ընկալման հիմքում, և ժողովուրդն ինքը պետք է հիշյալ համատեքստում պահպանի «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքը՝ հստակորեն պատկերացնելով իր իշխանության սահմաններն ու դրա սահմանափակման չափանիշները:

Քննարկվող հիմնախնդրի առումով հարկ է նաև նկատի ունենալ, որ, բնականաբար, ժամանակակից ցանկացած սահմանադրական համակարգի, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական համակարգի նպատակներից է հաշվետու դատական իշխանություն ունենալը⁶, սակայն այդ հանգամանքը ենթադրում է սոսկ *անկախ և անաչառ* դատական իշխանության՝ *իրավունքի առջև* հաշվետվողականություն:

Ավելին, հաշվետվողականությունն ինքնին չի կարող ընկալվել որպես դատական իշխանության նկատմամբ ազդեցություն գործելու և դրա միջոցով նրա անկախությունը սահմանափակելու հնարավորություն, քանզի նմանատիպ ընկալումն ամբողջությամբ կարող է խաթարել դատական իշխանության ինչպես անկախության, այնպես էլ հաշվետվողականության էությունը: Անկախությունը ենթադրում է, որ որոշումների կայացման ամբողջ գործընթացում դատարանը պետք է զերծ լինի ցանկացած այլ սուբյեկտի որևէ ճնշումից և միջամտությունից⁷: Հաշվետվողականությունն իր հերթին ենթադրում է համապատասխան սուբյեկ-

⁵ Տե՛ս **Edwin L. Felter Jr.** Maintaining the Balance between Judicial Independence and Judicial Accountability in Administrative Law // Journal of the National Association of Administrative Law Judiciary, 1997, Volume 17, № 1, էջ 90:

⁶ Տե՛ս OSCE/ODIHR Final Opinion on Draft Amendments to the Act on the National Council of the Judiciary and Certain Other Acts of Poland, Warsaw, 5 May 2017, <https://www.osce.org/odihr/315946?download=true>, «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ» / մշակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Եր., 2014 թ., հոկտեմբեր, <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20bageroxumner/hayecakarg.pdf>:

⁷ Տե՛ս **Марченко М. Н.** Судебное правотворчество и судейское право. М.: ТК Велби, Изд-во "Проспект", 2008:

տի կողմից իր գործողությունների համար պատասխանատվություն ստանձնելու պարտավորություն և պատրաստակամություն⁸: Հետևաբար, թեև դատական իշխանության անկախությունն ու հաշվետվողականությունն առաջին հայացքից կարող են միմյանց հակասող հասկացություններ թվալ, սակայն, մեր կարծիքով, ներկայացված բնորոշումները հիմք են տալիս եզրակացնելու, որ դրանք տարբեր բովանդակություն ունեցող և միմյանց փոխլրացնող գաղափարներ են, ուստի՝ պետք է ընկալվեն և մեկնաբանվեն հենց այդ համատեքստում: Ավելին, հաշվետվողականությունը ենթադրում է *իրավունքի առջև* հաշվետու լինելու անհրաժեշտություն և պետք է իրացվի սուսկ այն շրջանակներում, որոնք չեն խաթարում դատական իշխանության անկախության սահմանները, քանզի, ինչպես արդեն նշեցինք, ժամանակակից սահմանադրական համակարգերի առանցքը սուսկ *անկախ և անաչառ* դատական իշխանության *իրավունքի առջև* հաշվետվողականությունն է⁹:

Ներկայացված եզրահանգման մասին են վկայում նաև գրականության մեջ լայնորեն քննարկվող՝ հաշվետվողականության գնահատման ցուցիչները: Դրանք վերաբերում են բոլոր այն հանգամանքներին, որոնց առկայությունն է ենթադրում դատական իշխանության հաշվետվողականության համարժեք մակարդակը: Այդ առումով, մասնավորապես, կարելի է հիշատակել դատավորների կարգապահական պատասխանատվության ինստիտուտի, դատավորի վարքագծի կանոնների առկայությունը, թափանցիկությունը (գործերի բաշխումը, ժամանակացույցերը, գործերի քննության տևողությունը, դատավորի կողմից արդարադատության իրականացումից բացի այլ թույլատրելի գործունեության իրականացումը պետք է թափանցիկ լինեն), դատարանի կողմից գործի քննության և դատարանի որոշման՝ կողմերի, հասարակության և լրատվամիջոցների համար օբյեկտիվորեն հասկանալի և ընկալելի լինելու անհրաժեշտությունը, դատարանի որոշումների՝ պատճառաբանված լինելու անհրաժեշտությունը, դատական իշխանության գործունեության առնչությամբ հաշվետվություններ ներկայացնելու կառուցակարգերի, լրատվամիջոցների հետ աշխատանքի համապատասխան սկզբունքների առկայությունն ու դրանց փաստացի իրացումը, դատավորի կողմից գործի անկախ և անաչառ քննության անհնարինության պարագայում ինքնաբացարկ հայտնելու կամ բա-

⁸ Տե՛ս www.merriam-webster.com/dictionary/accountability /Էլեկտրոնային բառարան Մերրիամ-Վեբստեր/, /Վերջին մուտք՝ 11.06.2018թ./:

⁹ Այդ առումով հիշատակման է արժանի գրականության մեջ ներկայացված այն տեսակետը, որ թափանցիկությունը դատական իշխանության հաշվետվողականության կարևորագույն տարրերից է, սակայն այն պետք է իրացվի՝ նկատի ունենալով դատական իշխանության անկախության տեսանկյունից ենթադրվող սահմանները (տե՛ս «*Independence and Accountability of the Judiciary*» // ENCJ Report 2013-2014, https://www.encj.eu/images/stories/pdf/workinggroups/independence/encj_report_independence_accountability_adopted_version_sept_2014.pdf):

ցարկի հնարավորությունը և այլն¹⁰:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ ներկայացված գործոնների առկայության ու փաստացի իրացման մակարդակով է պայմանավորված դատական իշխանության հաշվետվողականությունը կոնկրետ սահմանադրական համակարգում: Հետևաբար, վերջինիս առկայությունը գնահատվում է ոչ թե այն հանգամանքով, թե դատարանների կողմից ընդունվող որոշումները որքանով են հաճելի հասարակությանը, այլ նրանով, թե այդ որոշումները որքանով են իրավաչափորեն պատճառաբանված, արդարացի, ընդունված անկախության և անկողմնակալության սկզբունքների պահպանմամբ, այդ համատեքստում որքանով է համարժեք դատավորի վարքագիծը, այն է՝ դրսևորում է արդյոք վերջինս դատավորի բարձր կարգավիճակին համարժեք վարքագիծ, զերծ է մնում արդյոք դատական իշխանությունը վարկաբեկող, ինչպես նաև դատական իշխանության անկախության և անաչառության վերաբերյալ հանրության վստահությունը նվազեցնող վարքագիծ դրսևորելուց, դատավորի մասնագիտական և անձնական որակները հրապարակայնորեն կասկածի տակ առնելուց, և առկա են արդյոք վերը նշված չափանիշներին չհամապատասխանող վարքագծի կամ որոշումների պարագայում դրանք հաղթահարելու համար անհրաժեշտ իրավական կառուցակարգեր, որքանով են դրանք փաստացի իրացվում ու հանրության և լրատվամիջոցների հետ պատշաճ աշխատանք կատարելուց հետո մատուցվում հանրությանը: Այստեղից նաև եզրակացնում ենք, որ խոսքը հիշյալ համատեքստում դատական իշխանության *իրավունքի առջև* հաշվետվողականության մասին է, և հանրության առջև հաշվետու լինելու հանգամանքը սուսկ ածանցվում է վերջինից: Այդ առումով հիշատակման է արժանի նաև այն հանգամանքը, որ թեև «Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքն ամրագրում է «հանրության առջև հաշվետվողականություն» ձևակերպումը¹¹, սակայն սահմանադրական բարեփոխումների հայեցակարգային առաջնահերթությունների հիմքում է եղել անկախ, ինքնուրույն և *օրենքի առջև* հաշվետու դատական իշխանության կայացումը¹²: Հե-

¹⁰ Տե՛ս «Independence and Accountability of the Judiciary» // ENCJ Report 2013-2014, https://www.ency.eu/images/stories/pdf/workinggroups/independence/encj_report_independence_accountability_adopted_version_sept_2014.pdf, **Tirkey I.** Judicial Accountability In India (Understanding and Exploring the Failures and Solutions to Accountability) // CCS Working Paper № 247, http://ccs.in/internship_papers/2011/247_judicial-accountability-in-india_isha-tirkey.pdf:

¹¹ «Դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 19 հոդվածի 1-ին մաս, որն ամրագրում է. «Դատարանների գործունեության արդյունավետությունը, թափանցիկությունը և հանրության առջև հաշվետվողականությունն ապահովելու նպատակով Դատական դեպարտամենտը հավաքում և վարում է դատական վիճակագրություն՝ Կառավարության սահմանած կարգով»:

¹² Տե՛ս «Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգ» / մշակվել է Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից, Եր., 2014 թ. հոկտեմբեր, <http://www.parliament.am/library/sahmanadrakan%20barepoxumner/hayecakarg.pdf>:

տևաբար կարծում ենք, որ հանրության առջև հաշվետվողականության գաղափարն անհրաժեշտ է ընկալել հենց վերոնշյալ հայեցակարգային առաջնահերթությունների, մասնավորապես օրենքի/իրավունքի առջև հաշվետու լինելու առաջնահերթության համատեքստում:

Ներկայացված վերլուծությունը հիմք է տալիս եզրակացնելու, որ հաշվետվողականությունն ինքնին *անկախ* դատական իշխանությանը բնորոշ հատկանիշ է, չի բացառում և չի հակասում վերջինիս, որևէ պարագայում չի կարող ընկալվել սոսկ որպես հանրությանը հաճո ուրոշումներ կայացնելուն ուղղված կառուցակարգ, ենթադրում է *իրավունքի առջև* հաշվետու լինելու անհրաժեշտություն, ունի գնահատման համապատասխան ցուցիչներ, որոնք ինքնին չեն խախտում, որևէ պարագայում չեն կարող խախտել դատական իշխանության անկախության սահմանները, և պետք է կյանքի կոչվեն ժողովրդի իշխանության իրացման սահմանների առնչությամբ համապատասխան մոտեցումների համատեքստում:

Ինչ վերաբերում է մեծամասնություն կազմող քաղաքական ուժերի կողմից սահմանադրական դատարանների նկատմամբ ազդեցության փորձերին, նշենք, որ ժամանակակից սահմանադրական համակարգերը նախատեսում են այդ երևույթները բացառող համապատասխան սահմանադրաիրավական կարգավորումներ: Հետևաբար հիմնական երաշխիքը հիշյալ համատեքստում քաղաքական համապատասխան ինստիտուտների կողմից բավարար կամք դրսևորելու, «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքը պահպանելու և նման երևույթներից ձեռնպահ մնալու համարժեք քաղաքական ու սահմանադրական մշակույթի ձևավորումն է:

Կարծում ենք, որ այդ հանգամանքը սերտորեն փոխկապված է նաև իշխանությունների բաժանման ու հավասարակշռման դոկտրինի և վերջինիս վերաիմաստավորման հետ, ինչին հարկ ենք համարում անդրադառնալ հիշյալ համատեքստում: Նշենք, որ գրականության մեջ հաճախ իշխանությունների բաժանման և հավասարակշռման վերաբերյալ մոտեցումները դիտարկվում են որպես իշխանության այլ ճյուղերի կողմից Մահմանադրական դատարանի նկատմամբ այս կամ այն ազդեցության հանգամանքը հիմնավորելու միջոց՝ մասնավորապես նկատի ունենալով օրենսդիր իշխանությունը որպես իշխանության առաջնային ճյուղ դիտելու վերաբերյալ տեսակետները: Այդ առումով առաջին հերթին ընդգծենք, որ, մեր կարծիքով, իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը ևս ունի վերաիմաստավորման անհրաժեշտություն:

Մասնավորապես կարծում ենք, որ վերջինս անհրաժեշտ է ոչ թե իշխանության ճյուղերը միմյանցից վերջնականապես մեկուսացնելու, այլ նրանց *փոխգործակցությունն ու համագործակցությունն ապահովելու համար*: Ավելին, *իշխանությունների բաժանման և հավասար*

րակշռման սկզբունքի հիմնական նպատակը ոչ թե պետական իշխանության մարմինների փոխադարձ վերահսկողության կառուցակարգերի առկայությունն է, այլ առաջին հերթին հիմնախնդիրների առավել ընդունելի և արդյունավետ համատեղ լուծումներ գտնելը: Պատահական չէ իրավաբանական գրականության մեջ լայնորեն տարածված այն տեսակետը, որ հենց պետական իշխանության տարանջատումն է տալիս նրանց միջև համագործակցության հնարավորություն¹³: Հիշյալ համատեքստում հիշատակման է արժանի Գերմանիայի Դաշնային Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը, համաձայն որի՝ սահմանադրական մարմինների գործունեության համակարգումը պահանջում է ... որպես նրանց անկախության երաշխիք, որպեսզի նրանք իրենց սահմանադրական գործունեությունը իրականացնելիս ներդաշնակորեն համագործակցեն միմյանց հետ և հրաժարվեն այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնաս պատճառել սահմանադրական այլ մարմինների հեղինակությանը՝ այդպիսով վտանգելով Սահմանադրությունը¹⁴: ՌԴ Սահմանադրական դատարանը ևս իրավական դիրքորոշում է արտահայտել այն մասին, որ իշխանությունների տարանջատումը ենթադրում է իրավական երաշխիքների, զսպումների ու հակակշիռների այնպիսի համակարգ, որը բացառում է իշխանության կենտրոնացումը դրանցից մեկի ձեռքում, ապահովում է իշխանության բոլոր ճյուղերի ինքնուրույն և անկախ իրականացում ու միաժամանակ համագործակցություն¹⁵:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի նման ընկալման պայմաններում իշխանության որևէ ճյուղ չի կարող առաջնային կամ երկրորդային դիտարկվել, և իշխանության բոլոր ճյուղերի գործունեության հիմնական նպատակը պետք է լինի առկա հիմնախնդիրների առավել ընդունելի և արդյունավետ համատեղ լուծումներ գտնելը, այլ ոչ որպես ինքնանպատակ՝ իշխանության այլ մարմինների նկատմամբ վերահսկողություն իրականացնելը: Այդ առումով սահմանադրական արդարադատությունը պետք է ընկալվի որպես համագործակցության ներկայացված մշակույթի պայմաններում առաջացած հիմնախնդիրներին սահմանադրաիրավական լուծում տվող անկախ կառուցակարգ, իսկ Սահմանադրական դատարանը չպետք է դիտարկ-

¹³ St' u **Пулбере Д.** Соблюдение прав человека и контроль конституционности законов в общем и на примере Республики Молдова // "Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии". Ер., 1(51), 2011, էջ 70:

¹⁴ St' u **Люхтергандт О.** Значение решений Федерального Конституционного Суда для правового порядка Германии // "Конституционное правосудие в новом тысячелетии". Ер., 2011, էջ 128:

¹⁵ St' u **Зорькин В.** Принцип разделения властей в деятельности Конституционного суда Российской Федерации // "Конституционное правосудие: Вестник Конференции органов конституционного контроля стран молодой демократии". Ер., 2(40)-3(41), 2008, էջ 28:

վի որպես օրենսդիր կամ գործադիր իշխանության համար երկրորդային նշանակություն ունեցող մարմին կամ հակառակը՝ դատական ատյան, որը սուսկ վերահսկողություն է իրականացնում վերջիններիս գործունեության առանձին ասպեկտների նկատմամբ՝ արդյունքում փորձեր կատարելով ազդեցություն գործադրելու Սահմանադրական դատարանի նկատմամբ ու նշված հիմնավորումներով սահմանափակելու այդ մարմնի անկախությունը: «Ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքն էլ իր հերթին ենթադրում է բոլոր քաղաքական ուժերի զսպվածություն այնպիսի գործողությունների կատարման հարցում, որոնք կարող են վնասել Սահմանադրական դատարանի հեղինակությունը՝ վտանգելով նաև Սահմանադրության փաստացի կենսագործումն ու սահմանադրական արժեքների գոյությունը:

Արդեն նշեցինք հեղափոխությունների, կառավարող իշխանությունը կազմող քաղաքական ուժերի փոփոխության արդյունքում ժողովրդի կողմից Սահմանադրական դատարանի նկատմամբ ճնշումների և դրանց ծավալի հնարավոր մեծացման մասին: Կարծում ենք, սակայն, որ նշված իրադարձությունները առավել մեծ հավանականությամբ հակառակ ազդեցությունն են ունենում իշխանության մարմինների կողմից Սահմանադրական դատարանի վրա ազդեցություն գործելու փորձերի առումով, հատկապես երբ իշխանության համակարգում սկսում է բացակայել մեկ հիմնական ուժ, որը բացարձակ մեծամասնությամբ է կազմավորում իշխանությունը, կամ երբ օրենսդիր իշխանությունում մեծամասնություն կազմող ուժը տարբերվում է գործադիր իշխանությունը կազմավորող ուժից: Սրանք, իհարկե, բացառիկ իրավիճակներ են, սակայն դրանց համատեքստում ակնհայտորեն մեծանում է Սահմանադրական դատարանի անկախությունը իշխանության այլ մարմիններից, քանզի իշխանության ուժերի ապակենտրոնացվածության պատճառով բացակայում է այն հիմնական կենտրոնը, որտեղից կարող են իրականացվել ճնշումները այդ մարմնի նկատմամբ: Կարծում ենք, որ քաղաքական անկայունությունը, այդ թվում՝ օրենսդիր մարմնում ուժերի անընդհատ վերադասավորումները, կառավարություն ձևավորող կոալիցիաների անկայունությունը, ընդդիմադիր ուժերի կողմից գործադիր իշխանության ձևավորումը և այլն, Սահմանադրական դատարանին, բացի վերը շարադրվածից, նաև մանևրելու և դրա արդյունքում իր անկախությունը պահպանելու և մեծացնելու հնարավորություն են տալիս: Որպես օրինակ կարելի է հիշատակել մի շարք սահմանադրական դատարանների, այդ թվում՝ գրականության մեջ լայնորեն քննարկվող Հունգարիայի Սահմանադրական դատարանի գործունեությունը 1990-ական թվականներին, երբ վերջինս, քաղաքական իրավիճակով պայմանավորված, հաճախ էր մանևրելու հնարավորություն ունենում՝ ընդհուպ վիճարկվող օրենքների 1/3-ը նշված տարիներին հակասահմանադրական և անվավեր ճանաչելով:

Ինքնուրույն գործունեության նման հաջողությունը բացատրվում է երեք հիմնական գործոնների առկայությամբ՝ Սահմանադրական դատարանին տրված լայն լիազորություններով, չափազանց հավակնոտ և նախկինում ընդդիմադիր գործիչ հանդիսացած նախագահի առկայությամբ, իշխանության մարմինների միջև բաժանման և հավասարակշռման հստակ համակարգով և Սահմանադրական դատարանի որոշումներն այս փուլում հարգելու պատրաստակամությամբ¹⁶: Վերջին գործոնը հիմք է տալիս եզրակացնելու, որ իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի վերախմաստավորման և այդ համատեքստում այն որպես առաջին հերթին իշխանության տարբեր մարմինների միջև համագործակցություն ընկալելու պայմաններում է միայն հնարավոր երաշխավորել այդ մարմինների բնականոն գործունեությունը, տվյալ պարագայում, մասնավորապես, Սահմանադրական դատարանի քաղաքականացման բացառումն ու անկախության երաշխավորումը: Հակառակ իրավիճակը հանգեցնում է ինչպես հիշյալ մարմինների գործունեության արդյունավետության նվազման, այնպես էլ դրանց հեղինակության անկման, ինչպես, օրինակ, 1990-ական թթ. սկզբում ՌԴ Սահմանադրական դատարանի պարագայում, որը, ունենալով բավականին լայն լիազորություններ, իշխանության այլ մարմինների կողմից իր որոշումների չկատարման ու դրանց նկատմամբ բավարար հարգանքի բացակայության պայմաններում վերածվեց փաստացի արդյունավետություն չունեցող ինստիտուտի, վտանգվեց վերջինիս հեղինակությունը, իսկ 1993 թ. ՌԴ նախագահն ընդհանրապես ցրեց Սահմանադրական դատարանը, որի գործունեությունը վերականգնվեց սուկ 1995 թ.¹⁷:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ նշենք, որ Սահմանադրական դատարանն ինքնին ներգրավված է այնպիսի հարցադրումների առնչությամբ լուծումներ գտնելու գործընթացում, որոնք վերաբերում են նաև քաղաքական հարթությանը: Մինչույն ժամանակ, վերջինս դրանց առնչությամբ կարող է առաջարկել սուկ սահմանադրական բնույթի լուծումներ և պետք է զերծ մնա դրանց համար քաղաքական կարգավորումներ առաջարկելու փորձերից: Սակայն ակնհայտ է, որ նույնիսկ քաղաքական նման զսպվածության պարագայում վերջինիս գործունեության արդյունքները էական դերակատարություն են ունենում քաղաքական գործընթացներն ուղղորդելու տեսանկյունից: Հետևաբար, որքան էլ պարադոքսալ չթվա, ակնհայտ է, որ լինելով զուտ դատական իշխանություն իրականացնող, սուկ սահմանադրաիրավական հարցեր լուծող և քաղաքական առումով չեզոք մարմին՝ Սահմանադրական

¹⁶ Տե՛ս **Brown J. N., Waller J. G.** Constitutional Courts and Political Uncertainty: Constitutional Ruptures and the Rule of Judges // *International Journal of Constitutional Law*, Volume 14, № 4, 1 October 2016, էջ 823-825:

¹⁷ Տե՛ս նույն տեղը, էջ 825-827:

դատարանն այսպես թե այնպես առանցքային նշանակություն ունեցող «քաղաքական դերակատարի» է վերածվում: Հետևաբար, այդ համատեքստում առաջին հերթին անհրաժեշտ է տարբերակել զուտ ակտիվ և սահմանադրաիրավական հարցերին պատասխաններ տալու միջոցով սահմանադրական վեճեր լուծող դատարանը քաղաքական գործընթացներին միջամտող, քաղաքական չեզոքություն չդրսևորող դատարանից: Վերջին իրավիճակն անընդունելի է, վկայում է Սահմանադրական դատարանի կողմից «ռոջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքի խախտման մասին և խիստ նվազեցնում է հենց Սահմանադրական դատարանի հեղինակությունը: Համանման իրավիճակ առկա էր 1990-ական թթ. սկզբներին Ռուսաստանի Դաշնությունում, երբ գործադիր-օրենսդիր մարմինների ճգնաժամի ընթացքում Սահմանադրական դատարանը, իսկ ավելի կոնկրետ՝ Դատարանի նախագահը, կոնֆլիկտի վերջին օրերին հրապարակայնորեն պաշտպանում էր խորհրդարանին: Ավելին՝ երբ վեճը լուծելու նպատակով ՌԴ նախագահն արձակեց խորհրդարանը, ՄԴ նախագահը խորհրդարանի այլ առաջնորդների հետ դա հրապարակայնորեն որակեց հեղափոխություն՝ չնայած այն հանգամանքին, որ Դատարանի մի շարք անդամներ դեմ էին այդ տեսակետին¹⁸: Նպատակ չունենալով քննարկել սահմանադրական նշված վեճի մանրամասները, վերլուծել դրան առնչվող բոլոր իրավական և քաղաքական հարցադրումները և գնահատականներ տալ վերջիններիս, այնուամենայնիվ ընդգծենք, որ քաղաքական զսպվածության ու չեզոքության նման խախտումները, անկախ օբյեկտիվ իրականությունից, ակնհայտորեն ձևախեղում են իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի ամբողջ էությունը, հանգեցնում են դատական իշխանություն իրականացնող մարմինների գործունեության էության ձևախեղման և վերջիններիս հեղինակության անկման, հետևաբար անընդունելի են բոլոր իրավիճակներում:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Սահմանադրական դատարանի քաղաքականացումը բացառելը չափազանց բարդ է՝ հաշվի առնելով, որ զուտ ակտիվ և սահմանադրաիրավական հարցերին պատասխաններ տալու միջոցով սահմանադրական վեճեր լուծող դատարանը քաղաքական գործընթացներին միջամտող, քաղաքական չեզոքություն չդրսևորող դատարանից տարբերակելու սահմանն է չափազանց նուրբ: Մինևույն ժամանակ, ինչպես արդեն նշեցինք, ժողովրդաիշխանության և իշխանությունների բաժանման ու հավասարակշռման դոկտրինների վերաիմաստավորման պայմաններում այդ հանգամանքը լիակատար առումով իրացվելի է, ինչը, մեր կարծիքով, հնարավոր է իրականացված վերլուծության արդյունքում ամփոփ ներկայացվող ներքոհիշյալ երեք հիմնական հանգամանքների միաժամա-

¹⁸ Տե՛ս նույն տեղը, էջ 827:

նակյա երաշխավորման պարագայում՝ 1. Սահմանադրական դատարանի կողմից «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքի հարգման, քաղաքական զսպվածության ու չեզոքության պահպանման, առաջադրվող հարցադրումներին սահմանադրական, այլ ոչ թե քաղաքական լուծումների ներկայացման պայմաններում, 2. Ժողովրդի կողմից իր իշխանության սահմանների վերաբերյալ ընկալման հստակեցման, այդ իշխանության անսահմանափակ լինելու մոտեցման բացառման և նշված համատեքստում դատական իշխանության անկախությունը ժողովրդի կողմից հարգելու անհրաժեշտության իմաստավորման դեպքում, 3. իշխանության այլ ճյուղերի և մեծամասնություն կազմող քաղաքական ուժերի կողմից «ողջամիտ ինքնասահմանափակման» սկզբունքի պահպանման, իշխանությունների բաժանման ու հավասարակշռման սկզբունքի վերաիմաստավորման և այդ համատեքստում Սահմանադրական դատարանի անկախության, քաղաքական զսպվածության, չեզոքության և որոշումների նկատմամբ հարգանքի առկայության պայմաններում:

Բանալի բառեր – *սահմանադրական լիազորություններ, սահմանադրական վեճեր, քաղաքական չեզոքություն, իշխանությունների բաժանում և հավասարակշռում, ժողովրդի իշխանություն*

АНАИТ МАНАСЯН – Гарантирование политической нейтральности Конституционного суда при рассмотрении конституционных споров. – В статье утверждается вывод, что в случае конституционного спора в суде подлежит рассмотрению лишь его конституционно-правовой элемент. И наоборот, в рамках конституционного правосудия не могут рассматриваться и решаться вопросы, предполагающие политический ответ, а решения Конституционного суда не должны иметь политического характера.

Ключевые слова: *Конституционные полномочия, конституционные споры, политическая нейтральность Конституционного Суда, разделение и баланс властей, власть народа*

ANAHIT MANASYAN – Guaranteeing Political Neutrality of the Constitutional Court While Considering Constitutional Disputes. – The article discusses the issues regarding political neutrality of the Constitutional Court while considering constitutional disputes. The Author concludes that in case of constitutional disputes just its constitutional-legal element is subject to consideration at the Constitutional Court. Hence, within the frames of constitutional justice, issues, presupposing political answers, can't be considered and resolved, and the solutions proposed by the Constitutional Court can't have a political character.

Key words: *Constitutional powers, constitutional disputes, political neutrality of the Constitutional Court, separation and balance of powers, power of people*

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

ԱՊՐԱՆՔՆԵՐԻ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՄ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՄՆԵՐԻ
ՀԱՏՈՒՑՈՒՄԸ

ԳՐԻԳՈՐ ԲԵՔՄԵՋՅԱՆ

Ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների հետևանքով պատճառված վնասի հատուցումը քաղաքացիական իրավունքի առանց մեղքի պատասխանատվության ինստիտուտի առանցքային ճյուղերից է:

Ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասի խնդիրը հատկապես լայն արձագանք ստացավ և կարգավորման անհրաժեշտություն զգաց 20-րդ դարի երկրորդ կեսերից, երբ ապրանքների արտադրության և ծառայությունների մատուցման ավելացող ծավալները վերջնական սպառողին դրեցին դժվարին կացության մեջ: Խնդրի էությունն այն էր, որ ապրանքի վերջնական սպառողը ապրանքը գնում էր ոչ թե արտադրողից, այլ վաճառողից, որը շատ դեպքերում մատակարարման շղթայում մի քանի քայլ հեռու էր գտնվում արտադրողից: Ապրանքների արտադրության գործընթացը հայտնի էր միայն արտադրողին և անձանթ վաճառողի ու սպառողի համար: Եթե սպառողը վնասվեր ձեռք բերած ապրանքից, ապա առաջին պատասխանողը վաճառողն էր լինելու: Վաճառողի պատասխանատվությունը լինելու էր պայմանագրային՝ համաձայն գնորդի և վաճառողի միջև կնքված պայմանագրի և տրված երաշխավորության, որը ամեն դեպքում չէր կարող բավարարել տուժողի բոլոր պահանջները՝ պայմանավորված պայմանագրային պատասխանատվության որոշակի սահմանափակումներով և վաճառողի ֆինանսական կարողություններով: Իսկ այն դեպքում, եթե տուժողը որոշեր վնասի հատուցումը ստանալ արտադրողից արտապայմանագրային պատասխանատվության կանոններով, ապա դա վերածվելու էր երկարատև պայքարի, որում տուժողը նախ և առաջ պետք է ապացուցեր արտադրողի մեղքը կամ անզգուշությունը¹:

Ուստի օրենքը, նպատակ ունենալով լուծել այս խնդիրը, օրենսդրական ավելի բարենպաստ միջավայր սահմանեց վերջնական սպառողի իրավունքների պաշտպանության համար՝ փորձելով կարգավոր-

¹ Տե՛ս **Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche**. Tort Law, Oxford and Portland, Oregon, Hart Publishing, 2000, էջ 598-599:

ման ենթարկել ապրանքների, ծառայությունների և աշխատանքների հետևանքով պատճառված վնասի ինստիտուտը՝ սահմանելով առանց մեղքի պատասխանատվություն արտադրողի և ապրանքը վաճառողի համար:

ՀՀ քաղաքացյախական օրենսգրքի (այսուհետ նաև Օրենսգիրք կամ ՀՀ քաղ. օր.) 1088 հոդվածը սահմանում է, որ. «Քաղաքացու կյանքին, առողջությանը կամ գույքին կամ իրավաբանական անձի գույքին՝ ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների կառուցվածքային, բաղադրամասային կամ այլ թերությունների, ինչպես նաև ապրանքի, աշխատանքի, ծառայության մասին ոչ ճիշտ կամ ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու հետևանքով պատճառված վնասը ենթակա է հատուցման ապրանք վաճառողի կամ արտադրողի, աշխատանք կատարողի կամ ծառայություններ մատուցողի կողմից՝ անկախ նրանց մեղքից և նրանց հետ տուժողի պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու պարագայից»: Մակայն կարելի է ամրագրել, որ նշված կանոնները կիրառվում են միայն սպառողական նպատակով ապրանքներ կամ ծառայություններ ձեռք բերելիս: Ինչ վերաբերում է ձեռնարկատիրական գործունեության համար օգտագործվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների հետևանքով պատճառված վնասի հատուցմանը, ապա այն կատարվում է ընդհանուր պայմանագրային հիմունքներով:

Ապրանքների կամ ծառայությունների թերություններով պատճառված վնասի ինստիտուտի զարգացման միտումը դրսևորվեց ոչ միայն ԽՍՀՄ քաղաքացիական օրենսդրությունում, այնուհետև նաև՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում, այլև այլ երկրներում: Ուստի ՀՀ Քաղ. օր. 60-րդ գլխի երրորդ պարագրաֆի ուսումնասիրությունը ավելի նպատակահարմար ենք գտնում իրականացնել խնդրի միջազգային իրավական փորձի համեմատական վերլուծությամբ:

Մասնավորապես, Միավորված Ազգերի Կազմակերպության՝ 1985 թվականի ապրիլի 16-ին ընդունած 38/248 բանաձևում (վերաբերում է «Սպառողների շահերի պաշտպանության ղեկավար սկզբունքներ»-ին) ընդգծվում է սպառողների պահանջների բավարարման արդյունավետ ընթացակարգերի նախատեսման (2-րդ բաժին 3-րդ կետ) և իրավական այնպիսի միջոցների ձեռնարկման անհրաժեշտությունը, որոնք սպառողներին և կազմակերպություններին հնարավորություն կընձեռեն ներկայացնելու իրենց պահանջները արդյունավետ, արդար և հասանելի ընթացակարգերի միջոցով (3-րդ բաժին 32-րդ կետ)²:

Սպառողների իրավունքների պաշտպանության կարևորության մասին են վկայում նաև Եվրոպական Միության դեռևս 1992 թվականի

² Տե՛ս «United Nations Guidelines for Consumer Protection (as expanded in 1999)», United Nations, New York, 2003, մասն էլ է http://www.un.org/esa/sustdev/publications/consumption_en.pdf հղումով՝ 22.03.2017թ. դրությամբ:

հունիսի 29-ին «Ապրանքների ընդհանուր անվտանգության մասին» 92/59 հրահանգի ընդունումը, որը հետագայում փոխարինվեց 2001 թվականի դեկտեմբերի 3-ին ընդունված «Ապրանքների ընդհանուր անվտանգության մասին» 2001/95 հրահանգով³:

Հարկ է նշել, որ ապրանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման ժամանակակից ինստիտուտի զարգացումը առավելապես կապվում է Եվրամիության 1985 թվականի հուլիսի 25-ին «Ապրանքների թերությունների համար պատասխանատվության մասին» 85/374 հրահանգի հետ, որը միջազգային հանրության ձեռնարկած առաջին համակարգված փորձն էր՝ ուղղված ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման միասնական ինստիտուտի ներդրմանը:

Գերմանիայում ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման հարցերը կարգավորվում են միայն 1976 թ. օգոստոսի 24-ի «Դեղերի ակտով» և Եվրամիության 85/374 հրահանգով: Չնայած բացի այս երկու օրենսդրական ակտերից՝ ոչ մի այլ իրավական ակտ չի կարգավորում ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հիմքով ծագող հարաբերությունները, սա չի նշանակում, որ մինչև դրանց ընդունումը Գերմանական իրավունքին անհայտ է եղել ապրանքների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման ինստիտուտը: Խնդիրը առաջին անգամ կարգավորվել է Գերմանիայի Դաշնային դատարանի 1968 թ. նոյեմբերի 26-ի վճռով: Վճռում, բավարարելով հայցվորի հայցադիմումը դեղեր արտադրող ընկերության նկատմամբ, որի դեղերը պատճառ են եղել հայցվորի 4000 հավերի սատկելուն, դատարանը ըստ էության եզրակացնում է, որ «եթե ինչ-որ մեկը, ըստ նպատակային նշանակության օգտագործելով արդյունաբերական արտադրանքը, վնաս է կրում դրա թերությունների հետևանքով՝ Քաղաքացիական օրենսգրքի 823 պարագրաֆի առաջին կետում նշված արժեքներին պատճառելով վնաս, ապա արտադրողի պարտականությունն է ցույց տալ, թե որտեղից է գալիս այդ թերությունը, և ապացուցել, որ բացակայում է իր մեղքը»⁴:

Ինչպես ակնհայտ է վճռից, արտադրողի պատասխանատվության համար առանցքային դեր է խաղում արտադրանքի թերության առկայությունը: Այսինքն՝ վնասը պետք է անպայման պատճառված լինի ոչ թե արտադրանքի կողմից, ընդհանրապես, այլ դրա թերության հետևանքով: Այստեղից ակնհայտ է, որ, ի տարբերություն ՀՀ օրենսդրության, որը նախատեսում է առանց մեղքի պատասխանատվություն,

³ Տե՛ս Directive 2001/95/EC of the European Parliament and of the Council of 3 December 2001 «On General Product Safety», հասանելի է <http://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?qid=1490011666020&uri=CELEX:32001L0095> հղումով՝ 22.03.2017 թ. դրությամբ:

⁴ Վճիռը ամբողջությամբ տե՛ս www.rechten.unimaas.nl/casebook ինտերնետային էջում:

Գերմանիայի օրենսդրությունը և դատական պրակտիկան ընդունում են, որ արտադրողի պատասխանատվությունը կարող է ծագել նրա մեղքի պարագայում: Ընդ որում ընդունվում է, որ արտադրողը մեղավոր է, քանի դեռ չի ապացուցել իր անմեղությունը: Ինչպես նշվում է արևմտյան իրավաբանական գրականության մեջ, Գերմանիայում ապրանքների թերությունների հետևանքով ծագող իրավահարաբերության ժամանակ տուժողին հարկ է ապացուցել միայն, որ առկա է վնաս, որը ծագել է ապրանքի թերության հետևանքով և դա արտադրել է տվյալ ձեռնարկությունը: Այնուհետև արդեն արտադրողի պարտականությունն է ապացուցել, որ արտադրանքի թերությունը իր մեղքով պայմանավորված չէ⁵:

ՀՀ քաղ. օր. 1088 հոդվածը սահմանում է, որ վնասի հատուցման պարտականություն կառաջանա վաճառողի, արտադրողի, աշխատանքներ կատարողի կամ ծառայություններ մատուցողի համար ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների կառուցվածքային, բաղադրամասային կամ այլ թերությունների, ինչպես նաև ապրանքի, աշխատանքի, ծառայության մասին ոչ ճիշտ կամ ոչ բավականաչափ ճշգրիտ տեղեկատվություն տրամադրելու հետևանքով: Այսինքն՝ արտադրողը պարտավոր է կազմակերպել արտադրությունը այնպես, որ բացառի ապրանքի թերությունները՝ ապրանքի որակի նկատմամբ հսկողություն սահմանելով թե՛ արտադրության ընթացքում և թե՛ վերջում, վաճառողը պարտավոր է ապահովել որակյալ ապրանքի առկայությունը խանութում, ծառայություններ մատուցողն ու աշխատանքներ կատարողը պարտավոր են ձեռնարկել որակյալ գործունեություն⁶: Ապրանքի թերությունները ընդգրկում են նաև ապրանքի նախագծային բացթողում, որոնք, համաձայն գերմանական դատական պրակտիկայի, պետք է բավարարեն գիտության և տեխնիկայի զարգացման ներկա աստիճանին: Արտադրանքի անհամապատասխանությունը այս պահանջներին ենթադրում է, որ արտադրողը չի ցուցաբերել պատշաճ ուշադրություն և պատշաճ հսկողություն արտադրության նկատմամբ⁷: Նշվածից ակնհայտ է նաև, որ արտադրողները պարտավոր են նախագծել այնպիսի արտադրանք, որը վտանգ չի ներկայացնում, եթե նախագծված է նորույթ, ապա պետք է փորձարկեն բոլոր հնարավոր միջոցներով՝ բացահայտելու համար արտադրանքի և նախագծման թերությունները:

Նույն 1088 հոդվածից բխում է նաև, որ վաճառվող ապրանքի և մատուցվող ծառայության մասին սպառողին պետք է տրվի բավարար տեղեկություն, որը հնարավորություն կտա անվտանգ օգտագործել

⁵Տե՛ս **Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche**, նշվ. աշխ., էջ 606-607:

⁶ Տե՛ս նույն տեղը:

⁷ Տե՛ս OLG Dusseldorf, 29 November 1996 թ. վճիռը www.rechten.unimaas.nl/casebook ինտերնետային էջում:

այն: Գերմանական իրավունքում արտադրողի պատասխանատվությունը իր արտադրանքով պատճառված վնասի համար ծագում է նաև այն դեպքում, եթե արտադրողը արտադրանքի հետ չի տվել նաև պատշաճ ուղեցույց արտադրանքի օգտագործման և վտանգավոր հատկությունների վերաբերյալ⁸: Խնդիրը ավելի պարզ հասկանալու համար կցանկանայինք հղում կատարել Գերմանիայի դատական պրակտիկային, մասնավորապես 1991 թ. նոյեմբերի 12-ի Գերմանիայի դաշնային դատարանի 116,60 վճռին: Սույն գործով հայցվորը դիմել է դատարան պահանջելով վնասների հատուցում մանկական թեյ արտադրող ընկերությունից, քանի որ հայցվորի մանկահասակ երեխայի ատամները փտել են հաճախակի թեյ օգտագործելուց, իսկ հայցվորը պատշաճ կարգով չի զգուշացվել, որ դա կարող է վնասել երեխաների ատամները: Առաջին ատյանի դատարանը մերժել է հայցվորի դիմումը, որը, սակայն, մասնակիորեն բավարարել է վերաքննիչ դատարանը: Գերմանիայի դաշնային դատարանը վերաքննիչ դատարանի վճիռը թողել է ուժի մեջ՝ նշելով, որ ատադրողը պարտավոր է զգուշացնել գնորդներին արտադրանքի վտանգավոր հատկանիշների մասին: Այս պարտականությունը ծագում է հատկապես այն դեպքում, երբ արտադրանքը նախատեսված է զանգվածային սպառման համար: Արտադրողը կարող է ազատվել նշված նախազգուշացման պարտականությունից միայն այն դեպքում, եթե վստահ է, որ իր արտադրանքը օգտագործելու է միայն արտադրանքի վնասակար և վտանգավոր հատկությունները իմացող անձը: Բացի այդ՝ վճռում նշվում է, որ համապատասխան նախազգուշացումը պետք է լինի բացահայտ, այնպիսի վայրում, որ պարզորեն տեսանելի լինի սպառողի համար: Արտադրանքի վնասակար հատկությունների մասին նախազգուշացման պարտականությունը հատկապես կարևորվում է, երբ դրանք վնասակար են անձանց առողջության համար: Զգուշացումը իր հերթին պետք է լինի հստակ և հասկանալի սպառողի համար, այն պետք է պարունակի արտադրանքը ճիշտ օգտագործելու կանոնները⁹:

Ինչպես ցույց է տալիս Գերմանական դատական պրակտիկայի ուսումնասիրությունը, արտադրողը ապրանքների թերությամբ պատճառված վնասի համար պատասխանատվությունից խուսափելու նպատակով պարտավոր է հայտնել սպառողին ապրանքի թերությունների մասին այն դեպքում, երբ ապրանքը դրված է շրջանառության մեջ, և արտադրողին հայտնի են դարձել նոր հանգամանքներ ապրանքի թերությունների վերաբերյալ: Այսինքն՝ արտադրողը պարտավոր է հսկողություն իրականացնել նաև արդեն շուկա հանված ապրանքի նկատմամբ: «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին»

⁸ Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche, նշվ. աշխ., էջ 613:

⁹ Տե՛ս վճիռը www.rechten.unimaas.nl/casebook ինտերնետային էջում, ինչպես նաև Walter van Gerven, նշվ. աշխ., էջ 613-614:

ՀՀ օրենքի համաձայն՝ որոշ ապրանքների համար, մասնավորապես՝ սննդամթերքի, օժանելիքակոսմետիկական ապրանքների, դեղորայքի, դեղամիջոցների, դեղանյութերի, կենցաղային քիմիայի ապրանքների և նման այլ ապրանքների համար արտադրողը պարտավոր է սահմանել այնպիսի պիտանիության ժամկետ, որի ավարտից հետո ապրանքն իր նշանակությամբ օգտագործման համար պիտանի չէ: Այդպիսի ապրանքների անվանացանկը հաստատում է կառավարությունը: Արգելվում է նաև ապրանքի վաճառքը (աշխատանքի կատարումը) սահմանված պիտանիության ժամկետի ավարտից հետո, ինչպես նաև այն ապրանքի վաճառքը (աշխատանքի կատարումը), որի համար պետք է սահմանված լինեն ծառայության կամ պիտանիության ժամկետ, բայց չի սահմանվել: ՀՀ քաղ. օր.-ը սահմանում է, որ այն դեպքերում, երբ ապրանքի կամ մատուցվող ծառայության համար պիտանիության ժամկետներ սահմանված չեն, ապա պատճառված վնասը պետք է հատուցվի ապրանքը թողարկելու, աշխատանքը կատարելու կամ ծառայությունը մատուցելու օրվանից տասը տարվա ընթացքում¹⁰: Այլապես տուժողները վնասի հատուցման իրավունք կստանան, եթե վնասը պատճառված լինի ապրանքի կամ ծառայության պիտանիության ընթացքում: Սակայն այստեղ կարևոր է նշել, որ բացի պիտանիության ժամկետը սահմանելուց, արտադրողը, վաճառողը կամ ծառայություն մատուցողը պարտավոր են ապրանքի կամ մատուցվող ծառայության համար նշել նաև մինչև պիտանիության ժամկետի ավարտն անհրաժեշտ գործողություններ կատարելու և դրանք չկատարելու հնարավոր հետևանքների մասին: Եթե այս պահանջը պահպանված չլինի, ապա վնասի հատուցման պարտականությունը կառաջանա անկախ վնասը պատճառելու ժամկետներից:

Ֆրանսիական օրենսդրությունը չունի հստակ նորմեր, որոնք կսահմանեն պատասխանատվություն ապրանքների թերություններով պատճառված վնասի համար, սակայն Ֆրանսիայի քաղ. օր.-ի և դատական պրակտիկայի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ օրենսգրքի մի շարք դրույթներ հնարավորություն են տալիս ապրանքի թերությամբ պատճառված վնասի հատուցում գանձել նախնառաջ ապրանքը վաճառողից, ապա նաև արտադրողից: Մասնավորապես Ֆրանսիայի քաղ. օր. 1641-1646 հոդվածները ապրանքը գնողին հնարավորություն են տալիս ապրանքի թերության վերացման պահանջով դիմել վաճառողին: Ինչպես նշվում է իրավաբանական գրականության մեջ, նշված հոդվածները, հատկապես քաղ. օր. 1645-1646 հոդվածները, հնարավորություն են տալիս տուժողին պահանջ ներկայացնել նաև ապրանքի թերությամբ պատճառված վնասի հատուցման համար¹¹:

¹⁰ Տե՛ս «Մպառողների իրավունքների պաշտպանության մասին» 2001 թ. հունիսի 26-ի ՀՀ օրենք, հոդված 6:

¹¹ Տե՛ս **Walter van Gerven, Jeremy Lever, Pierre Larouche**, նշվ. աշխ., էջ 621:

Ընդ որում որոշ դեպքերում դատական պրակտիկան հնարավորություն է տալիս ապրանքի թերությանը պատճառված վնասի համար հատուցման շրթան հասցնել մինչև արտադրողին, սակայն այս դեպքում ևս արտադրողը դիտվում է որպես պայմանագրի կողմ: Ինչ վերաբերում է ապրանքի թերությանը երրորդ անձանց պատճառված վնասի հատուցմանը, ապա հարկ ենք համարում նշել, որ չնայած երրորդ անձինք պայմանագրի կողմ չեն և ըստ էության չեն կարող վնասի հատուցում պահանջել անմիջապես վաճառողից կամ արտադրողից, սակայն Ֆրանսիայի քաղ. օր. 1384 հոդվածը հնարավորություն է տալիս տուժողին վնասի հատուցման հայցով դիմել ընդդեմ ցանկացած ապրանքի տիրոջ: Իսկ դատական պրակտիկան իր հերթին շարժվում է այն ուղղությամբ, որ եթե վնասը պատճառվել է ապրանքի թերությունների հետևանքով, ապա վնասի հատուցման պարտականություն երրորդ անձանց նկատմամբ պետք է ծագի նաև ապրանքը վաճառողի և արտադրողի մոտ¹²: Այս կապակցությամբ, կարծում ենք, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ավելի հստակ է, քանզի այն հստակ սահմանում է, որ պատճառված վնասի դեպքում տուժողը իրավունք ունի պահանջ ներկայացնել թե՛ ապրանքը վաճառողին և թե՛ արտադրողին, անկախ տուժողի՝ այդ անձանց հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվելու հանգամանքից:

Ապրանքների համար պատասխանատվության ինստիտուտը անգլիական իրավունքում չի ունեցել դոկտրինալ և տեսական զարգացում: Ապրանքների օգտագործումից առաջացած վնասի հատուցման հարցերը կարգավորվել են անգլիական ընդհանուր օրենսդրության նորմերով, մասնավորապես առուվաճառքի և դելիվտային իրավունքի կանոններով: Ինչ վերաբերում է ապրանքների առուվաճառքին, ապա համապատասխան հարաբերությունները կարգավորվում են 1979 թ. «Ապրանքների վաճառքի», ինչպես նաև 1982 թ. «Ապրանքների և ծառայությունների մատուցման» ակտերով, որոնք կարգավորում են ապրանքների որակին առնչվող հարցեր: Մասնավորապես, ինչպես նշում է Գ. Հոուելսը, ակտերը յուրաքանչյուր առուծախի պայմանագրի համար սահմանում են երեք պարտադիր դրույթ, որոնցից առաջինի համաձայն՝ ապրանքները պետք է վաճառվեն համապատասխան իրենց նկարագրի, երկրորդը՝ ապրանքները պետք է լինեն բավարար որակի, այսինքն՝ դրանք պետք է համապատասխանեն գնորդի պահանջներին, իսկ ըստ երրորդ պահանջի՝ ապրանքները պետք է համապատասխանեն և օգտագործելի լինեն այն նպատակի համար, որի համար դրանք պատրաստվել են¹³: Ընդ որում հարկ է նշել, որ այս երեք պայմանները

¹² Այս մասին ավելի մանրամասն տե՛ս **G. Viney and P. Jourdain**, *Traite de droit civil, Les conditions de la responsabilite*, 2nd edn. (Paris: LGDJ, 1998) էջ 700-789, **Walter van Gerwen, Jeremy Lever, Pierre Larouche**, նշվ. աշխ., էջ 624-628:

¹³ Տե՛ս **G. Howells**, *Comparative Product Liability* (Aldershot: Dartmouth, 1933) էջեր 53-56:

պարտադիր են և չեն կարող հանվել առուվաճառքի պայմանագրից: Նշված ակտերը, բացի նրանից, որ հնարավորություն են տալիս գնորդին ապրանքի թերության դեպքում համապատասխան պահանջ ներկայացնել վաճառողին, նաև իրավական հիմք են ստեղծում գնված ապրանքով վնաս պատճառվելու դեպքում վաճառողին ներկայացնել նաև վնասի հատուցման հայց: Ընդ որում հատուցման են ենթակա ինչպես առողջությանը, այնպես էլ գույքին պատճառված վնասը¹⁴: Ինչպես նշվում է անգլիական իրավաբանական գրականության մեջ, ապրանքների թերությամբ պատճառված վնասի դեպքում, հնարավորություն չի տրվում ոչ միայն երրորդ անձանց վնասի հատուցում պահանջել, այլև սահմանափակում է գնորդի իրավունքը՝ անմիջապես պատասխանատվության կանչելու արտադրողին: Գնորդը հնարավորություն ունի միայն պայմանագրի հիման վրա պահանջ ներկայացնելու վաճառողի դեմ¹⁵:

Միակ հնարավորությունը, որով անգլիական իրավունքում արտադրության և ապրանքի վաճառքի շղթայի միջոցով հնարավոր է արտադրողին պատասխանատվության ենթարկել՝ դելիկտային իրավունքն է. օրինակ Դոնահյուն ընդդեմ Ստիվենսոնի գործը, որը փաստորեն խնդրին ամենահամապատասխան գործն է¹⁶, քանի որ գործի վերաբերյալ վերջնական որոշմամբ հայցվորը հնարավորություն ստացավ հայց հարուցելու և վնասների հատուցում ստանալու անմիջապես արտադրողից:

Ընդհանրապես հարկ ենք համարում նշել, որ անգլիական իրավաբանական գրականության մեջ բազմիցս քննադատության է ենթարկվել ապրանքների և ծառայությունների մատակարարման հետևանքով պատճառված վնասի հատուցման ինստիտուտի՝ Անգլիայում առկա համակարգը, մասնավորապես այն առնչությամբ, որ ապացուցման հիմնական պարտականությունը դրվում է հայցվորի վրա: Մակայն անգլիական դատական իրավունքը ըստ էության չի արձագանքել այս խնդրին, դեռ ավելին՝ Անգլիայի դատարանները անում են ամեն հնարավորը, որ հայցվորը հնարավորինս շատ ապացույցներ ներկայացնի դատարան¹⁷:

Քննադատության առվել ուժեղ սլաքը ուղղված է ապրանքների թերությունների համար ըստ մեղքի պատասխանատվության բացառմանը՝ սահմանելով առանց մեղքի պատասխանատվություն¹⁸:

ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ապրանքների, ծառայությունների

¹⁴ Տե՛ս **W.V.H. Rogers**, Winfield and Jolowicz on Tort, 15th edn. (London: Sweet & Maxwell, 1998) էջ 326:

¹⁵ Տե՛ս **G. Howells**, նշվ. աշխ., էջ 64, **W.V.H. Rogers** նշվ. աշխ., էջ 327:

¹⁶ Այս մասին ավելի մանրամասն, ինչպես նաև գործին ծանոթանալու համար տե՛ս **Walter van Gerven**, նշվ. աշխ., Գլուխ 1, հղում 1.E.23, ինչպես նաև էջ 636:

¹⁷ Տե՛ս **J. Stapelton**, Product Liability (London: Butterworths, 1994) էջ 43-44:

¹⁸ Տե՛ս **P. Atiyah**, Accidents, Compensation and the Law (London: Weidenfeld & Nicholson 1970), P.Cane, Atiyah's Accidents, Compensation and the Law, 5th edn. (London: Butterworths, 1993):

րի և աշխատանքների համար սահմանելով խստացված պատասխանատվություն, պատճառված վնասից ազատվելու համար նախատեսում է միայն անհաղթահարելի ուժի առկայությունը և սպառողի կողմից ապրանքների, աշխատանքների, ծառայությունների օգտագործման կամ դրանց պահպանման համար սահմանված կանոնները խախտելու հետևանքը: Ընդ որում, այդ հանգամանքները պետք է ապացուցվեն վաճառողի կամ արտադրողի, աշխատանքներ կատարողի կամ ծառայություններ մատուցողի կողմից:

Համեմատելով ապրանքների և ծառայությունների մատկարարման հետևանքով պատճառված վնասի հարցերը կարգավորող ՀՀ քաղաքացիական օրենսդրությունը քննարկվող երկրների օրենսդրությունների հետ՝ կարող ենք արձանագրել, որ ՀՀ քաղ. օր.-ը բավականին ամբողջական մոտեցում է դրսևորում հարցի վերաբերյալ, որի դրույթները ակնհայտորեն ավելի համակոդմանի են դարձնում տուժողների շահերի պաշտպանությունը: Դեռ ավելին, որոշ դեպքերում ակնհայտ է, որ արևմտյան երկրների իրավակարգավորումները միտված են ձևափոխման և կատարելագործման այն ուղղությամբ, որն արդեն իսկ առկա է ՀՀ օրենսդրությունում: Անշուշտ այս հանգամանքը դրական է բնութագրում ՀՀ քաղ. օր.-ը և կարևորում դրանում առկա թերությունների շուտափույթ վերացումը, որը ավելի արդյունավետ կդարձնի ընդհանրապես ապրանքների, ծառայությունների և աշխատանքների կատարման հետևանքով պատճառված վնասի հատուցումը:

Բանալի բառեր – *ապրանքներ, ծառայություններ, աշխատանքներ, վնաս, հատուցում, տուժող*

ГРИГОР БЕКМЕЗЯН – Компенсация вреда, причинённого вследствие недостатков товара, работы или услуги. – Компенсация вреда, причинённого недостатками товара, работы либо услуги, – один из важнейших институтов гражданского права. Значимость ущерба, вызванного дефектами товаров, работ или услуг, выросла во второй половине XX века, когда рост производства и предоставления услуг поставили потребителя в сложную ситуацию.

Гражданский кодекс РА, принятый в 1998 г., ввёл новый, соответствующий современным тенденциям подход к урегулированию этого вопроса. Важно также выяснить актуальность и полноту правовых норм армянского кодекса сравнительно с правовыми нормами других стран. Этому сравнению как раз и посвящена статья.

Ключевые слова: *товары, услуги, работа, вред, компенсация, потерпевший*

GRIGOR BEKMEZYAN – Compensation for Harm Caused by Defects of Products, Works or Services. – Compensation for harm caused by products, works or services is one of the most important institutes of civil law. The problem of damage caused by defects of goods, works or services was particularly significant and got more importance from the second half of the 20th century when the increase in production

and service delivery put the final consumer into a difficult situation.

Civil Code of the Republic of Armenia adopted in 1998, introduced a new approach to the settlement of the discussed issue that was consistent with the trends in time development. But it is also important to find out the relevance and completeness of the Code's legal regulations of the highlighted issue in comparison with the legal regulations of other countries.

The study examined Armenia's legal regulations on compensation for harm caused by defects of products, works or services in the context of a comparison with a number of foreign countries.

Key words: *goods, services, work, harm, compensation, the victim*

ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ

ԱՆՉԱՓԱՀԱՍ ՏՈՒԺՈՂԻ ԻՐԱՎՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

ՍԱՄՎԵԼ ԴԻԼԲԱՆԴՅԱՆ

Քրեական դատավարության անմիջական խնդիրներից են հանցագործություն կատարած անձանց բացահայտելը և նրանց քրեական պատասխանատվության ենթարկելը: Այս խնդրի իրականացումը բնականաբար ենթադրում է հանցագործությունից տուժած անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանություն: Պետությունը պարտավոր է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ պաշտպանելու անձի կյանքը, պատիվը և արժանապատվությունը, սեփականությունը: Ըստ ՀՀ Սահմանադրության 3 հոդվածի 3-րդ կետի. «Հանրային իշխանությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն ծագող իրավունք»:

Հանցագործությունից տուժած անձնաց իրավունքների պաշտպանությունը բավականին բարդ խնդիր է, որովհետև միշտ չէ, որ հանցագործությունները բացահայտվում են, իսկ դրանցից տուժած անձինք հնարավորություն են ունենում ստանալու կրած վնասների հատուցում: Այս գործընթացի համար կարևոր է նաև տուժողի վարքագիծը: Հանցագործությունից տուժած անձինք շահագրգռված են շուտ ներգրավվելու վարույթ և իրենց գործողություններով նպաստելու հանցագործության բացահայտմանը:

Քրեական դատավարությունում տուժողի ակտիվությունը բխում է նրա իրավական վիճակի օրենսդրական ճիշտ կարգավորումից: Սա նշանակում է, որ անհրաժեշտ է ինչպես այդ հասկացության, այնպես էլ նրա իրավունքների և պարտականությունների ու դրանց իրականացումն ապահովող երաշխիքների հստակ կարգավորում: Այսօր փոփոխության են ենթարկվում քրեական դատավարության գրեթե բոլոր ինստիտուտները, այդ թվում նաև «տուժող» հասկացությունը և նրա կարգավիճակը:

Քրեական դատավարության գործող օրենսդրությամբ նախատեսված բոլոր ինստիտուտներն անցել են պատմական զարգացում. այդ թվում նաև տուժողի ինստիտուտը. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58 հոդվածում տրված բնորոշումը էապես տարբերվում է ՀԽՍՀ քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած ձևակեր-

պումից: Դատավարական ինստիտուտների զարգացման ընթացքը դիտարկելիս նկատում ենք, որ ներկա ձևակերպումը չի համապատասխանում այն պահանջներին, որոնք դրված են քրեական դատավարության առջև: Այս փաստի վառ վկայությունն է ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի 6 հոդվածի 26-րդ կետում տեղ գտած բնորոշումը, ըստ որի՝ տուժող է համարվում այն ֆիզիկական կամ իրավաբանական անձը, ում վերաբերյալ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ ենթադրյալ հանցագործությամբ նրան պատճառվել է վնաս կամ կարող էր պատճառվել՝ ենթադրյալ հանցանքն ավարտին հասցնելու դեպքում:

Տուժողի հասկացության ճիշտ բնորոշումը կարևոր է նաև անչափահաս անձանց իրավունքների պաշտպանության համար: Քրեական դատավարության օրենսգրքում չկա անչափահաս տուժողի առանձին բնորոշում կամ նրա իրավական վիճակի հատուկ կարգավորում: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58 հոդվածում տեղ գտած կարգավորումը հավասարապես վերաբերում է նաև անչափահաս տուժողին, որը դատավարության ինքնուրույն սուբյեկտ է: Օրենսդիրը սահմանել է իրավունքների և պարտականությունների, օրինական շահերի և դրանց երաշխիքների այնպիսի համակցություն, որն անհրաժեշտ է հանցագործությունից տուժած անձին դատավարությունում իր օրինական շահերը պաշտպանելու համար: Այդ տարրերն ընդհանուր են հանցագործությունից տուժած բոլոր անձանց համար՝ անկախ նրանց ծագումից, սոցիալական վիճակից, սեռից և այլ հատկանիշներից, այսինքն՝ բոլոր տուժողներն իրենց իրավական վիճակով նույնն են:

«Անչափահաս տուժող» հասկացությանը հանդիպում ենք քրեական դատավարության տարբեր հոդվածներում, որոնցում սահմանված են դատավարական որոշակի գործողությունների կատարմանը նրանց մասնակցության առանձնահատկությունները: Առանձնակի կարևոր է անչափահաս տուժողի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը: Անչափահաս տուժողի համար դժվար է քրեական վարույթի ընթացքում ինքնուրույն իրականացնել իր շահերի պաշտպանությունը: Ճիշտ է, անչափահաս տուժողը քրեական հետապնդման ենթարկված անձ չէ, բայց քրեական վարույթի շրջանակներում ունի ինչպես նյութական, այնպես էլ դատավարական շահ: Հետևաբար, քրեական վարույթի շրջանակներում չեն կարող հաշվի չառնվել անչափահաս տուժողի հոգեկան վիճակի, մտավոր զարգացածության աստիճանը, տարիքը և այլ հատկանիշներ:

«Անչափահաս» և «երեխա» հասկացությունները կիրառվում են տարբեր իրավական ակտերում, քանի որ անչափահասը մասնակից է տարբեր հարաբերությունների: Այսինքն՝ ՀՀ օրենսդրության մեջ զուգահեռաբար օգտագործվում են ինչպես «երեխա», այնպես էլ «անչափահաս» հասկացությունները: Երեխաների իրավունքների պաշտպա-

նությանն ուղղված հիմնական իրավական ակտերից է ՀՀ Ազգային ժողովի կողմից 1996 թվականի մայիսի 29-ին ընդունված «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքը: Երկու դեպքում էլ տարիքային սահմանը նույնն է: «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունում սույն օրենքի գործողությունը տարածվում է մինչև 18 տարեկան անձանց վրա»:

Քրեական դատավարությունում տարիքային նման կարագավորում նախատեսված է հանցագործություն կատարած անձանց համար: Այսպես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 439 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «սույն օրենսգրքի դրույթները կիրառվում են այն անձանց հանցագործությունների վերաբերյալ գործերով, ում տասնութ տարին լրացել է հանցանքը կատարելու պահին»: Նախագծի 410 հոդվածի համաձայն՝ «սույն գլխի դրույթները կիրառվում են այն անձանց վերաբերյալ վարույթով, ում տասնութ տարին չի լրացել ձեռքարկման կամ մեղադրանք ներկայացնելու պահին»: Ինչպես տեսնում ենք, Նախագծով նույնպես անչափահասության տարիք է համարվում մինչև 18 տարին: Քրեական դատավարության գործող օրենսգիրքը, անչափահասի տարիքային առանձնահատկություններից ելնելով, նախատեսում է դատավարական ձևի որոշ տարբերակում, մասնավորապես քրեական դատավարության օրենսգրքի 50-րդ գլուխը նվիրված է անչափահասների գործերով վարույթային առանձնահատկություններին: Պետք է նշել, որ այդ գլխում հիմնականում կարգավորվում են անչափահաս կասկածյալին կամ մեղադրյալին վերաբերող հարցերը: Կարծում ենք, որ քրեական դատավարության օրենսգրքում տեղ գտած վերը նշված կարգավորումը վերաբերում է նաև անչափահաս տուժողին:

Այսպիսի իրավական կարգավորման համար հիմք են նաև միջազգային իրավական կարգավորումները, մասնավորապես ՄԱԿ-ի Նվազագույն կանոնները անչափահասի նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ («Պեկինյան կանոններ»), որի 2.2 կետի համաձայն՝ «անչափահաս է համարվում այն երեխան կամ երիտասարդը, որը իրավախախտման համար, գործող իրավական համակարգի շրջանակներում, կարող է ենթարկվել պատասխանատվության մեծահասակի նկատմամբ գործադրվող պատասխանատվության ձևից տարբերվող ձևով»¹: Պետք է նշել, որ տարիքային սահմանները կախված են յուրաքանչյուր իրավական համակարգի դրույթներից՝ ըստ անդամ պետությունների տնտեսական, սոցիալական, մշակութային առանձնահատկությունների: Դրա համար «անչափահաս» հասկացությունն ընդգրկում է բավականին լայն շրջանակ, այսինքն՝ 7-ից մինչև 18 տարեկան կամ ավելի մեծ: Այդպիսի շրջանակն անխուսափելի է՝ նկատի ունենալով ազգային իրավական համակարգերի բազմազանությունը, և չի նվազեցնում վերը նշված չափորոշիչ կանոնների նշանակությունը:

¹ http://advocates.am/images/photos_of_advocates/ex_1/1._ANCHAPAHAS.pdf:

Անչափահասի վերաբերյալ միջազգային ակտերում և ազգային օրենսդրության մեջ տեղ գտած տարիքային սահմանը վերաբերում է նաև անչափահաս տուժողին:

Պետք է նշել, որ միջազգային հանրության կողմից սահմանվել են արդարադատության իրականացման նվազագույն չափորոշիչներ նաև անչափահաս տուժողների և վկաների համար: Այսպես, 2005 թվականի հուլիսի 22-ին ՄԱԿ ընդունեց Արդարադատության ղեկավար սկզբունքները, որոնք վերաբերում են հանցագործությունից զոհ, այսինքն՝ տուժող դարձած երեխային և վկային:

Հանցագործությունից տուժած անչափահաս անձանց պաշտպանության վերաբերյալ միջազգային հանրության կողմից ղեկավար սկզբունքների մշակումը և ազգային օրենսդրության մեջ և պրակտիկայում դրանց կիրառումը կարևոր երաշխիք են այդ կատեգորիայի անձանց համար, որովհետև երեխան կրկնակի դժվարություն է կրում արդարադատությանը մասնակցելիս: Երեխաներն առանձնանում են ըստ իրենց տարիքային հասունության աստիճանի և անհատական հատկանիշների:

Քրեական վարույթն իրականացնող մարմինները և պաշտոնատար անձինք քրեական գործով վարույթի ընթացքում պարտավոր են անչափահաս տուժողի համար ապահովել հետևյալ սկզբունքների կիրառումը՝ արժանապատվության, բոլորի հավասարության, երեխայի լավագույն շահի պաշտպանության, ներդաշնակ զարգացման, արդար դատական քննության: Քրեական վարույթն իրականացնող մարմինները պետք է առաջնորդվեն այն գաղափարով, որ յուրաքանչյուր անչափահաս ունի իր արժեքային համակարգը, անձնական արժանապատվությունը, հստակ պահանջներ, շահեր և անձնական կյանք:

Իրավաբանական օգնություն ստանալու մեղադրյալի իրավունքն առավել ապահովված է, քան տուժողի: Մասնավորապես, եթե կասկածյալի կամ մեղադրյալի համար քրեական վարույթին պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, ապա նույնը չի կարելի ասել անչափահաս տուժողի դեպքում: Կարծում ենք, որ, չնայած նրանց դատավարական վիճակի տարբերությանը, այնուամենայնիվ, հաշվի առնելով անչափահաս տուժողի հոգեկան և մտավոր զարգացածության վիճակը, ցանկալի կլիներ, որ նրա համար նույնպես ապահովվեր պարտադիր իրավական օգնություն ստանալու հնարավորություն:

Անչափահաս տուժողի համար որպես երաշխիք սահմանված է մանկավարժի պարտադիր մասնակցություն միայն հարցաքննության ընթացքում: Անչափահաս տուժողի իրավաբանական օգնությունից անվճար օգտվելու հնարավորության բացակայությունը նրա շահերի պաշտպանության առումով որոշակի մտահոգության տեղիք է տալիս: Կարծում ենք, որ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում պետք է վերացնել այդ սահմանափակումը և իրական երաշխիք

նախատեսել քրեական վարույթի շրջանակներում անչափահաս անձանց իրավունքների պաշտպանության ապահովման համար:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 58 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ «Անչափահաս կամ անգործունակ տուժողի իրավունքները սույն օրենսգրքով սահմանված կարգով նրա փոխարեն իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչը»: Քրեադատավարական օրենսդրությամբ չի կարգավորվում այն հարցը, թե ինչ պետք է անել այն դեպքերում, երբ անչափահաս տուժողի՝ դատավարությանը ներգրավված օրինական ներկայացուցիչը հիվանդանում է կամ ֆիզիկական արատ ունի:

Անչափահաս տուժողի իրավական վիճակի բնութագրման համար կարևոր են նրա իրավունակությունը և գործունակությունը, որոնք յուրաքանչյուր սուբյեկտի իրավական վիճակը բնութագրող կարևոր տարրեր են: Քրեադատավարական օրենսդրության մեջ չի նախատեսված իրավունակության և գործունակության բնորոշումը, հետևաբար դատավարագետներն իրենց ուսումնասիրության հիմքում դնում են քաղաքացիական օրենսդրության մեջ տեղ գտած ձևակերպումները:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 20 հոդվածի համաձայն՝ «Քաղաքացիական իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունը (քաղաքացիական իրավունակություն) բոլոր քաղաքացիների համար ճանաչվում է հավասարապես:

Քաղաքացու իրավունակությունը ծագում է նրա ծննդյան պահին և դադարում է մահվամբ»:

Իրավունակությունը սուբյեկտի իրավունքներ և պարտականություններ ունենալու ունակությունն է, որն առաջ է գալիս սուբյեկտի հետ միասին, անկախ այն բանից՝ նա դրանք կարող է իրականացնել, թե ոչ: Այսպես, ցանկացած անչափահաս անձ, որին հանցագործությամբ պատճառվել է բարոյական, ֆիզիկական կամ գույքային վնաս, կարող է լինել դատավարական սուբյեկտիվ իրավունքների և իրավաբանական պարտականությունների կրող: Հետևաբար, իրավունակությունը տուժողի իրավական վիճակը բնութագրող առավել ընդհանուր տարր է:

Ճիշտ է, իրավունակությունը ընդհանուր իրավաբանական կատեգորիա է, բայց այն սուբյեկտիվ իրավունքների հետ նույնացնել չի կարելի²: Կարծում ենք, որ իրավունակությունը՝ որպես անձի սուբյեկտիվ իրավունքներ և պարտականություններ ունենալու նախադրյալ, չի կարող լինել իրավունք կամ սուբյեկտիվ իրավունքների համակցություն: Իրավունակության օրենսդրական բնորոշումից երևում է, որ վերջինիս էական բնութագրիչը ոչ թե «իրավունք» հասկացությունն է, այլ այդ իրավունքն ունենալու և իրականացնելու անձի ունակությունը:

² Տե՛ս **Мицкевич А. В.** Субъекты советского права. М., 1962, էջ 5, **Чечот Д. М.** Субъективное право и формы его защиты, Л., 1968, էջ 11:

Ելնելով վերը շարադրվածից՝ կարծում ենք, որ քրեադատավարական օրենսդրության մեջ քրեադատավարական իրավունակությունը կարելի է բնորոշել հետևյալ կերպ. քրեական դատավարությանը մասնակից լինելու, դատավարական իրավունքներ և պարտականություններ ունենալու ունակությունը հավասարապես ճանաչելի է բոլոր ֆիզիկական և իրավաբանական անձանց համար:

Քրեական դատավարությունում իրավունքներ և պարտականություններ ունենալու ունակությունը դատավարության մասնակցի համար բավարար չէ դատավարությանն ակտիվ մասնակցելու համար: Որպեսզի դատավարության մասնակիցը կարողանա մասնակցել դատավարական իրավահարաբերություններին, պետք է օժտված լինի նաև այդ իրավունքներն ու պարտականություններն իրականացնելու ունակությամբ, այսինքն՝ գործունակությամբ: Միայն քրեադատավարական իրավունակությունն ու գործունակությունն են անձին հնարավորություն տալիս իրականացնելու իր դատավարական իրավունքներն ու պարտականությունները³: Հետևաբար, քրեադատավարական իրավասուբյեկտության մյուս կարևոր տարրը գործունակությունն է:

Իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու ու դրանք կատարելու քաղաքացու ունակությունը (քաղաքացիական գործունակություն) լրիվ ծավալով ծագում է չափահաս, այսինքն՝ տասնութ տարեկան դառնալու պահից (ՀՀ քաղ. օր.-ի հոդված 24, մաս 1): Դատավարության սուբյեկտի համար շատ կարևոր է նրա գործունակությունը, այսինքն՝ ինքնուրույնաբար իրավունքներն իրականացնելու և պարտականությունները կրելու ունակությունը: Հակառակ դեպքում անձը զգում է ներկայացուցչի կարիք, որը նրա փոխարեն պետք է իրականացնի այդ իրավունքները:

Պ. Վ. Պոլոսկովան քրեադատավարական գործունակությունը բնութագրում է որպես ինքնուրույն դատավարական գործողություններ իրականացնելու կամ դրանց մասնակցելու քրեական դատավարության իրավունքի կողմից ճանաչված անձի հոգեկան և ֆիզիկական ունակություն, իր քրեադատավարական իրավունքները գիտակցաբար օգտագործելու և պարտականությունները կատարելու ունակություն⁴:

Գործունակությունը քրեական դատավարության բոլոր սուբյեկտների համար նույն արտահայտությունը չունի: Սա նշանակում է, որ գործունակությունը կախված է սուբյեկտի դատավարական վիճակից: Այսպես, մեղադրյալը լրիվ գործունակ է դառնում 16 տարեկանից, քանի որ այդ տարիքից անձը դառնում է քրեական պատասխանատվու-

³ См. у Зусь Л. Б. Об уголовно-процессуальной правосубъектности // «Правоведение», 1974, № 5, էջ 52:

⁴ См. у Полоскова П. В. Правоспособность и дееспособность в советском уголовном процессе. Дисс. ... канд. юрид. наук. М., 1985, էջ 35:

յան ենթակա սուբյեկտ: Ճիշտ է, քրեադատավարական օրենսդրությանը ապահովվում է պաշտպանի պարտադիր մասնակցությունը, իսկ օրինական ներկայացուցիչն իրավունք ունի մասնակցելու դատավարությանը, բայց նշված սուբյեկտի մասնակցությունը չի սահմանափակում մեղադրյալի կողմից՝ իր դատավարական իրավունքներն իրականացնելու հնարավորությունը:

Անչափահաս տուժողի համար քրեական դատավարության օրենսգրքով սահմանվում է այլ կարգավորում, այսինքն՝ անչափահաս կամ անգործունակ տուժողի իրավունքներն իրականացնում է նրա օրինական ներկայացուցիչը:

Դատավարական գրականության մեջ տուժողի գործունակության համար առանձնացվում են հետևյալ երեք հատկանիշները՝ 1) տարիքը, 2) ֆիզիկական վիճակը, 3) հոգեկան վիճակը⁵: Այս հատկանիշներից որևէ մեկի բացակայությունը ենթադրում է, որ անչափահասը դատավարությունում լիարժեք չի կարող իրականացնել իր գործունակությունը: Տուժողը դատավարության ակտիվ սուբյեկտ կարող է համարվել, եթե առկա են վերը թվարկված հատկանիշները:

Քրեական դատավարության գործող օրենսդրությամբ առանձնացվում է միայն երկու հատկանիշ՝ 1) տարիքը (այսինքն՝ եթե անչափահաս է) և 2) անգործունակությունը: Քրեական դատավարության օրենսգրքում չի տրված անգործունակության սահմանումը, բայց առանձնացվում են «անգործունակ» և «սահմանափակ գործունակ» հասկացությունները, համապատասխան սահմանափակումներով (ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 77, մաս 2 և 3):

Իհարկե, օրենսգրքում տեղ գտած կարգավորումը սահմանափակում է անչափահաս տուժողի իրավունքները, քանի որ հնարավոր է, որ անձը չլինի հոգեկան հիվանդ, բայց ունենա այնպիսի ֆիզիկական պակասություններ, որոնք խոչընդոտեն իր իրավունքների իրականացումը: Այս տեսանկյունից որոշակի անհավասարություն կարող ենք տեսնել անչափահաս տուժողի և անչափահաս մեղադրյալի դատավարական իրավունքների իրականացման մեջ: Անչափահաս տուժողի գործունակությունը պայմանավորված է նրա տարիքով: Քրեադատավարական իրավահարաբերությունների շրջանակներում այն անկասկած ունի նաև իր առանձնահատկությունները: Օրենսդիրը դատավարության յուրաքանչյուր մասնակցի իրավական վիճակը կարգավորելիս ելնում է հանցագործության հետ նրա կապի բնույթից, շահագրգռվածության աստիճանից, դատավարությունում զբաղեցրած վիճակից և այլ հանգամանքներից:

Պետք է նշել, որ քրեական դատավարության իրավունքի տեսության մեջ այս հարցի վերաբերյալ չկա միասնական մոտեցում: Այսպես,

⁵ Տե՛ս **Строжевич Ю. Н.** Правовой статус несовершеннолетнего потерпевшего в Российском уголовном процессе. Дисс. ... канд. юрид. наук. М., 2008, էջ 46:

օրինակ՝ որոշ հեղինակների կարծիքով անչափահաս անձն անկախ տարիքից իրավունք ունի անձամբ իրականացնելու տուժողի և քաղաքացիական հայցվորի իր իրավունքները⁶: Այլ հեղինակներ գտնում են, որ տուժողը լրիվ գործունակ է համարվում 16 տարեկանից, քանի որ այդ տարիքից կարող է ցուցմունք չտալու կամ ակնհայտ սուտ ցուցմունք տալու համար ենթարկվել քրեական պատասխանատվության⁷:

Որոշ դատավարագետներ գտնում են, որ տուժողին չափահաս դառնալու պահից քրեադատավարական գործունակություն տալը առավելապես բխում է նրա իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունից⁸: Լ. Ռ. Կոկորևի կարծիքով, քրեական դատավարությունում սահմանափակ գործունակությունը սկսվում է 16 տարեկանից⁹:

Մ. Վ. Տանցերևն առաջարկում է բոլոր տուժողներին բաժանել երեք խմբի՝ 1) անգործունակ, 2) սահմանափակ գործունակ, 3) լրիվ գործունակ: Այսինքն՝ մինչև 14 տարեկան անչափահասները համարվում են անգործունակ, իսկ 14-ից մինչև 18 տարեկանները՝ սահմանափակ գործունակ¹⁰: Պետք է նշել, որ այդպիսի կարգավորում նախատեսված է ՀՀ քրեադատավարական օրենսդրությամբ, բայց առանց տարիքային շեմն ընդգծելու: Նշված հարցի կապակցությամբ ՄԱԿ-ի Երեխայի իրավունքների մասին կոնվենցիան իրավունքի իրականացումը չի պայմանավորում երեխայի տարիքով: ՄԱԿ-ի 2005 թվականի Ղեկավար սկզբունքներում նույնպես սահմանված է, որ տարիքը չպետք է խոչընդոտի անչափահասի կողմից իր իրավունքների ամբողջական իրացումը և արդարադատության իրականացմանը լրիվ մասնակցությունը: Հիմք ընդունելով միջազգային իրավական նշված կարգավորումը՝ պետք է քրեական դատավարության գործող օրենսգրքում համապատասխան փոփոխություն կատարել և չսահմանափակել տուժողի՝ իր իրավունքներն ամբողջական իրականացնելու հնարավորությունը: Անչափահաս տուժողը պետք է իրազեկված լինի դատավարությունում կատարվող գործողությունների ընթացքի մասին, այսինքն՝ տարիքային հանգամանքը չպետք է խոչընդոտի դատավարության ընթացքի մասին նրա իրազեկվածությունը:

Մեր երկրում անձը լրիվ գործունակ է դառնում 18 տարին լրանալու պահից: Այս տարիքային շեմը լրիվ հասկանալի և ընդունելի է: Պետք է նշել, որ իրավունքի տարբեր ճյուղերում տարիքային այդ շեմը

⁶ Տե՛ս **Смирнов Л., Грун А.** Рецензия на книги Мазлова А. Г. «Гражданский иск в уголовном процессе» (М., 1967) // «Соц. законность», 1968, № 8, էջ 96:

⁷ Տե՛ս **Божьев В. П.** К вопросу о понятии потерпевшего в советском уголовном процессе // "Учен. зап. ВИЮН". Вып. 15, 1962, էջ 178:

⁸ Տե՛ս **Тетерина Т. В.** Проблемы обеспечения имущественных, иных прав и законных интересов потерпевшего в уголовном процессе. Автореф. дисс. ... канд. юрид. наук. Н. Новгород, 2004, էջ 10:

⁹ Տե՛ս **Кокорев Л. Д.** Потерпевший от преступления. Воронеж, 1964, էջ 18:

¹⁰ Տե՛ս **Танцеров М. В.** Потерпевший и его функция в уголовном процессе России. Дисс. ... канд. юрид. наук. Томск, 1999, էջ 58:

նույնանման չի կարգավորվում: Քրեական դատավարության օրենսդրությամբ սահմանվում է նաև սահմանափակ գործունակության հնարավորություն, իսկ թե որ տարիքից է անձը համարվում սահմանափակ գործունակ, քրեական դատավարության օրենսդրությունը չի կարգավորում: Ընդհանուր հետևությունն այն է, որ քրեական դատավարությունում անչափահաս տուժողի իրավունքների և իրավաչափ շահերի պաշտպանությունից ելնելով՝ քննարկվող հիմնախնդրին պետք է տալ հստակ կարգավորում:

Բանալի բառեր – տուժող, անչափահաս, երեխա, իրավունակություն, գործունակություն, իրավունքներ, պաշտպանություն

SAMVEL DILBANDYAN – Правоспособность и дееспособность несовершеннолетнего потерпевшего в уголовном процессе. – Защита прав и законных интересов несовершеннолетних жертв особенно важна, поскольку сами они в силу возраста и психологических качеств не могут защитить их надлежащим образом. Для урегулирования правового положения несовершеннолетних жертв в уголовном процессе необходимо исследовать их правоспособность и дееспособность, а также установить некоторые особенности производства.

Ключевые слова: потерпевший, несовершеннолетний, ребёнок, правоспособность, дееспособность, права, защита

SAMVEL DILBANDYAN – Juvenile Victim`s Legal Capacity and Capacity for Civil Conduct Criminal Proceedings. – The protection of the rights and legitimate interests of juvenile victims is important in criminal proceedings as due to their age and psychological condition they are not able adequately protect their rights and legitimate interests. For the settlement of the legal status of underage victims in the criminal process, their legal capacity and capacity for civil conduct should be examined. Protection of the rights and legitimate interests of juveniles requires certain peculiarities of criminal proceedings.

Key words: victim, juvenile, child, legal capacity, capacity, rights, protection

**ՔՆՆՀԱԿԱՆ ՓՈՐՁԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ ՈՐՈՇ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

ՎԱՇԵ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

Քրեական գործի քննության ընթացքում ապացույցների հավաքման, ստուգման, գնահատման և օգտագործման նպատակով երբեմն կարիք է զգացվում որոշակի փորձնական ու ստուգողական բնույթի գործողություններ կատարելու, որով էլ պայմանավորված են քննչական գործողությունների համակարգում քննչական փորձարարության կարևոր տեղն ու դերը:

Մասնագիտական գրականության մեջ «քննչական փորձարարություն» հասկացության վերաբերյալ ձևավորված միասնական մոտեցում գոյություն չունի: Որոշ հեղինակներ գտնում են, որ քննչական փորձարարությունը ինչպես ինքնուրույն գործողություն է (քննչական, դատական, օպերատիվ-հետախուզական), այնպես էլ այլ գործողության կամ փոխկապակցված համալիր գործողությունների իրականացման ընթացքում կիրառվող հնարք է (օրինակ՝ դեպքի տեղի զննության) կամ էլ փորձագիտական հետազոտության բաղկացուցիչ մաս է (փուլ):

Մյուս տեսակետի կողմնակիցները քննչական փորձարարությունը համարում են ինքնուրույն քննչական գործողություն, որը մյուս քննչական գործողություններից տարբերվում է բովանդակությամբ, խնդիրներով և կատարման տակտիկայով²:

Ընդ որում՝ առաջին տեսակետի կողմնակիցները հնարավոր են համարում քննչական փորձարարությունը միաժամանակ դիտարկել որպես հնարք:

Անշուշտ, փորձարարությունը կրիմինալիստիկայում և դատական փորձագիտության տեսության մեջ կիրառվող հնարքներից է, սակայն, կարծում ենք, ճիշտ չէ այն նույնացնել համանուն քննչական գործողության հետ, որի նպատակը, խնդիրներն ու բովանդակությունն ամբողջովին տարբեր են: Ավելին, գտնում ենք, որ դրանով անհարկի նսեմացվում են տվյալ քննչական գործողության դերն ու նշանակությունը:

Հարկ է նշել, որ տարբեր են նաև այն հեղինակների ձևակերպումները, ովքեր կողմ են քննչական փորձարարության՝ որպես ինքնու-

¹ Տե՛ս «Следственные действия. Криминалистические рекомендации. Типовые образцы документов». М., 2001, էջ 253:

² Տե՛ս «Криминалистика». М.: МГУ, 1971, էջ 313, «Криминалистика: Учебник». М., 2004, էջ 312, «Криминалистика: Учебник». Л., 1976, էջ 329, **Лившиц Е. М., Белкин Р. С.** Тактика следственных действий. М., 1997, էջ 136:

րոյն քննչական գործողության սահմանմանը: Դրանք մասնավորապես վերաբերում են այս քննչական գործողության սահմանման մեջ առանձին տարրերի ընդգծմանը:

Այսպես օրինակ՝ որոշ հեղինակներ քննչական փորձարարության սահմանման մեջ հատուկ ընդգծում են դրա հետազոտական բնույթը՝ նշելով, որ քննչական փորձարարության էությունը *«գործով ապացուցման ենթակա հանգամանքների հետազոտման համար հատուկ փորձեր իրականացնելն է»*³:

Բազմաթիվ բնորոշումների մեջ առավել հետաքրքրական են, թերևս, այնպիսիք, որոնք քննչական փորձարարության նպատակներն առանձնացնում են ստուգվող հանգամանքների բնույթով ու շրջանակով:

Այս տեսանկյունից որոշ հեղինակներ հատուկ շեշտում են, որ քննչական փորձարարության նպատակը գործով ապացուցման ենթակա հանգամանքների ստուգումն է⁴ և նոր ապացույցների ստացումը⁵: Ավելին, Ս. Բ. Ռոսինսկին նույնիսկ նշում է դատավարության այն մասնակիցների շրջանակը (կասկածյալ, մեղադրյալ, վկա, տուժող կամ նրանց փոխարինող անձինք), որոնց հայտնած տվյալները ստուգելու նպատակով միայն կարող է կատարվել քննչական փորձարարություն⁶:

Մինչդեռ հեղինակների մյուս խումբը նպատակների շարքին ավելացնում է գործի համար նշանակություն ունեցող այլ տվյալների ստուգումը, որոնք կարող են ստացվել օպերատիվ հետախուզական միջոցառումներով (այսուհետ՝ ՕՀՄ) և ուղղված են վարկածների ստուգմանը⁷:

Տարբեր հեղինակների տեսակետները վերլուծելով՝ կարող ենք հավաստել, բոլորը համամիտ են՝ քննչական փորձարարությունը հիմնված է փորձնական գործողությունների ու դրանց կատարման կրկնակիության վրա, իրականացվում է առավելագույնս այն պայմաններում, որոնցում դրսևորվել են ստուգվող իրադարձությունը, հանգամանքները, և նպատակաուղղված է այս կամ այն քննչական գործողության կատարման հետևանքով ստացված տվյալների ստուգմանը:

Սակայն, ինչպես իրավացիորեն եզրակացնում է Յու. Գ. Տորբինը, հեղինակների կարծիքների տարբերությունները հիմնականում այն են, որ ոմանք քննչական փորձարարության բնորոշման մեջ են մտցնում վարկածների ստուգման հնարավորությունը, քննվող իրադարձության իրական մոդելավորումը, դատավարության մասնակիցների կողմից ստուգվող իրադարձության վերականգնումը, որոշակի իրադարձությ-

³ «Криминалистика: учебник для экспертов-криминалистов». М., 2005, с. 157.

⁴ Տե՛ս **Շուրխով Н. Г.** Криминалистика: учебник. М., 2008, էջ 315:

⁵ Տե՛ս **Торбин Ю. Г.** Процессуальные и тактические особенности производства следственного эксперимента: монография. М.: РПА Минюста России, 2011, էջ 18:

⁶ Տե՛ս **Росинский С. Б.** Следственные действия: монография. М.: «Норма», 2018, էջ 198:

⁷ Տե՛ս «Руководства для следователей». М., 1971, **Яблоков Н. П.** Криминалистика: учебник для вузов и юрид. фак. М., 2003, էջ 225:

յան, փաստի որոշակի ձևով գոյության հնարավորությունը, նոր ապացույցների ձեռքբերումը⁸:

Ինչպես ցանկացած քննչական գործողության, այնպես էլ քննչական փորձարարության էությունն ու բովանդակությունը պարզաբանելու համար անհրաժեշտ է վերհանել բոլոր այն առանձնահատկությունները, որոնցով վերջինս տարբերվում է այլ քննչական գործողություններից: Մասնավորապես Ռ. Ս. Բելկինն այդպիսի հատկանիշների շարքին է դասում հետևյալները.

- քննչական փորձարարություն կատարելիս գործողություններն առավելագույնս նմանեցվում են այն գործողություններին, որոնք կատարվել կամ կարող էին կատարվել հանցավոր իրադարձության ժամանակ,

- քննչական փորձարարություն կատարվում է այնպիսի պայմաններում, որոնք առավելագույնս մոտ են ստուգվող իրադարձության պայմաններին,

- ինչպես յուրաքանչյուր փորձ, այնպես էլ քննչական փորձարարությունը ենթադրում են փորձնական գործողությունների կրկնում, ընդ որում՝ որոշակիորեն փոփոխված պայմաններով⁹:

Կարծում ենք՝ քննչական փորձարարության բնութագրիչ առանձնահատկություններից կարելի է համարել նաև այն, որ դա փորձնական ու ստուգողական գործողությունների համալիր է, որով էլ տարբերվում է քննչական մյուս գործողություններից, ինչպիսիք են զննությունը, ցուցմունքը տեղում ստուգելը, ճանաչման ներկայացնելը, փորձաքննության նշանակումը և կատարումը:

Այս կապակցությամբ պրոֆեսոր Լ. Պ. Օհանյանը նշում է. «*Քննչական փորձարարությունը՝ որպես ինքնուրույն քննչական գործողություն, իրականացվում է գործով արդեն ձեռք բերված ապացույցների (փաստական տվյալների) ստուգման նպատակով (հարցաքննությունների, խուզարկության, դեպքի տեղի զննության և այլ քննչական գործողությունների միջոցով)*»¹⁰: Ընդ որում, հեղինակը քննչական փորձարարությունը, դրա բնույթով ու բովանդակությամբ պայմանավորված, դասում է նաև քննիչի նույնականացման գործողությունների շարքին:

Քննչական փորձարարությունը նախևառաջ անհրաժեշտ է տարբերել քննչական զննությունից: Երկու դեպքում էլ չի պահանջվում առանձին որոշում, հիմնականում համընկնում են մասնակիցների շրջանակը, արդյունքների դատավարական ամրագրմանը, տեխնիկական միջոցների կիրառմանը, մասնակիցների անվտանգության ապահով-

⁸ Տե՛ս **Торбин Ю. Г.**, նշվ. աշխ., էջ 18:

⁹ Տե՛ս **Аверьянова Т. В., Белкин Р. С., Корухов Ю. Г., Россинская Е. Р.** Криминалистика: Учебник для вузов. М., 2006, էջ 636:

¹⁰ **Լ. Պ. Օհանյան**, Կրիմինալիստիկա: Բուհական դասագիրք, 2-րդ հրատ., փոփոխ. և լրաց., Եր., 2010, էջ 96:

մանը ներկայացվող պահանջները:

Սակայն եթե զննությունը, մասնավորապես դեպքի տեղի զննությունը, համարվում է անհետաձգելի սկզբնական քննչական գործողություն, որը, փաստորեն, կատարվում է ցանկացած հանցագործության քննության ընթացքում, ապա քննչական փորձարարությունը կատարվում է միայն այն դեպքերում, երբ անհրաժեշտություն է առաջանում ստուգելու նախկինում կատարած քննչական գործողությամբ ստացված կամ գործի համար նշանակություն ունեցող այլ տվյալները: Փաստորեն քննչական փորձարարությունը հետագա քննչական գործողություն է, քանի որ դրա կատարումը պայմանավորված է որևէ այլ արդեն կատարված քննչական գործողության արդյունքներով:

Այսպիսով, եթե քննչական զննության ժամանակ ուսումնասիրվում են միայն ապացույցների նյութական աղբյուրները, ապա քննչական փորձարարության ժամանակ նաև ոչ նյութական, մտավոր աղբյուրները՝ վկայի, տուժողի, մեղադրյալի ցուցմունքները: Չննության հիմնական նպատակը հանցագործության հետքերի տեսքով նոր ապացույցներ ձեռք բերելն է և գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները պարզաբանելը՝ օբյեկտի և առկա իրադրության ուսումնասիրմամբ հայտնաբերելով ու ամրագրելով դրանց նյութական էական հատկանիշները: Իսկ քննչական փորձարարության նպատակը քննիչի տրամադրության տակ առկա տվյալների ստուգումն է փորձնական ու ստուգողական գործողությունների միջոցով: Բացի դրանից, զննության ժամանակ քննիչն ուսումնասիրում և ամրագրում է ողջ հայտնաբերվածն այն տեսքով, ինչպես հայտնաբերվել է, իսկ քննչական փորձարարության ժամանակ թույլատրվում է նաև իրադրության վերականգնում: Եվ վերջապես, զննության շրջանակները սահմանափակվում են օբյեկտների, իրերի արտաքին դիտմամբ, ուսումնասիրմամբ՝ ստատիկ վիճակում, մինչդեռ քննչական փորձարարության դեպքում գործողությունները բովանդակային, դինամիկ և բացահայտող առավել խորը բնույթ են կրում:

Որոշ հեղինակներ, առավել մանրամասնելով քննչական զննության և քննչական փորձարարության տարբերությունները՝ դրանք ներկայացնում են երեք խմբով.

- քննչական զննության ժամանակ քննիչը առնչվում է միայն նյութական հետքերի ու օբյեկտների հետ, մինչդեռ քննչական փորձարարության ժամանակ վերականգնվում են հանգամանքներ, երևույթներ, որոնք նյութական հետքեր չեն առաջացնում (օրինակ՝ տեսնելու, լսելու, շոշափելու հնարավորությունները),
- քննչական զննության կարևոր հատկանիշներից է անմիջականությունը: Քննիչն օբյեկտը, առարկան զննում է այն վիճակում, ինչպիսին հայտնաբերել է, մինչդեռ քննչական փորձարարության դեպքում օբյեկտը կամ երևույթն ուսումնասիրվում է վերականգնված վիճակում,

ընդ որում վերականգնվող իրադրությունը սուբյեկտիվ ընկալման տեսանկյունից չի կարող նույնական լինել ստուգվող իրադրության հետ: Այլ կերպ քննչական փորձարարության ընթացքում վերականգնվող իրադրության անմիջական ընկալում չի կարող լինել, քանզի միշտ ընկալվում է որևէ նորը՝ այլ երևույթ, հատկանիշ և այլն,

- թեև որոշակիորեն նույնական է երկու քննչական գործողությունների արդյունքների ձևակերպման կարգը, այնուամենայնիվ քննչական փորձարարության արձանագրության մեջ, ի տարբերություն քննչական զննության արձանագրության, նշվում են ոչ միայն զննվող օբյեկտների վիճակը, այլև իրականացված փորձերն ու դրանց արդյունքները¹¹:

Եվ վերջապես, հարկ է նկատել, որ քրեադատավարական օրենսդրության պահանջների պահպանմամբ քննչական փորձարարության կատարումը գործնականում կարող է զուգակցվել այլ քննչական գործողությունների՝ դեպքի տեղի կրկնակի զննության, հետազոտման համար նմուշների ստացման հետ, երբ դրանց ստացման համար անհրաժեշտ է հետքառաջացման պայմանների փորձարարական վերականգնում և այլն:

Քննչական փորձարարությունը թեև ունի ցուցմունքը տեղում ստուգելու քննչական գործողության հետ որոշակի նմանություններ, այնուամենայնիվ էականորեն տարբերվում է դրանից, քանի որ ցուցմունքները տեղում ստուգելու ընթացքում որևէ ստուգողական կամ փորձնական գործողություն չի կատարվում, առավել ևս չի թույլատրվում պայմանների փոփոխում, քանի որ վերջինիս խնդիրը ցուցմունքների արժանահավաստության ստուգումն է՝ դրանք իրականության պայմանների հետ համադրելով¹²: Բացի դրանից, թեև առերևույթ կատարվում են որոշակի ստուգողական գործողություններ, վերականգնվում են իրավիճակներ, այնուամենայնիվ դրանք իրականացվում են ոչ թե քննիչի, այլ հենց այն անձի կողմից, ում ցուցմունքները ստուգվում են տեղում:

Քննչական պրակտիկայում հաճախ են նույնացվում նշված քննչական գործողությունները, որոնց միջոցով փաստացի կատարվում է տեղում ցուցմունքի ստուգում, սակայն օրենսդրական բացի պատճառով (ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգիրքը (այսուհետ՝ ՀՀՔԴ-ն)) չի նախատեսում նման քննչական գործողություն) այն ձևակերպվում, արձանագրվում է որպես քննչական փորձարարություն: Նման շփոթմունքներից ու քննչական սխալներից խուսափելու նպատակով հարկ էնք համարում հատուկ ընդգծել, որ, ի տարբերություն

¹¹ Տե՛ս **Белкин Р. С.** Теория и практика следственного эксперимента. М., 1959; «Настольная книга следователя». СПб., 2008:

¹² Նախագծի 225 հոդվածը նախատեսում է ցուցմունքը տեղում ստուգելը՝ որպես քննչական գործողություն, որը, մեր կարծիքով, ճիշտ է:

քննչական փորձարարության, տեղում ցուցմունքի ստուգմանը բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

- ստուգվում է դատավարական ապացույցներից միայն ցուցմունքը, ընդ որում՝ որոշակի դատավարական կարգավիճակ ունեցող անձի,

- իրականացվում է միայն այն տեղում, որը նկարագրված է ցուցմունքներում,

- մասնակիցների շրջանակում պարտադիր է այն անձի մասնակցությունը, ում ցուցմունքը ստուգվում է,

- քննիչը չի իրականացնում որևէ վերականգնողական գործողություն,

- պարտադիր չէ նախկին իրադրության վերականգնումը:

Չնայած որոշ նմանություններին (երկու դեպքում էլ ստուգվում են ձեռք բերված ապացույցները, երկուսն էլ համարվում են հետագա քննչական գործողություններ)՝ քննչական փորձարարությունը չպետք է շփոթել նաև ճանաչման ներկայացնելու հետ: Ճանաչումն իրականացվում է անձի, իրի, առարկայի, օբյեկտի արտաքին հատկանիշների հիման վրա, իսկ քննչական փորձարարությունը կարող է կատարվել միայն այդ հատկանիշների ընկալումը ստուգելու նպատակով, այլ ոչ թե նույնացման համար: Բացի դրանից, ի տարբերություն քննչական փորձարարության, ճանաչման ներկայացնելու ժամանակ իրադրության վերականգնում, ինչպես նաև ստուգողական, այդ թվում կրկնման մեթոդով գործողությունների կատարում չի պահանջվում:

Դատական փորձաքննություններից քննչական փորձարարությունը տարբերվում է նրանով, որ դատական փորձաքննությունը կատարում է հատուկ գիտելիքներ ունեցող անձը, այն գիտական հետազոտության տարատեսակ է, մինչդեռ քննչական փորձարարությունն ունի զուտ ստուգողական և մասնակիցների համար ակնհայտ բնույթ¹³:

Յու. Գ. Տորբինը, վերլուծելով քննչական փորձարարության քրեադատավարական էությունը, ներկայացնում է այս քննչական գործողության հիմնական բնորոշ առանձնահատկությունները.

- քննչական փորձարարությունն ինքնուրույն քննչական գործողություն է,

- այն իրականացվում է միայն քրեական գործի հարուցումից հետո,

- դրա կատարման համար չի պահանջվում կայացնել առանձին դատավարական որոշում,

- մասնակիցների շրջանակը յուրաքանչյուր փորձարարության դեպքում որոշում է քննիչը,

- քննչական փորձարարության նպատակը գործի համար նշա-

¹³ См. у Аверьянова Т. В., Белкин Р. С., Корухов Ю. Г., Россинская Е. Р., նշվ. աշխ., էջ 637:

նակություն ունեցող հանգամանքների ստուգումն ու ճշտումն է,

- քննչական փորձարարության նպատակներին կարելի է հասնել միայն ստուգողական, փորձնական գործողությունների կատարմամբ, որոնք ունեն հետազոտական բնույթ,

- ստուգողական գործողությունները հիմնականում նպատակաուղղված են պարզելու որոշակի փաստերի ընկալման, որոշակի գործողության կատարման հնարավորությունը, որոշակի իրադարձության առկայությունը կամ բացակայությունը, դրա կատարման հաջորդականությունը և հետքառաջացման մեխանիզմը,

- փորձնական կամ ստուգողական գործողությունները պետք է ունենան բազմակի ու կրկնողական բնույթ,

- քննչական փորձարարության ժամանակ կիրառվում են ճանաչողության միայն այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են դիտարկումը և փորձերի ու արդյունքների ամրագրումը,

- քննչական փորձարարությունը կարող է կատարվել ստուգվող իրադարձությանն առավելագույնս մոտ պայմաններում,

- քննչական փորձարարության և ստուգողական գործողությունների կատարումը չպետք է վտանգի մասնակիցների կյանքն ու առողջությունը,

- քննչական փորձարարության արձանագրությունը որոշակի քրեական գործով ապացույցի ինքնուրույն աղբյուր է¹⁴:

Գործող ՀՀ քրեադատավարական օրենսդրությունը նույնպես քննչական փորձարարությունը նախատեսել է որպես ինքնուրույն քննչական գործողություն, որն իր բնույթով, նպատակներով և խնդիրներով տարբերվում է քննչական մյուս գործողություններից:

Այսպես, ՀՀ ՔԴՕ 242 հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ գործի համար նշանակություն ունեցող տվյալները ստուգելու և ճշտելու նպատակով փորձեր և այլ հետազոտական գործողություններ կատարելու համար քննիչն իրավունք ունի կատարելու քննչական փորձարարություն: Վերջինիս արդյունքները քննիչին թույլ են տալիս անմիջականորեն հավաստիանալ (և այդ փաստն ամրագրել գործի նյութերում) որոշակի գործողությունների կատարման հնարավորության կամ անհնարինության, այս կամ այն իրադարձության գոյության փաստի մասին, որոնց վերաբերյալ առկա են փաստական տվյալներ:

Քննչական փորձարարության ղեկավարը և կազմակերպիչը քննիչն է: Նա է որոշում փորձարարական գործողությունների բովանդակությունը, ապահովում դրանց կատարման պատշաճ պայմանները: Նա իրավունք ունի կիրառելու տեխնիկական միջոցներ՝ լուսանկարահանում, ձայնագրում, տեսագրում: Քննչական փորձարարություն կատարելիս կարող են կազմվել պլաններ, սխեմաներ, գծագրեր, կատար-

¹⁴ Տե՛ս **Торбин Ю. Г.**, նշվ. աշխ., էջ 25:

վել չափումներ: Դրանց կատարման ժամանակ պետք է ներկա լինեն ընթերակաները: Անհրաժեշտության դեպքում քննիչը կարող է մասնակից դարձնել նաև կասկածյալին, մեղադրյալին, վկային, մասնագետին, բժշկին և այլ անձանց: Մա ՀՀ ՔԴՕ 188¹ հոդվածի 5-րդ մասով և 242 հոդվածի 2-րդ մասով սահմանված քննչական փորձարարության մասնակիցների ընդհանուր շրջանակն է¹⁵:

Ինչպես բխում է քննչական փորձարարության օրենսդրական սահմանումից, այն բովանդակում է փորձերի և այլ հետազոտությունների համալիր, ընդ որում՝ դրանք իրականացվում են միայն քննիչի որոշմամբ: Այսինքն, ի տարբերություն քննչական այլ գործողությունների, քննչական փորձարարության դեպքում քրեադատավարական օրենքը քննիչին ազատել է լրացուցիչ որոշում ընդունելու կամ թույլտվություն ստանալու համար այլ իրավասու մարմնի դիմելու անհրաժեշտությունից: Այս հանգամանքն անշուշտ նպաստում է, որ քննչական փորձարարություն իրականացնելու անհրաժեշտություն առաջանալու դեպքում քննիչն այն կատարելու մասին արագ և օպերատիվ որոշում կայացնի առանց ժամանակի կորստի: ՀՀ ՔԴՕ-ն չի սահմանում նաև քննչական փորձարարության կատարման որոշակի իրավական հիմքերը (դեպքերը), ինչը հնարավորություն է ընձեռում քննչական փորձարարությամբ ստուգելու և ճշտելու ոչ միայն գործով հավաքված ապացույցները, այլ նաև կրիմինալիստիկական վարկածները:

Քննչական փորձարարությունը ճանաչողական և հաստատողական գործողությունների համալիր է: Թեև այն ինքնուրույն քննչական գործողություն է, սակայն հաճախ ուղղված է գործի քննության ընթացքում այլ քննչական գործողություն (հարցաքննություն, խուզարկություն, դեպքի տեղի զննություն և այլն) կատարելու ժամանակ հավաքված ապացույցների ստուգմանը: Այնուամենայնիվ, քննչական փորձարարությամբ կարող են ստուգվել նաև ոչ դատավարական եղանակով ստացված տվյալները, ինչպես նաև կատարված հանցագործության այս կամ այն հանգամանքների վերաբերյալ քննիչի ենթադրությունները (կրիմինալիստիկական վարկածների ստուգումը):

Քննչական փորձարարություն իրականացնելու անհրաժեշտությունը կարող է զգացվել նաև այն ժամանակ, երբ առաջացել են կամ կարող են առաջանալ գործի քննության համար նշանակություն ունեցող այս կամ այն փաստերի (երևույթների, իրադարձությունների կամ որևէ գործողության կատարման) որոշակի պայմաններում գոյության հնարավորության վերաբերյալ կասկածներ: Քննչական փորձարարության նպատակահարմարությունը որոշվում է փորձնական եղանակով այդ փաստերի ստուգման հնարավորությամբ, քանի որ քննչական փորձա-

¹⁵ Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն». Հատուկ մաս: Դասագիրք բուհերի համար, 3-րդ հրատ: Հեղինակային խմբի ղեկավար և խմբագիր Գ. Ս. Ղազինյան, Եր., 2010, էջ 182:

րարությունը գործողություն է, որի օգնությամբ ստուգվում է գիտության կամ պրակտիկայի որևէ դրույթ¹⁶:

Սակայն պետք է նկատի ունենալ, որ քննչական փորձարարությունը միայն քննիչի կողմից քննվող դեպքի առանձին հանգամանքների կամ գործի համար էական նշանակություն ունեցող առանձին փաստերի վերարտադրություն չէ, քանի որ տվյալ դեպքում կանտեսվի քննչական փորձարարության հիմնական «նպատակը», այն է՝ դեպքի հանգամանքները ստուգելու և ճշտելու նպատակով փորձերի կատարումը:

Այսպես, ստուգվող դեպքի հանգամանքներին նմանվող պայմանների և միջավայրի ստեղծումը դեռևս չի կարելի անվանել փորձարարություն, քանի որ զուտ վերարտադրությունը քննությանը ոչինչ չի տալիս: Վերարտադրությունն անհրաժեշտ է համարել քննչական փորձարարության սկզբնական փուլ կամ պայման, կատարման տակտիկական եղանակ, որին պետք է հաջորդի փորձերի կատարումը, որը քննիչի գործողությունների հիմնական բովանդակությունն է: Ինքնին փորձարարությամբ՝ որպես ճանաչողության գիտական մեթոդ, հնարավոր է պատասխանել այն հարցին, թե կարող էին իրականում տեղի ունենալ որոշակի բնույթի իրադարձություններ, երևույթներ, թե ոչ: Այս առումով ընդհանրապես փորձարարությունը բարձր է գնահատել ռուս մեծ գիտնական Մ. Վ. Լոմոնոսովը. «Մեկ փորձը ես գնահատում եմ ավելի բարձր, քան միայն երևակայությամբ ծնված հազար կարծիքը»¹⁷:

Խոսելով քննչական փորձարարության փորձնական (փորձարարական) բնույթի մասին՝ անհրաժեշտ է նշել, որ երբեմն հնարավոր է խուսափել վերարտադրությունից՝ փորձարարությունը կատարելով այնպիսի իրադարձությունում, որը նման չէ իրական դեպքին, եթե դա չի կարող ազդել փորձարարության արդյունքների արժանահավաստության վրա:

Մասնագիտական գրականության մեջ «քննչական փորձարարություն» հասկացության սահմանման թերություններից կարելի է համարել քննչական փորձարարության նպատակների սահմանափակումը, երբ որպես նպատակ նշվում է միայն գործով հավաքված ապացույցների ստուգումը, մինչդեռ, ինչպես արդեն նշվել է, քննչական փորձարարությունը կարող է կատարվել ոչ միայն արդեն առկա ապացույցների ստուգման նպատակով, այլ նաև վարկածների ստուգման և գնահատման, ինչպես նաև նոր ապացույցներ ստանալու համար: Այս տեսանկյունից հարկ է ընդգծել, որ քննչական գործողությունների ընդհանուր համակարգում քննչական փորձարարության դերն ու տեղը որոշելու համար անհրաժեշտ է ճիշտ սահմանել դրա նպատակները: Ինչպես արդեն նշել ենք, «քննչական փորձարարություն» հասկացու-

¹⁶ Ст'ю «Следственные действия. Криминалистические рекомендации. Типовые образцы документов». М., 2001, էջ 253:

¹⁷ Ломоносов М. В. Полное собрание сочинений. Т. 1. М., 1956, с.125.

յունը վերլուծելիս, այս քննչական գործողության նպատակների վերաբերյալ մասնագիտական գրականության մեջ նույնպես միասնական մոտեցում չկա:

Որոշ հեղինակներ նշում են, որ քննչական փորձարարության նպատակը ստուգման ենթակա հանգամանքի գոյության փաստի որոշումն է¹⁸:

Ռ. Ս. Բելկինը և Ե. Մ. Լիվշիցը քննչական փորձարարության նպատակների շարքին դասում են՝

- գործով հավաքված ապացույցների ստուգումն ու գնահատումը,
- քննչական վարկածների ստուգումն ու գնահատումը,
- հանցագործությանը նպաստող պատճառների և պայմանների սահմանումը,

- նոր ապացույցների ստացումը¹⁹:

Քննչական փորձարարության նպատակների նմանօրինակ դասակարգում է տալիս նաև Ն. Պ. Յաբլոկովը՝ որպես այդպիսիք նշելով քրեական գործի համար նշանակություն ունեցող տվյալների ստուգումն ու ճշգրտումը, որևէ փաստի ընկալման, որոշակի գործողությունների կատարման, որևէ իրադարձության վրա հասնելու կամ գործողությունների վերարտադրման ճանապարհով հետքերի առաջացման մեխանիզմի, ինչպես նաև համապատասխան իրադարձության միջավայրի կամ այլ հանգամանքների օբյեկտիվ հնարավորության պարզումը²⁰:

Վ. Ա. Օբրագովի բնորոշմամբ էլ՝ քննչական փորձարարությունը թեև ինքնուրույն քննչական գործողություն է, որն ուղղված է գործով հավաքված մյուս ապացույցների ու այլ տվյալների ստուգմանը, այնուամենայնիվ այս քննչական գործողության խնդիրներից է նաև նոր ապացույցների ստացումը²¹:

ՀՀ ՔԴՕ 242-րդ հոդվածի 1-ին մասը հստակ սահմանում է, որ քննչական փորձարարության նպատակները գործի համար նշանակություն ունեցող տվյալների ստուգումը և ճշտումն են: Այսինքն՝ առաջին նպատակը գործի համար նշանակություն ունեցող տվյալների ստուգումն է, իսկ երկրորդը՝ դրանց ճշտումը: Ընդ որում՝ ՀՀ ՔԴՕ-ն չի սահմանում այդպիսի տվյալների հասկացությունը: Նման տվյալներ կարելի է համարել ոչ միայն ապացույցները, այլ նաև այնպիսիները, որոնք չեն ստացվել քննչական փորձարարության արդյունքում, օրինակ՝ ՕՀԳ-ի իրականացմամբ: Սակայն ճիշտ չէ քննչական փորձարարության նպատակը շարադրելիս սահմանափակվել գուտ ապացույցների և կրի-

¹⁸ Տե՛ս «Криминалистика». М., 1971, էջ 313:

¹⁹ Տե՛ս Лившиц Е. М., Белкин Р. С., նշվ. աշխ., էջ 137:

²⁰ Տե՛ս «Тактика следственного эксперимента» // "Криминалистика: учебник". М., 2005:

²¹ Տե՛ս **Образцов В. А.** Криминалистика: модели средств и технологий раскрытия преступлений. Курс лекций. М., 2004, էջ 274:

մինալիստիկական վարկածների ստուգմամբ, քանի որ այդ ժամանակ կարող են ստուգվել նաև քննչական վարկածները և հակառակը:

Գործնականում քննչական փորձարարությունը կատարվում է, որպեսզի պարզվի կամ հաստատվի՝

- որոշակի փաստի, երևույթի ընկալման հնարավորությունը (օրինակ՝ կարող էր արդյոք տուժողը լսել խոսակցությունը որոշակի տարածության վրա կամ տեսնել կատարվող իրադարձությունը),

- որոշակի գործողությունների կատարման հնարավորությունը (օրինակ՝ տրանսպորտային միջոցով որոշակի քանակությամբ ապրանք տեղափոխելը),

- որոշակի պայմաններում որոշակի փաստի, երևույթի գոյության կամ առաջանալու հնարավորությունը (օրինակ՝ դուռը փակվում է ճռոցով, թե անաղմուկ),

- իրադարձության ամբողջ մեխանիզմը կամ դրա առանձին տարրերը (օրինակ՝ որոշակի ժամանակահատվածում վազելով որոշակի տարածություն անցնելը),

- որոշակի գործողությունների կատարման համար անհրաժեշտ ժամանակը:

Նշենք, որ քննչական պրակտիկայի ընդհանրացումը ցույց է տալիս հետևյալը. քննչական փորձարարությունը որպես կանոն կատարվում է հետևյալ խումբ հանգամանքները ստուգելու համար.

- անձի ընկալման հնարավորությունը,

- որոշակի երևույթի առկայության կամ բացակայության հնարավորությունը,

- որոշակի մեխանիզմի (դինամիկայի) առկայության հնարավորությունը:

Վերը ներկայացված նպատակների ապահովումը հնարավոր է որոշակի խնդիրների լուծման ճանապարհով, որոնց շրջանակը բավականին լայն է և անմիջականորեն կապված է քննչական փորձարարության տեսակների հետ:

Քննչական փորձարարության կատարման հիմնական խնդիրներն են՝

- 1) գործով հավաքված ապացույցների (ցուցմունքներ, իրեղեն ապացույցներ և այլն) ստուգումն ու ճշգրտումը,

- 2) նոր ապացույցների ստացումը,

- 3) կրիմինալիստիկական վարկածների ստուգումը,

- 4) հանցագործության կատարմանը նպաստող պատճառների և պայմանների բացահայտումը²²:

Հարկ է փաստել նաև, որ միևնույն փորձարարության շրջանակներում կարող են լուծվել մեկից ավելի խնդիրներ. միևնույն փորձարար-

²² Տե՛ս «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարություն». Հատուկ մաս: Դասագիրք բուհերի համար, 3-րդ հրատ: Հեղինակային խմբի ղեկավար և խմբագիր Գ. Ս. Ղազինյան, Եր., 2010, էջ 180:

րությունը կարող է ուղղված լինել և՛ ապացույցները ստուգելուն, և՛ հանցագործության կատարմանը նպաստող պայմանները բացահայտելուն:

ՀՀ ՔՂՕ-ն (57 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետ, 182 հոդվածի 5-րդ մաս, 273 հոդվածի 9-րդ կետ) քրեական հետապնդման մարմինների պարտականությունների շարքին է դասում նաև հանցագործությանը նպաստող հանգամանքների բացահայտումը և դրանք վերացնելու ուղղությամբ միջոցների ձեռնարկումը: Թեև քննչական փորձարարությունը չի կարող հանցագործությունները կանխելու անմիջական միջոց լինել, այնուամենայնիվ դրա շնորհիվ կարելի է պարզել, թե ինչպիսի հանգամանքներ են նպաստել կամ հնարավոր դարձրել հանցագործության կատարումը, կազմակերպական կամ տեխնիկական բնույթի ինչպիսի միջոցառումներ պետք է իրականացվեին, որպեսզի տվյալ պայմաններում դժվարանար կամ անհնար դառնար նմանատիպ հանցագործության կատարումը: Այդպիսի տվյալներ կարող են լինել հանցագործության կատարման նոր եղանակի մասին տեղեկությունները, որոնց ստուգման նպատակով էլ կատարվում է քննչական փորձարարությունը:

Այսպիսով, քննչական փորձարարությունը կարելի է բնորոշել որպես ինքնուրույն քննչական գործողություն, որը կատարում է քննիչը փորձերի և այլ փորձնական գործողությունների միջոցով, գործի համար նշանակություն ունեցող տվյալները ստուգելու և ճշտելու, որոշակի երևույթի, փաստի ընկալման հնարավորությունը պարզելու, որոշակի գործողության, փաստի, երևույթի առաջացման հնարավորությունները պարզաբանելու և որոշակի գործողությունների մեխանիզմը պարզելու, ինչպես նաև նոր ապացույցներ ստանալու, քննչական վարկածները ստուգելու, հանցագործության կատարմանը նպաստող պատճառները և պայմանները բացահայտելու նպատակով, այնպիսի պայմաններում, որոնք առավելագույնս նման են եղել ստուգվող փաստի, երևույթի, դեպքի կատարման պահի հանգամանքներին:

Բանալի բառեր – քննչական փորձարարություն, քրեական գործ, նախաքննություն, քննիչ, քննչական գործողություն, փաստի ստուգում, ապացույց

ВАГЕ ЕНГИБАРЯН – Некоторые особенности производства следственного эксперимента. – Статья посвящена соотношению понятия и содержания следственного эксперимента как одного из самых важных следственных действий. Анализ этого понятия, а также теоретических и правовых основ следственного эксперимента и тем самым выявление его особенностей имеет как научное, так и практическое значение. Это способствует отграничению эксперимента от смежных следственных действий, прояснению круга его существенных задач, а также выбору оптимальной тактической линии.

С этой целью проанализированы точки зрения разных авторов, правовые положения уголовно-процессуального законодательства и сформулировано понятие следственного эксперимента. Он охарактеризован как самостоятельный следст-

венный элемент, осуществляемый для проверки и выяснения механизма совершения определённого действия, а также получения доказательств и т. п.

Ключевые слова: *следственный эксперимент, уголовное дело, предварительное расследование, следователь, следственные действия, проверка факта, доказательство*

VAHE YENGIBARYAN – *Some Peculiarities of Investigatory Experiment Implementation.* – The Article analyzes and reveals the interaction of notion and nature of investigatory experiment –one of the most important investigative actions. The analysis and disclosure of the features of the notion and theoretical and legal grounds of the investigatory experiment implementation has both scientific and practical importance for demarcating it from other adjoining investigative actions, clarifying the circle of its core tasks and aims, as well as for choosing the most optimal tactical line.

To that end, the author has analyzed both coinciding and contradicting standpoints of different authors on the discussed issue, legal provisions of criminal process legislation, and as a result – has formulated the notion of the investigatory experiment.

Thus – investigative experiment may be characterized as an independent investigative action, which is implicated by the investigator by means of experiments and other experimental actions, with the aim of checking and clarifying data, necessary for the case, studying out possibility of perceiving certain phenomenon and a fact, clarifying possibility of implementation of certain action, occurrence of a phenomenon and studying out the mechanism of implementation of certain actions, as well as getting new proofs, checking investigative hypothesis, disclosure of the causes and conditions, facilitating the commitment of the crime in such conditions, which are highly similar to the conditions, existing at the moment of the commitment of the verifiable fact, phenomenon or case.

Key words: *investigatory experiment, criminal case, pre-trial investigation, investigator, investigative action, checking of fact, evidence*

ԿՐԻՄԻՆԱԼՈՉԻԱ

ԸՆՏԱՆԻՔԻ ԴԵՐԸ ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ՀԱՆՑԱՎՈՐ ԿԱՄ ՇԵՂՎՈՂ ՎԱՐՔԱԳԾԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

ԱՆՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Յուրաքանչյուր անձի ձևավորման, ֆիզիկական և մտավոր զարգացման գործընթացում ընտանիքը, ծնողներն ունեն անփոխարինելի դեր. այս միջավայրում է տեղի ունենում երեխայի առաջնային սոցիալականացումը, ձևավորվում դերային և վարքագծային կարծրատիպերը, արժեքային կողմնորոշումներն ու աշխարհայացքը: Առաջին հերթին ընտանիքն է հոգ տանում երեխայի անվտանգության, կարիքների մասին, կրթում ու դաստիարակում նրան, հոգեբանական աջակցություն ու հարմարավետություն ապահովում: Հետևաբար՝ բարդույթներից զերծ, հոգեբանորեն կայուն, հասարակության պահանջներն ընկալող և դրանց համարժեք արձագանքելու ունակ անձի ձևավորման առաջնային նախադրյալը բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ ու հոգեբանական և սոցիալական խնդիրները հաղթահարելու կարողություններ ունեցող, դաստիարակչական և սոցիալականացման գործառույթներ իրականացնող, երեխայի իրավունքները, նրա հանդեպ պարտականությունները գիտակցող և դրանք կյանքի կոչող ընտանիքի առկայությունն է: Ազնվությունը, մարդասիրությունը, բարությունը, կենցաղային խնդիրներին դիմագրավելու կարողությունը ձևավորվում են միայն այն դեպքում, երբ երեխան մանկուց ականատես է եղել անկեղծ ու ջերմ մարդկային հարաբերությունների, ինչը ակնկալվում է ընտանիքում¹:

Իսկ ընտանիքում առկա սոցիալ-տնտեսական և հատկապես հոգեբանական բնույթի խնդիրները՝ ծնողների անտարբերությունը միմյանց և երեխաների նկատմամբ, ձևական բնույթ կրող «հանուն երեխայի» հարաբերությունները, հաճախակի կրկնվող վիճաբանությունները, հանդուրժողականության պակասով պայմանավորված՝ «սերունդների կոնֆլիկտը», բռնությունը հանգեցնում են անչափահասի կողմից շեղվող, իսկ առանձին դեպքերում՝ հանցավոր վարքագծի դրսևորման:

Պատահական չէ, որ երեխայի իրավունքների պաշտպանությանը միտված միջազգային փաստաթղթերում ևս կարևորվում է ընտանիքի

¹ Տե՛ս **Ковтуненко Л. В.** Семья как социокультурная среда воспитания и ресоциализации несовершеннолетних правонарушителей // «Вестник Воронежского института МВД России», 2012, № 3, էջ 137-143:

դերը: Այսպես, անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոնների («Պեկինյան կանոններ») 1.1 կետը սահմանում է, որ անդամ պետությունները պետք է ձգտեն նպաստելու անչափահաս տղայի կամ աղջկա և նրա ընտանիքի բարեկեցությանը²: Համանման կարգավորում է պարունակում նաև Անչափահասների շեղվող վարքագծի կանխարգելման ՄԱԿ-ի ուղենիշների («Ռիադյան ուղենիշներ»)՝ 11-րդ կետը, որը սահմանում է, որ յուրաքանչյուր հասարակություն պետք է խիստ կարևորի ընտանիքի և դրա բոլոր անդամների կարիքներն ու բարեկեցությունը:

«Ռիադյան ուղենիշերի» 12-ից 19-րդ կետերը ևս ուղղակիորեն վերաբերում են երեխայի վարքագծի ձևավորման գործընթացում ընտանիքի, ծնողների կողմից երեխայի հանդեպ դրսևորվող վերաբերմունքին՝ կարևորելով դրանք երեխայի առաջնային սոցիալականացման, պաշտպանության և խնամքի ապահովման գործընթացում⁴:

Ընտանիքը և հատկապես երեխան մեր հասարակության մեջ մշտապես դիտվել են որպես բարձրագույն արժեք: Սակայն ՀՀ-ում ընթացող ճգնաժամային երևույթները չէին կարող իրենց ազդեցությունը չթողնել նաև սոցիալական այս ինստիտուտի վրա. աղքատությունը, գործազրկությունը, արտագաղթը, ժողովրդագրական բացասական փոփոխությունները, արտագնա աշխատանքի մեկնելու հետևանքով առաջացած կիսատ ընտանիքները, արժեքային անումիայով պայմանավորված՝ բարոյական մի շարք նորմերի անտեսումը հանգեցրին հասարակության մի մասի, հատկապես երիտասարդների շրջանում ընտանիքի ինստիտուտի արժեզրկման:

Պատահական չէ, որ ներկայումս նկատվում է ամուսնալուծությունների աճի միտում: ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների համաձայն՝ 2003-2016 թթ. ժամանակահատվածում ամուսնալուծությունների թիվը ՀՀ-ում աճել է գրեթե 2 անգամ. 2003 թ. 1000 բնակչի հաշվով ամուսնալուծությունների գործակիցը եղել է 0.6, իսկ 2016 թ.՝ 1.2: Ընդ որում, ամուսնալուծությունների ամենամեծ մասնաբաժինը ընկնում է ամուսնությանը հաջորդող 1-9 տարիներին (2016 թ. ամուսնալուծությունների 26.1 %-ը գրանցվել է ընտանիքի ձևավորումից 1-4 տարի, իսկ 21.5 %-ը՝ 5-9 տարի հետո)⁵:

² Տե՛ս «Անչափահասների նկատմամբ արդարադատություն իրականացնելու վերաբերյալ ՄԱԿ-ի նվազագույն ստանդարտ կանոններ» («Պեկինյան կանոններ»), (հաստատված է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1985 թ. նոյեմբերի 29-ի 40/33 բանաձևով):

³ Տե՛ս «Անչափահասների շեղվող վարքագծի կանխարգելման ՄԱԿ-ի ուղենիշներ» («Ռիադյան ուղենիշներ»), (հաստատված է ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի 1990 թ. դեկտեմբերի 14-ի 45/112 բանաձևով):

⁴ Տե՛ս նույն տեղը:

⁵ Տե՛ս «ՀՀ վիճակագրական տարեգիրք. Բնակչություն», 2017, էջ 43, <http://www.armstat.am/file/doc/99504343.pdf>:

Բնական է, որ ամուսնալուծությունները պետք է հանգեցնեն կիսատ ընտանիքների առաջացմանը, որտեղ, ցավոք, ամենից շատ տուժողը երեխան է: Շատ քիչ դեպքերում է, որ ամուսնալուծությունից հետո նախկին ամուսինները, ինչպես նաև նրանց ծնողները կարողանում են պահպանել լավ հարաբերություններ, ժամանակ առ ժամանակ հանդիպել միմյանց, քննարկել ընդհանուր խնդիրները և ամենակարևորը՝ երեխայի համար ապահովել ծնողների՝ միջանձնային խնդիրներից զերծ ջերմ հարաբերություններ: Առավել հաճախ երեխան պարզապես դառնում է նրանց եսասիրական մղումների զոհը, վերածվում միմյանց ցավ պատճառելու, նախկին ամուսնու կամ կնոջ (առանձին դեպքերում՝ հարսի կամ փեսայի) նկատմամբ իշխանության հասնելու «խաղաթղթի»:

Կիսատ ընտանիքներում դաստիարակվող երեխաների շարքին են դասվում նաև նրանք, ում ծնողները մայրը կամ հայրը, մեկնել են արտագնա աշխատանքի, կամ ովքեր դաստիարակվում են այրիացած կամ միայնակ ծնողի կողմից: Առանձին փորձագիտական գնահատականների համաձայն՝ ՀՀ-ում միայն 2014 թ. 125 000 կին ունեցել են միայնակ մոր կարգավիճակ, և այդ թիվը գնալով աճում է⁶:

Բազմաթիվ կրիմինալոգիական ուսումնասիրություններ⁷ վկայում են, որ հանցավոր կամ շեղվող վարքագիծ դրսևորած անչափահասների շրջանում, ի համեմատ նման վարքագիծ չդրսևորած նրանց հասակակիցների, ավելի հաճախ են հանդիպում կիսատ ընտանիքներում ապրողները:

Սակայն Կրիմինոլոգների եվրոպական միության նախաձեռնությամբ 30-ից ավելի երկրներում, այդ թվում՝ ՀՀ-ում, 12-17 տարեկան դպրոցականների շրջանում 2014 թ. կատարված ISRD-3 ուսումնասիրության արդյունքները բացահայտեցին բոլորովին այլ պատկեր. ՀՀ-ում առավելապես շեղվող վարքագիծ են դրսևորել լրիվ ընտանիքում մեծացող երեխաները:

Կարծում ենք, ավելի ճիշտ կլինի շեշտադրում կատարել ոչ թե ընտանիքի կիսատ կամ լրիվ, այլ դրա բարեկեցիկ լինելու, երեխայի հետ հուզական ջերմ հարաբերություններ ունենալու, նրան աջակցելու, հարմարավետություն ու երջանկություն ապահովելու վրա:

Հետաքրքիր են այդ առումով ISRD-3 ուսումնասիրության արդյունքները. հետազոտության մեջ ընդգրկված երկրներում հարցվածների մեջ մեր երեխաները իրենց համարել են ամենաերջանիկներից մե-

⁶ Տե՛ս «Հայաստանում ավելացել է միայնակ կանանց թիվը». <https://www.aysor.am/am/news/2014/05/14/aharon-adibekyan/789666>, 14.05.2014, 13.45:

⁷ Տե՛ս **Ա. Գաբուզյան, Ա. Մարգարյան, Ս. Առաքելյան** և ուրիշներ, Անչափահասների հանցավորության դեմ պայքարի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Եր., 2010, էջ 27, **Таилова А. Г.** Дисфункциональность семьи как фактор совершения преступления несовершеннолетними // «Современные тенденции развития науки и технологий», 2015, № 7-6, էջ 115-117:

կր. ՀՀ երեխաների 94, Կոստվոյում՝ 95.5, Շվեյցարիայում՝ 94.2, իսկ Սերբիայում՝ 86.3 %-ն են իրենց երջանիկ համարել: Միաժամանակ, վեր է հանվել մի օրինաչափություն՝ իրենց երջանիկ համարող երեխաները նման ընկալում չունեցողների համեմատ ավելի քիչ են դրսևորել շեղվող (ՀՀ-ում՝ 1.3 անգամ) կամ բռնի վարքագիծ (ՀՀ-ում՝ 2 անգամ) կամ սեփականության դեմ ուղղված ոտնձգություն (ՀՀ-ում՝ 3 անգամ) կատարել:

Թերևս երեխաների և ծնողների միջև հուզական ջերմ հարաբերություններն են, որ երեխաների մեջ ձևավորում են երջանկության նման ընկալում՝ դրանով իսկ նրանց նկատմամբ նվազեցնելով հասարակությունում առկա բազմաթիվ գործոնների, այդ թվում՝ սոցիալ-տնտեսական ծանր վիճակի բացասական ազդեցությունը: Ասվածի վկայությունն է այն, որ ISRD-3 ուսումնասիրության շրջանակներում ՀՀ-ում հարցված երեխաների 96, Բոսնիա-Հերցեգովինայում՝ 92.1, Կոստվոյում՝ 94.6, Շվեյցարիայում՝ 91.8, Մակեդոնիայում՝ 87.7, Սերբիայում՝ 85.6, Ուկրաինայում՝ 89.7 %-ը նշել են, որ իրենց ընտանիքները մյուսների համեմատ սոցիալ-տնտեսական ավելի լավ վիճակում են: Համադրելով այս տվյալները երեխաների՝ իրենց երջանիկ համարելու տվյալների հետ, կտեսնենք, որ իրենց ընտանիքների սոցիալ-տնտեսական վիճակը մյուսների համեմատ ավելի լավ գնահատելու ցուցանիշները ամենաբարձրն են այն երկրների երեխաների շրջանում, ովքեր իրենց ավելի երջանիկ են համարել:

Կարելի էր ենթադրել, որ իրականում այդ երեխաները, իրոք, սոցիալ-տնտեսական ավելի լավ վիճակում են, ինչն էլ նրանց մեջ ձևավորում է երջանկության զգացում, սակայն այդ ենթադրությունը չի հաստատվում, երբ համադրում ենք հետազոտության մեջ ընդգրկված երկրներում աղքատության և գործազրկության տվյալները⁸:

Աղյուսակ 1

Աղքատությունը և գործազրկությունը ISRD-3 հետազոտության մեջ ընդգրկված մի շարք երկրներում (2014 թ.)

	աղքատ բնակչություն	գործազրկություն
ՀՀ	35.8 %	17.3 %
Բոսնիա-Հերցեգովինա	18.6 %	44.3 %
Կոստվո	30 %	30.9 %
Մակեդոնիա	30.4 %	28.6 %
Սերբիա	9.2 %	19.7 %
Ուկրաինա	24.1 %	8 %
Շվեյցարիա	7.6 %	3.2 %

⁸ <https://www.cia.gov/library/publications/the-world-factbook/fields/2046.html>

Այս տվյալներն առավել քան հետաքրքիր են. թեև ՀՀ-ում է գրանցվել աղքատության ամենաբարձր ցուցանիշը, իսկ Կոստվոյում դրան գումարվել է նաև գործազրկության բարձր մակարդակը, սակայն այս երկրների երեխաներն են իրենց առավել երջանիկ համարել: ՀՀ-ում որպես նման վիճակի բացատրություն կարող է լինել այն, որ ծնողները, ընտանիքի չափահաս անդամներն անում են ամեն հնարավորն ու անհնարինը, որպեսզի երեխաները չզգան ընտանիքի սոցիալական ծանր վիճակը, ի պատասխան՝ երեխաները ձգտում են ցույց տալ, որ իրենց ծնողները այդ առումով հաջողության են հասել, և իրենք ուրիշներին վատ վիճակում չեն:

Կրիմինալոգիայում և հոգեբանության մեջ⁹ նշվում է, որ աղքատությունը, նյութական վատ պայմանները, գործազրկությունը ազդում են երեխայի ասոցիալ վարքի ձևավորման վրա, սակայն դա պայմանավորված է ոչ թե նյութական միջոցների քանակով, այլ ընտանիքի բարոյահոգեբանական մթնոլորտում տեղ գտնող փոփոխություններով. ընտանիքում ձևավորվում է լարված մթնոլորտ, ծնողների մոտ՝ «անլիարժեքության» բարդույթ, ընկճվածություն, օտարվածություն, ֆրուստրացիա, ագրեսիվություն, որոնք էլ անդրադառնում են երեխաների վրա երբեմն՝ բռնության ձևով, փոխվում են արժեքային կողմնորոշումները, չեն ապահովվում երեխաների ֆիզիկական և հոգևոր բնականոն զարգացումը, կրթությունը: Աղքատությունը հաղթահարելու համար ծնողները մեկնում են արտագնա աշխատանքի կամ մի քանի տեղ աշխատում, ուստի թուլանում է երեխայի նկատմամբ հսկողությունը, ինչն էլ բացասաբար է անդրադառնում երեխայի անձի ձևավորման վրա և նպաստում նրա շեղվող կամ հանցավոր վարքագծին:

ՀՀ-ում գործազրկության ազդեցությունը երեխայի ասոցիալ վարքի ձևավորման առումով երկակի է. մի կողմից՝ գործազուրկ ծնողները, հատկապես՝ մայրերը, ավելի շատ ազատ ժամանակ, հետևաբար և հնարավորություն ունեն զբաղվելու երեխայի դաստիարակությամբ, նրա կարիքների գնահատմամբ, ինչն էլ նաև ավելի լավ հսկողություն իրականացնելու, մյուս կողմից՝ գործազրկությունը ծնողի մեջ առաջացնում է արդեն իսկ վերը նշված բարոյահոգեբանական խնդիրները, որոնցից անմասն չի մնում նաև երեխան:

Մեր ուսումնասիրության համաձայն՝ ծնողի՝ հոր կամ մոր գոր-

⁹ St' u **Аствацатуров С.** Безработные: проблемы и решения // «Меняющееся общество». Ер., 2001, № 1-2, էջ 16, **Реан А. А.** Семья: агрессия и виктимность несовершеннолетних // «Вестник Московского университета МВД России», 2014, № 12, էջ 305, **Реан А. А.** Агрессия и виктимность в контексте семейной социализации // «Психопедагогика в правоохранительных органах», 2016, № 4, էջ 35:

ծագրկությունը էապես չի ազդում ՀՀ-ում երեխաների կողմից շեղվող վարքագիծ դրսևորելու, այսինքն՝ գրաֆիտի, վանդալիզմ, սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ կատարելու և խմբային կռիվների մասնակցելու վրա, սակայն վիճակը վատթարանում է, երբ խոսքը վերաբերում է երեխայի կողմից բռնությամբ զուգորդված ոտնձգություններ կատարելուն. գործազուրկ հայր ունեցող ՀՀ երեխաները 2.8, գործազուրկ մայր ունեցողները 1.5 անգամ ավելի հաճախ են բռնի վարքագիծ դրսևորում, անձի առողջությանը վնաս պատճառում:

Գործազուրկ ծնողների, հասկապես գործազուրկ հոր պարագայում երեխայի կողմից բռնի վարքագծի առավել հաճախ կիրառումը, ամենայն հավանականությամբ, պայմանավորված է ընտանեկան մթնոլորտի ազդեցությամբ երեխայի մեջ ձևավորված ֆրուստրացիայից ազատվելու ձգտումով: Այստեղ արդեն առաջնային նշանակություն է ձեռք բերում երեխայի կողմից հակասությունները, խնդիրները հաղթահարելու տարբերակներին տիրապետելու, դրանց ընտրության հարցը: Խնդիրների հաղթահարման կառուցողական տարբերակներին երեխաներից շատերի՝ իրենց տարիքային առանձնահատկություններով, կենսափորձով պայմանավորված անիրազեկությունը հանգեցնում է դրանց հաղթահարման ապակառուցողական՝ դեստրուկտիվ տարբերակի կիրառման¹⁰:

Անչափահասների շեղվող կամ հանցավոր վարքագծի դրսևորման վրա ազդեցություն ունեն ոչ միայն ընտանիքի՝ սոցիալ-տնտեսական վատ վիճակը, այլև ընդհակառակը՝ ապահովվածության և սպառման բարձր մակարդակը:

Մասնավորապես, 2006 թ. մեր կողմից իրականացված ուսումնասիրության շրջանակներում հարցվողները պայմանականորեն բաժանվեցին երկու խմբի՝ սպառման բարձր և ցածր մակարդակ ունեցող ընտանիքներից սերողների. առաջին խմբում ներառվեցին նրանք, ովքեր պնդում էին, որ իրենք առանձին սենյակ, բջջային հեռախոս, համակարգիչ ունեն, իսկ ընտանիքը՝ ավտոմեքենա, մինչդեռ երկրորդ խմբում՝ այն երեխաները, ովքեր բացասական պատասխան էին տվել առաջադրված 4 տարբերակներից թեկուզ մեկին: Վերլուծությամբ ի հայտ եկավ հասարակության արժեքային համակարգի ներկայիս վիճակը արտացոլող պատկեր. սպառման բարձր մակարդակ ունեցող ընտանիքների երեխաները մյուսների համեմատ ավելի հաճախ են շեղվող վարքագիծ դրսևորել, իսկ հալածանքի ենթարկվել են առավել անապահով ընտանիքների երեխաները:

¹⁰ Sté u **Реш А. А.**, նշվ. աշխ., էջ 36, **Keltikangas-Jarvinen L., Kangas P.** Problem-solving strategies in aggressive and nonaggressive children // Aggressive Behaviour, 1988, № 4, էջ 255–264:

Աղյուսակ 2

Երեխաների շեղվող վարքագիծը՝ ըստ սպառման բարձր կամ ցածր մակարդակի (ISR-2)

	սպառման բարձր մակարդակ	սպառման ցածր մակարդակ
խմբային կոնվների է մասնակցել	27.4	21.6
զենք է կրել	10.3	6.8
ուրիշի առողջությանը վնաս է պատճառել	2.2	2
կողոպուտ, ավազակություն, շորթում է կատարել	1	0.2
խանութից գողություն է կատարել	0.7	0.5
հակերություն է իրականացրել	5.3	3.4

Աղյուսակ 3

Երեխաների վիկտիմիզացիան՝ ըստ սպառման բարձր կամ ցածր մակարդակի (ISR-2)

	սպառման բարձր մակարդակ	սպառման ցածր մակարդակ
իր առողջությանը վնաս է պատճառվել	5.8	5.5
շորթման է ենթարկվել	0.5	2.6
իրենից գողություն է կատարվել	12	8.6
հալածանքի է ենթարկվել	1.4	2.3

Առավել ապահովված ընտանիքների երեխաները 1.3 անգամ ավելի հաճախ են ներգրավվել խմբային կոնվներին, 1.5 անգամ՝ զենք կրել, 5 անգամ՝ շորթում կամ կողոպուտ կատարել, որոնց բացատրությունը, թերևս, հոգեբանական մակարդակում անպատժելիության զգացումն է, վստահությունը, որ ընտանիքի նյութական լավ վիճակը հնարավորություն կտա խուսափելու պատասխանատվությունից:

Բացի այդ, ապահովվածության բարձր մակարդակ ունեցող ընտանիքներում առկա են նաև այլ խնդիրներ. որպես կանոն, նման ընտանիքներից սերող երեխաների նկատմամբ, ծնողի կամ ծնողների ավելի մեծ զբաղվածության պատճառով, թույլ է ծնողական հսկողությունը, ծնողի կողմից երեխայի հանդեպ ջերմությունը հաճախ դրսևորվում է ոչ թե նրա կյանքով հետաքրքրվելով, այլ նրան նվերներ տալով:

Երեխայի անձի ձևավորման գործընթացում ընտանիքի ազդեցությո-

յունը, առաջին հերթին, պայմանավորված է ընտանիքում երեխայի հետ հուզական կապի առկայության գործոնով: Բազմաթիվ կրիմինալոգիական ուսումնասիրություններ¹¹ վկայում են, որ ծնողների հետ կապվածության բարձր աստիճանը հարաբերակցվում է երեխաների շեղվող վարքագծի դրսևորման ավելի ցածր հավանականության հետ:

Երեխաների և ծնողների միջև հուզական կապի առկայությունը որոշելու նպատակով անհրաժեշտ է ուշադրություն դարձնել, թե ինչ հարաբերություններ՝ 3.3 և 9.1 %-ը:

Ծնողների աջակցությունը ստանալը ունեն միմյանց հետ, որքան ժամանակ են միասին անցկացնում, որքանով են հուզական աջակցություն ապահովում, և որքանով է երեխաների համար կարևոր ծնողների կարծիքը: Եթե այս ոլորտներից գոնե երեքում երեխայի մեջ դրական դիրքորոշում կա, ապա պետք է փաստել, որ գործ ունենք հուզական ուժեղ կապի առկայության հետ:

Մեր ուսումնասիրությունները վկայում են, որ հասարակությունում տեղ գտած ճգնաժամային երևույթներն արդեն անդրադարձել են հայ ընտանիքների վրա. տեղի է ունեցել ծնողների և երեխաների միջև հուզական կապի թուլացում. 2006 թ. հարցված երեխաների 1.1 %-ն էր նշել հոր հետ ունեցած վատ հարաբերությունների մասին, մինչդեռ 2014 թ. արդեն 2.4 %-ը, մոր հետ ունեցած վատ հարաբերությունների մասին հայտնել էր 2006 թ. հարցվածների 0.7, իսկ 2014 թ.-ին՝ 1.1 %-ը:

Սակայն նույնիսկ այս պարագայում, ծնողների և երեխաների հուզական կապը ՀՀ-ում ավելի ուժեղ է, քան եվրոպական երկրներից շատերում: Մասնավորապես, ISRD-3 հետազոտության արդյունքների համաձայն՝ ՀՀ-ում, ինչպես նաև Բոսնիա-Հերցեգովինայում, թույլ հուզական կապ է գրանցվել հարցված երեխաների 3.7, Կոսովոյում՝ 4.3, Մակեդոնիայում՝ 4.9, Սերբիայում 14.6, Ուկրաինայում 8.5 և Շվեյցարիայում՝ 12.8 %-ի մոտ:

Կատարված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ ընտանիքի հետ թույլ հուզական կապ ունեցող երեխաները ավելի քիչ են հակված իրենց խնդիրների մասին պատմել ծնողներին. ընտանիքի հետ ուժեղ հուզական կապ ունեցողների միայն 9.9 %-ն է նշել, որ իր խնդիրների մասին չի տեղեկացնում ծնողներին, թույլ հուզական կապ մատնանշածների՝ 18.2 %-ը: Ծնողների կողմից իրենցով չհետաքրքրվելը հարցվածների շրջանում նշել է համապատասխանաբար 4.4 և 15.2 %-ը, ծնողների կողմից աջակցություն չստանալիս կարևորվում է երեխայի ձևավորման գործընթացում, քանի որ դա մեծ դեր ունի երեխայի համարժեք ինքնագնահատականի ձևավորման առումով: Հոգեբաններ-


¹¹ St' u **Bartol, C., Bartol A.** Juvenile Delinquency and Antisocial Behavior: A Developmental Perspective, 2009, 3rd ed: Pearson Prentice Hall, **Голубев Ю. В.** Девиантное поведение как социальная проблема // «Образование и саморазвитие», 2013, № 2 (36), էջ 178-183, **Антонян Ю. М., Еникеев М. И., Эминов В. Е.** Психология преступника и расследования преступлений. М., 1996, էջ 109, **Антонян Ю. М.** Насилие. Человек. Общество. М., 2001, էջ 3:

րի կողմից կատարված ուսումնասիրությունները¹² վկայում են, որ ծնողների հետ ընկերական և փոխվստահության վրա հիմնված հարաբերություններ ունեցող երեխաների 75 %-ի, մինչդեռ խիստ ընդգծված պաշտոնական հարաբերությունների մեջ գտնվողների միայն 25 %-ի մոտ է կայուն և համարժեք ինքնագնահատական ձևավորվում: Հուզական աջակցություն չստացող երեխաները սկսում են փնտրել այնպիսի անձի, ով կարող է իրենց տալ ծնողների կողմից չտրվող սերն ու ջերմությունը, գնահատել իրենց, բարձրացնել իրենց ինքնագնահատականը, ինչը, սակայն, կարող է հանգեցնել նաև երեխաների նկատմամբ հանցավոր վարքագծի դրսևորման կամ հանցավոր վարքագծին ներգրավելուն:

Ծնողների և երեխայի հուզական կապի ու երեխայի կողմից շեղվող, բռնի վարքագծի, սեփականության դեմ ուղղված ոտնձգությունների հավանականության գնահատման նպատակով իրականացված վերլուծությունը ցույց տվեց, որ ընտանիքի հետ թույլ հուզական կապ ունեցող երեխաները գրեթե 2 անգամ ավելի հաճախ են շեղվող վարքագիծ դրսևորել, այն է՝ գրաֆիտի, վանդալիզմ, մանր գողություն կատարել, խմբային կռիվների ներգրավվել, և 1.2 անգամ հաճախ՝ բռնի վարքագիծ դրսևորել: Ընդ որում, այս օրինաչափությունը գրանցվել է նաև մյուս եվրոպական երկրների մեծ մասում:

Գծապատկեր 1

Ընտանեկան հուզական կապերը և շեղվող վարքագիծը՝ ISRD-3



¹² St' u **Абрамова Г. С.** Возрастная психология. М., 2006, էջ 565, **Карабанова О. А.** Дисгармоничность детско-родительских отношений как фактор риска девиантного поведения личности // «Вестник Московского университета МВД России», 2014, № 12, էջ 299, **Соколова В. В.** Влияние семейного воспитания на формирование девиантного поведения детей // «Вестник Челябинского государственного университета». Образование и здравоохранение. 2015, № 1 (3), էջ 102-105:

Առանձին ուշադրության են արժանի ընտանեկան հսկողությանը վերաբերող հիմնախնդիրները: Ծնողական հսկողությունը պետք է դիտարկել երեք կերպ, այն է՝

1. **երեխան ծնողներին տեղեկացնում** է, թե ովքեր են ընկերները, ինչպես է անցկացնում ազատ ժամանակը, ինչի վրա է ծախսում գրպանի գումարը: Ծնողների վերահսկողության այս կտրվածքը թույլ է տալիս գնահատել նաև ծնողների հետ երեխայի հուզական կապի դրսևորման աստիճանը,

2. **ծնողները տեղեկացված** են, թե երեխան որտեղ, ում հետ է, ինչով է զբաղված,

3. **ծնողները վերահսկում** են, այսինքն՝ ստուգում են, թե երեխան որքանով է պատրաստվում դասերին, ինչ ֆիլմեր է նայում կամ գրքեր կարդում, պատվիրում են որոշակի ժամից չուշանալ, իսկ ուշանալու դեպքում՝ նախապես տեղեկացնել:

Իրականացված ուսումնասիրությունը վկայում է նաև, որ ՀՀ-ում, մյուս երկրների համեմատ (բացառությամբ Կոսովոյի), մեծ է այն երեխաների մասնաբաժինը (88.3 %), որոնք ծնողներին տեղեկացնում են, թե ում հետ են ժամանակ անցկացրել (Կոսովոյում այդ ցուցանիշը կազմել է 92.1 %, Բոսնիա-Հերցեգովինայում՝ 86.8 %, Մակեդոնիայում՝ 83.7 %, Սերբիայում՝ 75.2 %, Ուկրաինայում՝ 76.9 %, Շվեյցարիայում՝ 70.4 %):

Սակայն նշված դրական տարբերությունը վերանում է, երբ խոսքը վերաբերում է իրենց ժամանցի բովանդակության կամ ծախսերի ուղղվածության մասին ծնողներին տեղեկացնելուն: Մասնավորապես, հայ երեխաների 15.7 %-ը նշել է, որ ծնողներին երբեք չի տեղեկացնում, թե գումարը ինչի վրա է ծախսում (պատասխանի այդ տարբերակն է ընտրվել Կոսովոյում հարցվածների 3.9 %, Բոսնիա-Հերցեգովինայում՝ 8 %, Մակեդոնիայում՝ 10.4 %, Սերբիայում՝ 15.7 %, Ուկրաինայում՝ 15.3 %, Շվեյցարիայում՝ 16.5 %-ի կողմից): Իհարկե կարելի է ենթադրել, որ երեխաները չեն ցանկանում ծնողներին տեղեկացնել, թե գումարն ինչի վրա են ծախսում, քանի որ իրենց բավականաչափ հասուն և ինքնուրույն են համարում և այդ առումով՝ ծնողների հավանության, աջակցության կարիքը չեն զգում, սակայն շատ ավելի մեծ է հավանականությունը, որ ծնողներից նման տեղեկություն թաքցնում են նրանք, ովքեր ծնողների կողմից հավանության չարժանացող ապրանք են գնում կամ ծառայություններից օգտվում: Թերևս նույն տրամաբանությամբ է բացատրվում նաև երեխաների կողմից իրենց զբաղմունքի բովանդակությունը ծնողներից թաքցնելը: ՀՀ-ում հարցված անչափահասների 16.4 %, Բոսնիա-Հերցեգովինայում՝ 12.5 %, Կոսովոյում՝ 4.9 %, Մակեդոնիայում՝ 13.1 %, Սերբիայում՝ 21.7 %, Ուկրաինայում՝ 12.5 %, Շվեյցարիայում՝ 13.2 %-ը նշել են, որ ծնողներին երբեք չեն տեղեկացնում, թե ազատ ժամանակ ինչով են զբաղվում:

Պարզելու համար, թե երեխայի կողմից իր առօրյայի մասին ծնողներին տեղեկացնելը որքանով է ազդում նրա շեղվող վարքագծի դրսևորման վրա, ներկայացված երեք հարցերը միավորվեցին և որոշվեց երեխայի և ծնողների միջև կապի աստիճանը. եթե երեխան նշված հարցերից երկուսին տվել էր բացասական պատասխան, ապա դա դիտարկվեց որպես թույլ կապ:

Կատարված վերլուծությունը ցույց տվեց, որ ինչպես մյուս եվրոպական երկրներում, ՀՀ-ում ևս երեխայի կողմից ծնողներին իր առօրյայի մասին տեղեկացնելու առումով թույլ կապը բարձրացնում է նրա՝ ինչպես շեղվող (2.5 անգամ), բռնի վարքագծի (4 անգամ), այնպես էլ սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ կատարելու հավանականությունը (2.4 անգամ):

Ծնողների հսկողության երկրորդ կտրվածքը վերաբերում է երեխայի կյանքի մասին տեղեկացվածությանը: ISRD-3 ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ ՀՀ ծնողները հիմնականում տեղեկացված են, թե տանից բացակայելիս երեխան որտեղ է գտնվում և ում հետ: Այս առումով հետազոտության մեջ ընդգրկված երկրների շրջանակում ՀՀ-ում, ինչպես նաև Կոստվոյում, գրանցվել են ամենաուժեղ հսկողության ցուցանիշները: Մասնավորապես, ՀՀ-ում հարցված երեխաների 93.1 %, Կոստվոյում՝ 95.4 %, Մակեդոնիայում և Բոսնիա-Հերցեգովինայում՝ 91 %, Ուկրաինայում՝ 89.8 %, Սերբիայում՝ 86.7 % և Շվեյցարիայում՝ 85.8 %-ն են նշել, որ ծնողները միշտ տեղյակ են իրենց գտնվելու վայրի մասին: Համանման տվյալներ են ստացվել նաև երեխայի զբաղմունքի մասին տեղեկացվածության առումով. ՀՀ-ում, Բոսնիա-Հերցեգովինայում հարցվածների 90.4 %, Կոստվոյում՝ 89 %, Մակեդոնիայում՝ 80.8 %, Ուկրաինայում՝ 80.2 %, Սերբիայում՝ 72.4 % և Շվեյցարիայում՝ 71.4 %-ն են նշել, որ ծնողները միշտ տեղյակ են, թե իրենք ինչով են զբաղված:

Սակայն երեխայի ինքնուրույնության պահանջմունքը, ծնողների հսկողությունից ազատ լինելու, անձնական տարածքի անձեռնմխելիությունը ապահովելու ձգտումը իրենց արտացոլումն են գտնում երեխայի շփման անձնական շրջանակը ձևավորելու գործընթացում¹³: Պատահական չէ, որ մեր ուսումնասիրությունների համաձայն՝ ծնողական հսկողությունը նույն ազդեցությունը չի կարողանում ունենալ, երբ առնչվում ենք ընկերների այն շրջանակին, որոնց հետ երեխան տանից դուրս գտնվելիս անցկացնում է իր ժամանակը: Ի տարբերություն նախորդ ցուցանիշների՝ ՀՀ-ում ծնողական հսկողության այս տարբերակը ISRD-3 ուսումնասիրության մեջ ընդգրկված այլ երկրների համեմատ առավելագույնը չէ. թեև ծնողները տեղյակ են, թե երեխաները որտեղ են, ինչով են զբաղված, սակայն ոչ միշտ են տեղեկաց-

¹³ Տե՛ս Կарабанова О. А., նշվ. աշխ., էջ 295-299:

ված, թե կոնկրետ ում հետ են նրանք այդ պահին: Մասնավորապես, ՀՀ-ում հարցվածների 87.5 %, Բոսնիա-Հերցեգովինայում՝ 88.8 %, Կոսովոյում՝ 91.6 %, Մակեդոնիայում՝ 87.8 %, Ուկրաինայում՝ 85.1 %, Սերբիայում՝ 83.4 % և Շվեյցարիայում՝ 81.9 %-ն են նշել, որ ծնողները միշտ տեղյակ են, թե տանից դուրս գտնվելիս իրենք ում հետ են ժամանակ անցկացնում:

Ինչպես և ծնողական հսկողության նախորդ տարբերակում, երեխաներին առաջադրված հարցերը միավորվեցին, և ըստ այդմ որոշվեցին թույլ և ուժեղ հսկողության տարբերակները, որոնք էլ վերլուծության ենթարկվեցին՝ դրանց և երեխաների շեղվող վարքագծի միջև կապը վեր հանելու նպատակով: Հսկողությունը համարվեց թույլ, եթե երեխան բացասական դիրքորոշում էր արտահայտել ծնողական հսկողության այս տարբերակի վերաբերյալ առաջադրված չորս հարցերից երեքին:

ISRD-3 ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ հավաստի ուժեղ կապ կա անչափահասի շեղվող, բռնի վարքագծի և նրա մասին ծնողների տեղեկացվածության միջև:

Կատարված վերլուծությունը ցույց տվեց, որ հսկողության քննարկվող տարբերակի թույլ դրսևորման պարագայում ՀՀ-ում երեխաները ուժեղ հսկողության խմբի ներկայացուցիչների համեմատ 2.3 անգամ ավելի հաճախ են գրաֆիտի, վանդալիզմ, մանր գողություն կատարել, ներգրավվել խմբային կռիվների մեջ 3.1 անգամ ավելի՝ բռնություն գործադրել, անձի առողջությանը վնաս պատճառել, 1.6 անգամ՝ սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ կատարել:

Առավել հետաքրքիր փոփոխություններ, սակայն, ՀՀ-ում տեղի են ունեցել ծնողների հսկողության երրորդ դրսևորման պարագայում, որը ավելի շատ ենթադրում է երեխաների վերաբերյալ ոչ թե մակերեսային տեղեկատվության առկայություն, այլ երեխայի կյանքով, խնդիրներով իրական հետաքրքրվածություն, նրան աջակցության տրամադրում, առօրյային ակտիվ մասնակցություն:

Թեև ISRD-3 ուսումնասիրության շրջանակներում ՀՀ-ում հարցված երեխաների 93.1 %-ն էր նշել, որ ծնողները տեղյակ են, թե իրենք որտեղ են գտնվում, իսկ 90.4 %-ը՝ թե ինչով են զբաղված, սակայն միայն 86 %-ն էր նշել, որ ծնողները հետաքրքրվում են, թե տանից դուրս գտնվելիս երեխան իրականում ինչով է զբաղվել, որտեղ է եղել և ում հետ: Ավելին, հարցվածների 9.1 %-ը նշել էր, որ ծնողները երբեք էլ այդ առումով իրապես չեն հետաքրքրվում:

Փաստորեն ծնողները թեև տեղեկացված են լինում, թե երեխան որտեղ է և ինչով է զբաղված, սակայն իրականում, օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոններով պայմանավորված, չեն փորձում երեխայի՝ տանից դուրս կյանքին իրապես տեղեկանալ, հասկանալ նրա հետաքրքրությունները, ձգտումներն ու խնդիրները, աջակցել նրան կյանքում առաջ

գնալու կամ առկա խնդիրները հաղթահարելու գործում:

Մինչդեռ ծնողների երեխայի կյանքին և հատկապես ընկերական միջավայրին ծանոթ լինելը էապես նվազեցնում է երեխայի շեղվող վարքագծի դրսևորման և վիկտիմիզացիայի հավանականությունը: Ընդ որում, այդ կտրվածքով կարևոր դերակատարություն ունի նաև ծնողների կողմից երեխայի տանից դուրս գտնվելու ժամանակի սահմանափակումը:

ISRD-3 ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ ծնողական հսկողության այս տարբերակով ևս նկատվում է որոշակի հետընթաց. 2006 թ. անցկացված ISRD-2 հետազոտության շրջանակներում ՀՀ-ում հարցված անչափահասների 90.4 %-ն էր նշել, որ տանից դուրս գալիս ծնողները սահմանում են այն ժամը, երբ ինքը արդեն պետք է վերադարձած լինի, մինչդեռ ISRD-3-ի ցուցանիշների համաձայն՝ այդ ցուցանիշը նվազել է՝ դառնալով 85.9 %:

Միաժամանակ, ISRD-3 ուսումնասիրության շրջանակներում ՀՀ-ում հարցվածների 90.7 %-ը նշել է, որ սահմանված ժամից ուշանալու դեպքում պետք է այդ մասին նախապես տեղեկացնի ծնողներին:

Մինչդեռ ISRD-2 ուսումնասիրության արդյունքները վկայում են, որ հենց այս ցուցանիշներն են, որ էական զսպիչ ներգործություն ունեն երեխաների կողմից հանցավոր վարքագիծ դրսևորելու վրա:

Աղյուսակ 4

Ծնողների հետաքրքրվածությունը երեխայի կյանքով, տանից դուրս գտնվելու ժամանակի սահմանափակումը և երեխաների շեղվող վարքագիծը ISRD-2

	երեխայի ընկերներին ճանաչելը			տանից դուրս գտնվելու ժամանակը սահմանափակելը		
	միշտ	երբեք		այո	ոչ	
խմբային կռիվներին մասնակցել	11.2 %	41.8 %	***	23.8 %	32.0 %	*
զենք կրել	3.2 %	20.9 %	***	7.1 %	14.1 %	**
առողջությանը վնաս պատճառել	1.0 %	8.9 %	***	1.9 %	1.6 %	Ns

Ներկայացված տվյալները վկայում են, որ հատկապես երեխայի ընկերներին իմանալը թե՛ կրիմինոգեն, թե՛ վիկտիմոգեն առումով էական կանխարգելիչ նշանակություն ունի. այն երեխաները, որոնց ծնողները մշտապես տեղյակ են, թե երեխան ում հետ է շփվում, 3.7 անգամ

ավելի քիչ են հաղորդել խմբի կազմում կռիվների մասնակցելու, 6.5 անգամ զենք կրելու, 8.9 անգամ ուրիշի առողջությանը վնաս պատճառելու մասին:

Հետևաբար, ծնողական հսկողության տեսանկյունից առավել մեծ ուշադրություն պետք է դարձվի ոչ թե ձևական, խիստ, պահանջկոտ ծնողի կերպարին համահունչ վարքագծին, այլ երեխայի կյանքով իրական հետաքրքրվածություն ունենալուն:

Ծնողական հսկողություն իրականացնելու տեսանկյունից առանձին հետաքրքրություն է ներկայացնում այն, թե որքանով են ծնողները հետևում երեխայի պաշտպանությանը անձի հոգեբանական ձևավորման վրա կործանարար ազդեցություն ունեցող այնպիսի երևույթներից, ինչպիսիք են պոռնոգրաֆիան, բռնությունը:

Թեև ՀՀ քրեական օրենսգրքը պատասխանատվություն է սահմանում երեխային պոռնկագրական բնույթի նյութեր կամ առարկաներ պատրաստելու հետ կապված գործողություններ կատարելուն ներգրավելու, հոդված 263-ի 2-րդ մասը՝ համակարգչային համակարգի միջոցով մանկական պոռնոգրաֆիա ներկայացնելու կամ համակարգչային համակարգում կամ համակարգչային տվյալների պահպանման համակարգում մանկական պոռնոգրաֆիա պահպանելու, իսկ վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի հոդված 158-ը՝ երեխային սարսափ կամ պոռնոգրաֆիա բովանդակող գրականություն կամ տեսաերկեր վաճառելու կամ վաճառելուն նրանց ներգրավելու համար, սակայն թե՛ հեռուստատեսությունը, թե՛ կայքերը հեղեղված են բռնության տեսարաններ պարունակող նյութերով, իսկ համացանցը՝ պոռնոգրաֆիայով: Երեխայի համար որևէ դժվարություն չի ներկայացնում նաև նույնաբովանդակ նյութերը ձեռք բերելը¹⁴. ավելին, ներկայումս շուկայում, ինչպես նաև համացանցում, առկա են պոռնոգրաֆիկ բնույթի կամ բռնությունը խթանող համակարգչային խաղեր:

Այսօր համացանցը վերահսկողության բացակայության պատճառով իրական վտանգ է ներկայացնում երեխայի համար թե՛ ինքնասպանություն քարոզելու, թե՛ աղանդների կամ տարաբնույթ ենթամշակույթների, թե՛ թմրանյութերի գործածմանը կամ այլ հակահրավական, հակաբարոյական արարքներին ներգրավելու, թե՛ ահաբեկչական խմբավորումների կողմից հավաքագրվելու առումով: Ուստի անհրաժեշտ է, որ ծնողները գոնե տանը երեխաների համար արգելափակեն նման կայքերը, իսկ օրենսդրությամբ պատասխանատվություն սահ-

¹⁴ St' u Галимова А. А. Влияние сети интернет и иных средств массовой информации на преступность несовершеннолетних // «Современность в творчестве талантливой молодежи». Сборник материалов научно-практической конференции молодых ученых. 2016, էջ 36-40, **Волошин И. А., Сударикова Т. Е.** Влияние СМИ на формирование криминогенных установок у несовершеннолетних в возрасте от 14 до 18 лет // «Ученые записки Крымского федерального университета имени В.И. Вернадского». Юридические науки. 2016, Т. 2, № 4 (68), էջ 49-54:

մանվի ինտերնետ ակումբներում անչափահաս հաճախորդների համար նման կայքերը չարգելափակելու համար:

Հոգեբանական, կրիմինալոգիական ուսումնասիրությունները վկայում են, որ ուրիշի վարքագծի պարբերաբար դիտարկումը, հատկապես եթե այն հաջողություն է ապահովում, նույնիսկ ենթագիտակցական մակարդակում հեշտությամբ ձևավորում է տեսածը կրկնելու ձգտում: ՀՀ-ում 2011-2012 թթ. հոգեբանների խմբի կողմից իրականացված ուսումնասիրության համաձայն՝ հեռուստատեսությամբ երեկոյան ժամերին միայն մեկ սերիալի ընթացքում ցուցադրվել է 130-ից ավելի բռնության տեսարան: Ընդ որում, նման վարքագիծ դրսևորած անձինք այդ սերիալներում գրեթե միշտ հաջողության են հասել ու խուսափել պատասխանատվությունից¹⁵: Մա ուղղակիորեն հակասում է «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի հոդված 22-ի պահանջներին, որի մաս 2-ի համաձայն՝ էրոտիկ բնույթի հեռուստահաղորդումները, սարսափ ու ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերը, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումները, բացառությամբ բաժանորդային հեռարձակման, կարող են եթեր հեռարձակվել ժամը 24.00-ից 06.00 ընկած ժամանակահատվածում:

Ընդ որում, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի հոդված 22-ի պահանջները վերաբերում են ոչ միայն բռնության, սարսափի, այլև «երեխայի մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների» տարածման արգելքին: Այդ առումով առանձին վտանգ է ներկայացնում հեռուստատեսությամբ այնպիսի ֆիլմերի, սերիալների, հաղորդումների տարածումը, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն «գողական աշխարհի ռոմանտիզմ» են տարածում: Մասնավորապես, ֆիլմերում կամ սերիալներում հանցավոր աշխարհի ներկայացուցիչները հաճախ ներկայացվում են հաջողակ, խիզախ, ընկերասեր, արդար, յուրաքանչյուր հարց լուծելու ունակ, իսկ իրավապահ մարմինների ներկայացուցիչները՝ թույլ, կաշառվող, ստորաքարշ, քծնող մարդկանց կերպարով: Մրա հետևանքով հանցավոր աշխարհի ներկայացուցիչները երեխաների համար դառնում են իդեալներ, որոնց փորձում են նմանվել, իսկ իրավապահ մարմինների աշխատակիցների նկատմամբ հակակրանքն ավելի է խորանում: Դրա վկայությունը տարիներ առաջ հայկական հեռուստատեսություններից մեկով հեռարձակվող «Որոգայթ» ֆիլմն էր, որի ցուցադրումից հետո երեխաներից շատերը երագում էին մեծանալ ու նմանվել գլխավոր հերոսին՝ հան-

¹⁵ Се́у Шнайдер Г. Й. Криминология. М., 1994, էջ 311-312, **Ա. Մերոբյան, Ա. Թերզյան, Ե. Ասատրյան**, ԶԼՄ-ների դերը հասարակության ձևավորման գործում, Եր., 2012, էջ 20-22:

ցավոր աշխարհի ներկայացուցիչ Հովոյին:

Հետևաբար, ծնողների կողմից վերահսկողության իրականացումը խիստ կարևորվում է, մինչդեռ իրականացված ISRD-3 ուսումնասիրության տվյալները վկայում են, որ ՀՀ-ում հարցված երեխաների միայն 64.5 %-ի ծնողներն են հետևում, թե երեխան ինչ ֆիլմեր է դիտում:

Պարզելու համար, թե ծնողների վերահսկողությունը (ինչ ֆիլմեր է դիտում, տանից դուրս գտնվելիս ժամանակային սահմանափակում դնելը, իսկ ուշանալու դեպքում՝ տեղեկացնելը, երեխայի ընկերական միջավայրին ծանոթ լինելը) որքանով է անդրադառնում երեխաների՝ շեղվող, բռնի վարքագիծ դրսևորելու կամ սեփականության դեմ ուղղված ոտնձգություններ կատարելու վրա, դրանք վերլուծության ենթարկվեցին. վերահսկողությունը գնահատվեց թույլ, եթե երեխան բացասական պատասխան էր տվել 5 հարցերից 3-ին:

Կատարված ուսումնասիրությունը վեր հանեց հավաստի կոռելյացիա ծնողների վերահսկողության պակասի և երեխայի կողմից շեղվող վարքագծի դրսևորման միջև: Մասնավորապես, ծնողական թույլ վերահսկողության ներքո գտնվող երեխաները 2 անգամ ավելի հաճախ էին շեղվող վարքագիծ դրսևորել կամ բռնություն գործադրել և 7.5 անգամ ավելի սեփականության դեմ ուղղված հանցանք կատարել:

Երեխայի անձի ձևավորման վրա ընտանեկան ազդեցությունը գնահատելիս կարևորագույն հարցերից մեկը ծնողների դաստիարակության մեթոդն է: Ինչպես արդեն նշվել է, ՀՀ-ում շեղվող վարքագիծ առավելապես դրսևորվել է լրիվ, արտաքուստ լիարժեք համարվող ընտանիքներում մեծացող երեխաների կողմից: Ընդ որում, որպես նման վիճակի բացատրություն, մենք ավելի հակված ենք այն տեսակետին, որ խնդիրը դաստիարակության ոլորտում է, երբ ծնողների, տատիկների ու պապիկների կողմից երեխայի նկատմամբ չափից դուրս ուշադրությունը, նրան բոլոր տեսակի կենցաղային պարտականություններից ազատելը¹⁶ երեխայի մեջ ձևավորում են ամենաթողության և անպատժելիության պատկերացում:

Երեխայի դաստիարակությունը վեհ, բայց նաև խիստ պարտավորեցնող առաքելություն է, որը ենթադրում է դրան նախապատրաստություն, մանկավարժական, հոգեբանական գիտելիքների ու հմտությունների ձեռքբերում: Մինչդեռ ՀՀ-ում, ի տարբերություն արևմտաեվրոպական բազմաթիվ երկրների, ծնողների համար նման դասընթացներ նախատեսված չեն: Հետևաբար, ծնողները երեխաներին դաստիարակում են կամ իրենց ծնողների օրինակով, վերջիններիս խորհուրդներով ու ցուցումներով, կամ գործում են «փորձերի ու սխալների» մեթոդով՝ մոռանալով, որ փորձարկվողը երեխա է, և իրենց յուրաքանչ-

¹⁶ Տե՛ս **Ковтуненко Л. В.**, նշվ. աշխ., էջ 137-143, «Юридическая психология: учебник». М., 2003:

յուր սխալ կարող է կործանարար լինել նրա համար:

Ամենալուրջ խնդիրը, որն այսօր առկա է դաստիարակման ոլորտում, ծնողների և երեխաների կողմից ընդունելի համարվող արժեքային տարբեր կողմնորոշումներն են¹⁷: Այսօրվա դեռահասներից շատերի ծնողները դաստիարակություն են ստացել Խորհրդային Միության ժամանակ ընդունելի համարվող արժեքային համակարգով: ԽՍՀՄ-ի փլուզումից հետո բախվելով նոր իրականությանը, ի հայտ եկած նոր արժեքներին, որոնցից շատերն իրենց համար պարզապես ընդունելի չեն, նրանք հայտնվեցին երկրնտրանքի առջև. կա՛մ երեխաներին դաստիարակել մի արժեքային համակարգով, որն իրենց համար ընդունելի չէ, սակայն երեխաներին թույլ կտա գոյատևել և առաջ շարժվել ձևավորված նոր հասարակական հարաբերություններում, կա՛մ երեխաների մեջ սերմանել այն արժեքները, որոնք, իրենց կարծիքով, ավելի ճիշտ են, հիմնավոր: Վերջին դեպքում, սակայն, երեխաների մեջ ձևավորվում է արժեքային անորոշություն. ծնողների կողմից սերմանվող արժեքները, որոնք պետք է օգնեին իրենց զարգանալ, ընդունելի լինել հասարակության կողմից, իրականում ցանկալի արդյունքը չեն տալիս: Ծնողների սերմանածը և իրականությունը հակադրվում են, երեխայի մեջ առաջանում է ներքին կոնֆլիկտ, որն էլ հանգուցալուծում է ստանում առաջադրված հարցերի պատասխանը ինքնուրույն կամ հասակակիցների շրջանում փնտրելով, հաճախ հանգեցնում ծնողների հետ կոնֆլիկտների, նրանց հեղինակազրկման:

Երեխաների շեղվող վարքագծի ձևավորման վրա ազդեցություն ունեցող գործոն է նաև այն, թե ծնողները ինչ դաստիարակության մեթոդներ են կիրառում: Կրիմինալոգիական գրականության մեջ, ինչպես նաև մեր ուսումնասիրությամբ փաստվել է, որ երեխայի նկատմամբ բռնություն, կոպիտ կամ դաժան վերաբերմունք դրսևորելը հանցածին ազդեցություն ունի¹⁸: Առավել հետաքրքրական է, սակայն, թե ՀՀ-ում երեխաների դաստիարակությունը ծնողների կողմից ինչպես է իրականացվում:

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության հրապարակած «Աղքատության պատկերը ՀՀ-ում 2008-2015 թթ.-ին» զեկույցի շրջանակներում ներկայացված են այն մեթոդները, որոնք չափահասները կիրառելի են համարել երեխաների նկատմամբ: Մասնավորապես՝ չափահասների 55.6 %-ը համաձայն է եղել, որ ծնողները որպես դաստիարակչական մեթոդ երեխաներին առաջարկեն խրախուսող կամ շահավետ առաջարկ լավ պահվածքի համար, օրինակ՝ գովասանք, նվերներ, սիրած զբաղմունքի և ժամանցի ապահովում, 73.4 %-ը կարևորել է երեխային իր վարքագծի սխալ լինելը բացատրելը, 27.0 %-ը համաձայնել է, որ ծնող-

¹⁷ Տե՛ս Жигинас Н. В., Зверева Н. А., Гребенникова Е. В. Девиантное поведение подростков как искажение нравственного воспитания // "Вестник Томского государственного педагогического университета", 2014, № 1 (142), էջ 39-44:

¹⁸ Տե՛ս Антоян Ю. М., Еникеев М. И., Эминов В. Е., նշվ. աշխ., էջ 109, Антоян Ю. М., նշվ. աշխ., էջ 3:

ները որպես դաստիարակչական մեթոդ օգտագործեն երեխային արտոնություններից զրկելը, սիրելի զբաղմունքով զբաղվելը արգելելը կամ չթույլատրեն տնից դուրս գալ: Հարցվածների 17.8 %-ի կարծիքով ծնողները կարող են բղավել, ճշալ կամ հանդիմանել երեխային, անվանել հիմար, ծուլիկ/անբան կամ այլ անվանանքներ օգտագործել, իսկ 5.2 %-ը համաձայնել է, որ ծնողները կարող են ապտակել կամ հարվածել երեխային, այդ թվում՝ ձեռքով, գոտիով, փայտով կամ այլ իրով¹⁹:

Ներկայացված պատասխանները վկայում են, որ ՀՀ-ում ծնողները պատրաստ են խախտել երեխայի իրավունքները՝ նրա նկատմամբ բռնություն գործադրել, զրկել ազատությունից, ինչպես նաև իրենց վարքագծով երեխայի մեջ հոգևոր արժեքներ սերմանելու փոխարեն ձևավորել շահադիտական, սպառողական հոգեբանություն: Հետևաբար, ՀՀ-ում անհրաժեշտ է ծնողների համար պետական մակարդակով նախատեսել հատուկ դասընթացներ՝ երեխաների դաստիարակման գործընթացում անհրաժեշտ մանկավարժական, հոգեբանական գիտելիքներ տալու, հմտություններ ու կարողություններ ձևավորելու նպատակով:

Կատարված ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել.

1. Վերջին տասնամյակում ՀՀ-ում գրանցվել է երեխաների հետ ծնողների հուզական կապի և ընտանեկան հսկողության թուլացում, ինչն էլ իր անմիջական ազդեցությունն է ունեցել երեխաների շեղվող վարքագծի դրսևորման վրա:

2. Թեև այլ երկրների համեմատ ՀՀ-ում ծնողների շրջանում բարձր է երեխաների առօրյայի մասին տեղեկացվածությունը, սակայն այն հաճախ ձևական է. օբյեկտիվ կամ սուբյեկտիվ գործոններով պայմանավորված՝ ծնողները իրապես չեն հետաքրքրվում երեխայի կյանքով, ձեռքբերումներով, ձգտումներով, երեխային չեն աջակցում:

3. ՀՀ-ում երեխայի շեղվող վարքագծի ձևավորման պատճառներից է ինչպես պետության, այնպես էլ ծնողների թույլ հսկողության հետևանքով երեխաների շրջանում ՁԼՄ-ներով, համացանցով կամ երեխաներին հասանելի այլ եղանակներով բռնության, պոռնոգրաֆիայի, հակաբարոյական այլ երևույթների տարածումը:

4. Անչափահասի շեղվող կամ հանցածին վարքագծի ձևավորման վրա էական ազդեցություն ունեն ծնողների երեխային դաստիարակելու գործառնություն, մանկավարժական, հոգեբանական գիտելիքների չտիրապետելը, երեխայի իրավունքները խախտելը:

Բանալի բառեր – *ընտանիք, երեխա, հուզական կապ, ծնողական հսկողություն, շեղվող վարքագիծ, ընտանեկան բարեկեցություն*

¹⁹ Տե՛ս «Աղքատության պատկերը Հայաստանում 2008-2015 թթ.», էջ 102, <http://www.armstat.am/file/article/poverty2016a2.pdf>

АННА МАРГАРЯН – Роль семьи в процессе формирования преступного или девиантного поведения несовершеннолетнего. – При формировании личности несовершеннолетнего огромное влияние на него оказывает семья. Именно в семье происходит первичная социализация детей, у них образуются навыки общения и поведения. Царящая в семье атмосфера, благополучие или неблагополучие, эмоциональная привязанность членов семьи друг к другу, родительский контроль – всё это непосредственно воздействует на законопослушное или девиантное поведение подрастающего поколения.

Не является исключением и армянская семья. В статье рассматриваются вопросы воздействия семейных факторов на девиантное поведение детей в Армении.

Ключевые слова: семья, ребёнок, эмоциональная связь, родительский контроль, девиантное поведение, семейное благополучие

ANNA MARGARYAN – The Role of the Family on the Formation of Juvenile's Criminal or Delinquent Behavior. – Family plays a vital role in the formation of juvenile's personality. Primary socialization of the child, formation of his/her communication and behavioral skills takes place in the family. The family atmosphere, family well-being, emotional attachment of children and parents, parental control directly affect children's law-abiding or deviant behavior.

In this respect, the Armenian family is not an exception. The article discusses the impact of different family factors on the deviant behavior of children in the RA.

Key words: family, child, family attachment, parental control, deviant behavior, family wellbeing

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ
СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ
INFORMATION ABOUT THE AUTHORS

1. **Արթուր Վաղարշյան** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ
Артур Вагаршян – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой теории и истории государства и права ЕГУ
Arthur Vagharshyan – Sc. D. in Legal Sciences, Professor, Head of the Chair of Theory and History of State and Law, YSU
Էլ. փոստ՝ avagharshyan@ysu.am
2. **Անահիտ Մանասյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի դոցենտ, Արդարադատության ակադեմիայի գիտական աշխատանքի գծով պրոռեկտոր,
Анаит Манасян – кандидат юридических наук, доцент кафедры конституционного права ЕГУ, проректор по научной работе Академии юстиции
Anahit Manasyan – PhD, Associate Professor, Chair of Constitutional law, YSU, Vice-Rector of the Academy of Justice for Scientific Affairs
Էլ. փոստ՝ anahit.manasyan@ysu.am
3. **Գրիգոր Բեքմեզյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի դոցենտ
Григор Бекмезян – кандидат юридических наук, доцент кафедры гражданского права ЕГУ
Grigor Bekmezyan – PhD, Associate Professor, Chair of Civil law, YSU
Էլ. փոստ՝ grigorbekmezyan@ysu.am
4. **Սամվել Դիլբանդյան** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ
Самвел Дилбандян – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой уголовного процесса и криминалистики ЕГУ
Samvel Dilbandyan – Sc. D. in Legal Sciences, Professor, Head of the Chair of Criminal Procedure and Criminalistics, YSU
Էլ. փոստ՝ s.dilbandyan@ysu.am
5. **Վահե Ենգիբարյան** – իրավաբանական գիտությունների դոկտոր, ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր
Ваге Енгибарян – доктор юридических наук, профессор кафедры уголовного процесса и криминалистики ЕГУ
Vahe Engibaryan – Sc. D. in Legal Sciences, Professor, Chair of Criminal Procedure and Criminalistics, YSU
Էլ. փոստ՝ yengibaryan@ysu.am
6. **Աննա Մարգարյան** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ
Анна Маргарян – кандидат юридических наук, доцент кафедры уголовного права ЕГУ
Anna Margaryan – PhD, Associate Professor, Chair of Criminal Law, YSU
Էլ. փոստ՝ annamargaryan@ysu.am

ԲՈՎԱՆԱԴԱՎՈՒԹՅՈՒՆ * СОДЕРЖАНИЕ * CONTENTS

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ՈՒ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ТЕОРИЯ И ИСТОРИЯ ГОСУДАРСТВА И ПРАВА THEORY AND HISTORY OF STATE AND LAW

- Արթուր Վաղարշյան* – Սմբատ Սպարապետի և Մխիթար Գոշի դատաստանագրքերի նմանության հարցի իրավագիտական վերլուծություն **3**
- Артур Вагаршян* – Юридический анализ сходства судебных Мхитара Гоша и Смбата Спарапета
- Arthur Vagharshyan* – Legal-Scientific Research on the Similarities of M. Gosh's and S. Goundstable's Codexes

ՍԱՀՄԱՆԱԴԱՎԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО CONSTITUTIONAL LAW

- Անահիտ Մանասյան* – Սահմանադրական դատարանի քաղաքական չեզոքության երաշխավորումը սահմանադրական վեճերի քննության ընթացքում **11**
- Анаит Манасян* – Гарантирование политической нейтральности Конституционного суда при рассмотрении конституционных споров
- Anahit Manasyan* – Guaranteeing Political Neutrality of the Constitutional Court While Considering Constitutional Disputes

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ГРАЖДАНСКОЕ ПРАВО CIVIL LAW

- Գրիգոր Բեքմեջյան* – Ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասների հատուցումը **26**
- Григор Бекмежян* – Компенсация вреда, причиненного вследствие недостатков товара, работы или услуги
- Grigor Bekmezyan* – Compensation for Harm Caused by Defects of Products, Works or Services

ՔՐԵԱԿԱՆ ՂԱՏԱՎԱԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱ УГОЛОВНЫЙ ПРОЦЕСС И КРИМИНАЛИСТИКА CRIMINAL PROCEDURE AND CRIMINALISTICS

- Սամվել Դիլբանդյան* – Անչափահաս տուժողի իրավունակության և գործունակության կարգավորումը քրեական դատավարությունում **36**
- Самвел Дилбандян* – Правоспособность и дееспособность несовершеннолетнего потерпевшего в уголовном процессе
- Samvel Dilbandyan* – Juvenile Victim's Legal Capacity and Capacity for Civil Conduct Criminal Proceedings

<i>Վահե Ենգիբարյան</i> – Քննչական փորձարարության կատարման որոշ առանձնահատկություններ.....	45
<i>Вазе Енгибарян</i> – Некоторые особенности производства следственного эксперимента	
<i>Vahé Engibaryan</i> – Some Peculiarities of Investigatory Experiment Implementation	

**ՎՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ
КРИМИНОЛОГИЯ
CRIMINOLOGY**

<i>Աննա Մարգարյան</i> – Ընտանիքի դերը անչափահասի հանցավոր կամ շեղվող վարքագծի ձևավորման գործընթացում.....	58
<i>Анна Маргарян</i> – Роль семьи в процессе формирования преступного или девиантного поведения несовершеннолетнего	
<i>Anna Margaryan</i> – The Role of the Family on the Formation of Juvenile's Criminal or Delinquent Behavior	
Տեղեկություններ հեղինակների մասին	77
Сведения об авторах	
Information about the Authors	

«Բանբեր Երևանի համալսարանի. Դրավագիտություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Դրավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի:

Журнал "Вестник Ереванского университета. Правоведение" выходит три раза в год. Издаётся с 2010 года. Правонаследник издававшегося в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета".

The "Bulletin of Yerevan University. Jurisprudence" is published thrice a year. It has been published since 2010. It is the successor of "Bulletin of Yerevani University" published in 1967-2009.

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 107
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 107
Address: 1, 107, Alek Manoukian str., Yerevan

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ ephbanber@ysu.am
Վայր՝ ysu.am

Վերստուգող սրբագրիչ՝
Контрольный корректор
Proofreader

Գ. Գրիգորյան
Г. Григорян
G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝
Компьютерная верстка
Computer designer

Մ. Աբգարյան
М. Абгарян
M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 20. 09. 2018:
Տպաքանակ՝ 100: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
Տպագրական 5 մամուլ: